ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՎԵՐՀԱՆՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ.

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հունվար 17-19, 2018թ, Ծաղկաձոր, Հայաստան

USAID FROM THE AMERICAN PEOPLE

MEASURE Evaluation

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՎԵՐՀԱՆՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ.

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Զուլֆիյա Զարիևա, Տեխնիկական խորհրդատու, MEASURE Evaluation/Պալադիում,
Հասմիկ Ղուկասյան, **ՄԳ հարցերով խորհրդատու**, MEASURE Evaluation/Պալադիում
Երկրի հիմնական թիմի անդամներ

MEASURE Evaluation

Հյուսիսային Կարոլինայի համալսարան, Չեփել Հիլ

123 Վեստ Ֆրանկլինի փողոց, Մասնաշենք 330

Չեփել Հիլ, Հյուսիսային Կարոլինա 27516

Հեռախոս. +1-919-445-9350

measure@unc.edu
www.measureevaluation.org

Զեկույցը պատրաստվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցության շնորհիվ՝ MEASURE Evaluation AIDOAA- L-14-00004 համագործակցության համաձայնագրի ներքո:
MEASURE Evaluation նախաձեռնությունն իրականացվում է Հյուսիսային Կարոլինայի համալսարանի Կարոլինայի բնակչության հարցերով կենտրոնի կողմից (Չափել Հիլլ)՝ ICF International-ի, Ջոհն Սնոու Ինք,-ի, Առողջապահության կառավարման գիտությունների, Պալադիում և Տուլանի համալսարանի հետ համատեղ: Փաստաթղթում արտահայտված տեսակետները պարտադիր չէ , որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ Կառավարության տեսակետները. TR-18-268-AR
ISBN: 978-1-64232-046-6

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

«MEASURE Evaluation» ծրագրի Հայաստանի թիմը ցանկանում է երախտիքի խոսք ուղղել Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) տեղահանված և ծնողազուրկ երեխաների հիմնադրամին (DCOF) այս նախաձեռնությանը տրամադրած ֆինանսական աջակցության համար: Ցանկանում ենք նաև շնորհակալություն հայտնել ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիզերին իր մշտական աջակցության համար և ԱՄՆ ՄԶԳ Կայուն զարգացման գրասենյակի ծրագրերի ղեկավարման մասնագետ Անի Մանուկյանին՝ Երկրի հիմնական թիմի աշխատանքներին իր ակտիվ մասնակցության և երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների գնահատման մասնակցային աշխատաժողովի կազմակերպման և իրականացման ընթացքում ցուցաբերած աջակցության համար:

Ցանկանում ենք նաև մեր երախտագիտությունը հայտնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար պրն. Արտեմ Ասատրյանին իր աջակցության և երեխաների պաշտպանության և խնամքի համակարգի բարեփոխումների գնահատման նախաձեռնությունը որպես գերակայություն ընդունելու համար:

Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել Հայաստանի Երկրի հիմնական թիմի (ԵՀԹ) անդամներին նախքան աշխատաժողովը գնահատման գործիքին ծանոթանալու և կարծիք հայտնելու, ինչպես նաև գնահատման աշխատաժողովի նախապատրաստական և իրականացման աշխատանքներին ակտիվ մասնակցելու համար:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ տկն. Սոնա Հարությունյանին՝ ԵՀԹ աշխատանքը և գնահատման աշխատաժողովը արդյունավետ համակարգելու համար:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում նաև այն բազմաթիվ շահագրգիռ անձանց, ովքեր զբաղված լինելով հանդերձ, ժամանակ գտան մասնակցելու գնահատման կազմակերպման և իրականացման աշխատանքներին: Մեր շնորհակալությունն ենք հայտնում ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանի թիմին, «Սեյվ դը Չիլդրըն» կազմակերպության հայաստանյան գրասենյակին, «Վորլդ Վիժըն Հայաստանին», «ՍՕՍ մանկական գյուղեր» միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանի մասնաճյուղին, «Հայաստանի մանուկներ հիմնադրամին», «Մանկական զարգացման հիմնադրամին», «Հայկական Կարիտասին» և «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միությանը» (SOAR):

Ցանկանում ենք նաև շնորհակալություն հայտնել խմբային քննարկումները վարողներին, նշումներ անողներին և թարգմանիչներին՝ աշխատաժողովի ընթացքում ցուցաբերած իրենց աջակցության համար:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում «MEASURE Evaluation» ծրագրի Պալադիումի թիմի ղեկավար Մոլլի Քենոնին՝ գնահատման աշխատաժողովի զեկույցի անգլերեն տարբերակը խմբագրելու համար:

Շնորհակալություն զեկույցի խմբագրման աշխատանքներին մասնակից գործընկերներին՝ ՀՀ ԱՍՀՆ Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ Գեղանուշ Գյունաշյանին, «Հայաստանի մանուկներ հիմնադրամի» Երեխայի և ընտանիքի աջակցության ծրագրերի ղեկավար Լուսինե Սաղումյանին, «Մանկական զարգացման հիմնադրամի» տնօրեն Լուսինե Սիմոնյանին և իրավաբան Էլեն Սահրադյանին:

Վերջում ցանկանում ենք շնորհակալություն հայտնել Հյուսիսային Կարոլինայի Չափել Հիլի համալսարանի «MEASURE Evaluation» ծրագրի գիտելիքի կառավարման թիմին՝ խմբագրական և տպագրական աջակցություն ցուցաբերելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտիքի Խոսք 2
Հապավումներ 6
Համառոտ Ամփոփում 7
Ներածություն 16
Աշխատաժողովի Մեթոդաբանոիթյունը 18
Գնահատման Արդյունքները 21
Ամփոփում 70
Առաջարկություններ 81
Հղումներ 90
Հավելված Ա. Երկրի Հիմնական Թիմի Անդամները 92
Հավելված Բ. Գնահատման Աշխատաժողովի Մասնակիցների Ցանկը 95
Հավելված Գ. Մասնակցային Գնահատման Մեկնարկի Օրակարգ 99
Հավելված Դ. Հայաստանում Երեխաների Խնամքի և Պաշտպանության Համակարգի Բարեփոխումների Ընթացքի Մասնակցային Ինքնագնահատման Աշխատաժողովի Օրակարգը 100
Հավելված Ե. Մասնակցային Քննարկման Խմբերի Կազմը և Քննարկումների Վարման Մեթոդաբանությունը 104
Հավելված Զ. Ամփոփ Գծապատկերներ Ըստ Համակարգի Բաղադրիչների 114

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Գծապատկեր 1. Գնահատման աշխատաժողովի մասնակիցների կազմը, %..... 17

Գծապատկեր 2. Գնահատման շրջանակը.....18

Գծապատկեր 3. Ընդհանուր/խաչվող հարցեր բաժնի գնահատման արդյունքների պատկերը...23

Գծապատկեր 4. Ընտանիքից առանց անհրաժեշտության երեխաների բաժանման կանխարգելում բաժնի գնահատման արդյունքների պատկերը.....29

Գծապատկեր 5. Խնամատարություն բաժնի գնահատման արդյունքների պատկերը..... 38

Գծանկար 6. Խնամք շուրջօրյա հաստատություններում բաժնի գնահատման արդյունքների պատկերը 44

Գծապատկեր 7. Ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպում բաժնի գնահատման արդյունքների պատկերը 49

Գծապատկեր 8. Խնամք բարեկամի կողմից/խնամակալություն բաժնի գնահատման արդյունքների պատկերը 52

Գծապատկեր 9. Այլընտրանքային խնամքի այլ ձևեր բաժնի գնահատման արդյունքների պատկերը 56

Գծապատկեր 10. Որդեգրում բաժնի գնահատման արդյունքների պատկերը 57

Գծապատկեր 11. Ընտանիքների վերամիավորում բաժնի գնահատման արդյունքների պատկերը 62

Գծապատկեր 12. Հաստատություններից երեխաների դուրսբերում բաժնի գնահատման արդյունքների պատկերը 67

Գծապատկեր 13. Համակարգի բաղադրիչներ. Կառավարում և առաջնորդում 114

Գծապատկեր 14. Համակարգի բաղադրիչներ: Ծառայությունների մատուցում.....114

Գծապատկեր 15. Համակարգի բաղադրիչներ: Կադրեր/աշխատակազմ.....115

Գծապատկեր 16. Համակարգի բաղադրիչներ: ՄԼԳ և տեղեկատվական համակարգեր.....115

Գծապատկեր 17. Համակարգի բաղադրիչներ: Սոցիալական նորմեր և գործելաոճ 116

Գծապատկեր 18. Համակարգի բաղադրիչներ: Ֆինանսավորում.....116

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 1. Գնահատման գործիքի՝ գնահատող խմբերին հանձնարարված բաժինները.....20

Աղյուսակ 2. Գնահատման պատասխանների գունային քարտեզ.Կառավարում և առաջնորդում..... 71

Աղյուսակ 3.Գնահատման պատասխանների գունային քարտեզ. Ծառայությունների մատուցում.....73

Աղյուսակ 4. Գնահատման պատասխանների գունային քարտեզ. Կադրեր և աշխատուժ 75

Աղյուսակ 5. Գնահատման պատասխանների գունային քարտեզ. ՄևԳ և տեղեկատվական համակարգեր.....76

Աղյուսակ 6. Գնահատման պատասխանների գունային քարտեզ. սոցիալական նորմեր և գործելաոճ 78

Աղյուսակ 7. Գնահատման պատասխանների գունային քարտեզ. Ֆինանսավորում 79

Աղյուսակ 8: Մասնակցային գնահատման աշխատաժողովի մասնակիցների կողմից համակարգի բաղադրիչների և խնամքի ոլորտների վերաբերյալ կատարված առաջարկությունների ցանկը 81

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՆ ՄԶԳ – Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն

ԱՆ – Առողջապահության նախարարություն

ԱՍՀՆ – Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ԱՎԾ – Ազգային վիճակագրական ծառայություն

Արդն – Արդարադատության նախարարություն

ԵՀԹ – Երկրի հիմնական թիմ

ԽՀՀ – Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՀԿ – հասարակական կազմակերպություն

ԿԳՆ – Կրթության և գիտության նախարարություն

ՄևԳ – Մշտադիտարկում և գնահատում

ՅՈՒՆԻՍԵՖ – ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ

ՏԿԶՆ – Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

ՔՀԿ – Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

DCOF – Տեղահանված և ծնողազուրկ երեխաների հիմնադրամ

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ

Նախապատմություն

Հայաստանում երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների գնահատման նախաձեռնությունը հիմնված է Միավորված ազգերի կազմակերպության «Երեխայի այլընտրանքային խնամքի մասին ուղեցույցի» վրա, որը նկարագրում է երեխաների պատշաճ խնամքին վերաբերող հիմնական սկզբունքներն ու ստանդարտները, որոնք ուղղված են ապահովելու, որ երեխաները մեծանան պաշտպանված միջավայրում՝ զերծ զրկանքներից, շահագործումից, վտանգներից և անապահովությունից: Այս նպատակներին աջակցելու համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ) Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) «Տեղահանված և ծնողազուրկ երեխաների հիմնադրամի» (DCOF) և «MEASURE Evaluation» ծրագրի ֆինանսավորմամբ և մասնագիտական աջակցությամբ իրականացրեց երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների մասնակցային ինքնագնահատում՝ հիմնական շահագրգիռ կողմերի հետ աշխատաժողովի միջոցով, որը տեղի ունեցավ Հայաստանում 2018 թվականի հունվարի 17-ից-19-ը, Ծաղկաձորի «Ռոսիա» հյուրանոցում:

Հայաստանն անցել է երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների մի քանի փուլ՝ սկսած շուրջօրյա խնամքի հաստատություններում երեխաների խնամքի և ծառայությունների որակի բարելավման քայլերից մինչև խնամքի բոլոր հաստատությունները ընտանեկան տիպի կամ համայնքային ծառայությունների վերափոխելու հիմնարար նախաձեռնությունը: Բարեփոխումների նոր ալիքը սկսվեց 2014 թվականին (ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 13-ի No 1273-N որոշում), երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը փոփոխություններ կատարեց 2013-2016թթ. ռազմավարական ծրագրում՝ բավարարելու ՄԱԿ-ի երեխայի այլընտրանքային խնամքի մասին ուղեցույցի պահանջները: 2016թ. ՀՀ կառավարությունն ընդունեց հայեցակարգային փաստաթուղթ և միջոցառումների ծրագիր՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին այլընտրանքային խնամքի ծառայությունների տրամադրման վերաբերյալ: 2017թ. հուլիսի 13-ին ՀՀ կառավարությունն ընդունեց 2017-2021թթ. երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը: Վերջինս ներառում է մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են երեխաների հիմնարար իրավունքներն ու ազատությունները պաշտպանելուն՝ ճանաչելով երեխայի լավագույն շահը և ընտանեկան միջավայրում երեխայի խնամքի ու զարգացման իրավունքը: Մասնակցային գնահատման օրն Ազգային ժողովի կողմից՝ 2018 թվականի հունավարի 18-ին ընդունած Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը մեծապես ազդեց գնահատման արդյունքների վրա:

Չնայած վերջին տարիներին նվազել է ֆորմալ շուրջօրյա խնամքի հաստատություններում գտնվող երեխաների թվաքանակը, երկրում դեռևս կա մոտ 3,600 երեխա, որոնք ապրում են մանկատներում, գիշերային խնամքի հաստատություններում և հատուկ դպրոցներում: Այս երեխաները մեծ մասամբ հաշմանդամություն ունեցող երեխաներ են[1]: Նրանք հանձնվել են խնամքի հաստա-

[1] Համաձայն ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը» պարբերականի՝ 2017թ. սեպտեմբերի 25, շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների 68%-ն ունի հաշմանդամություն: Գնահատականը կատարվել է հիմք ընդունելով նշված պարբերականում բերված երեխաների թվաքանակը մանկատներում էջ 451, հատուկ դպրոցներում՝ էջ 35 և գիշերօթիկ խնամքի հաստատություններում՝ էջ 472 :

տություններ ընտանիքի աջակցության համայնքային ծառայությունների բացակայության պատճառով: Աղքատությունը և ընտանիքների անկարողությունն իրենց երեխաների հիմնական կարիքները բավարարելու հարցում, ծնողի կամ երեխայի հաշմանդամությունը, ծնողին կորցնելու հանգամանքը կամ ծնողների արտագաղթը, ինչպես նաև ընտանիքների խոցելիությունը ալկոհոլի և թմրանյութերի չարաշահումից այն հիմնական պատճառներն են, որոնք հանգեցնում են երեխաներին խնամքի հաստատություններ հանձնելուն: ՀՀ կառավարությունը այլընտրանքային խնամքի ծառայությունների, հատկապես խնամատար ընտանիքների և ցերեկային խնամքի հաստատությունների հիմնումն ու ընդլայնումը համարում է որպես հիմնական գերակայություն, որը կնպաստի երեխաներին ընտանիքում կամ ընտանեկան տիպի միջավայրում խնամքի տրամադրմանը՝ նրանց խնամքի հաստատություններից դուրս բերելուց հետո:

Աշխատաժողովի նպատակն ու խնդիրները

Գնահատման աշխատաժողովի նպատակն էր մեկտեղել երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումներում ներգրավված հիմնական դերակատարներին, այդ թվում՝ որոշում կայացնողներին, քաղաքականություն մշակողներին, ծառայություն մատուցողներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և դոնորներին՝ գնահատելու և հայտնաբերելու երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների այն ուղղությունները, որոնք պահանջում են հրատապ միջամտություն և գործողություններ: Գնահատման արդյունքները կնպաստեն բարելավելու երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների իրականացումը՝ կառավարության ստանձնած միջազգային պարտավորություններին և ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021թթ. ազգային ռազմավարության ու միջոցառումների ծրագրին համահունչ:

Գնահատման մեթոդաբանությունը

Աշխատաժողովը ամբողջովին մասնակցային ինքնագնահատում էր, որի ընթացքում խմբային քննարկումներում ներգրավված ավելի քան 60 մասնակիցները փոխանակում էին իրենց փորձն ու պատասխանում գնահատման գործիքի հարցադրումներին՝ խմբային փոխհամաձայնության հիման վրա: Երկրի հիմնական թիմը (ԵՀԹ), որը կազմավորվել էր 2017թ. հուլիսին և բաղկացած էր 12 անդամից, որոնք ներկայացնում էին կառավարությունը, զարգացման գործընկերներին և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ), համակարգում էր գնահատման աշխատաժողովի նախապատրաստման ու վարման աշխատանքները:

Աշխատաժողովի ժամանակ կիրառված գնահատման գործիքը մշակվել է ԱՄՆ ՄԶԳ/DCOF և «MEASURE Evaluation» ծրագրի կողմից՝ ՄԱԿ-ի Երեխայի այլընտրանքային խնամքի ուղեցույցի հիման վրա: Գործիքը ներառում է մի շարք հարցադրումներ, որոնք վերաբերում են երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի գլխավոր ոլորտներին (ընտանիքներից երեխայի առանց անհրաժեշտության բաժանման կանխումը, խնամք խնամատար ընտանիքում, խնամք շուրջօրյա հաստատությունում, ուղեկցվող անկախ ապրելակերպ, խնամակալություն (ֆորմալ և ոչ ֆորմալ), այլընտրանքային խնամքի այլ ձևեր, որդեգրում, ընտանիքների վերամիավորում և վերաինտեգրում և երեխաներին հաստատություններից դուրս բերում) և համակարգի գլխավոր բաղադրիչներին (կառավարում և առաջնորդում, ծառայությունների մատուցում, կադրեր/անձնակազմ, մշտադիտարկում և գնահատում և տեղեկատվական համակարգեր, ֆինանսավորում և սոցիալական նորմեր ու գործելաոճ): Գործիքը բաղկացած է 10 բաժնից, ներառյալ խնամքի համակարգի բոլոր ոլորտները,

և մեկ ընդհանուր բաժին՝ բոլոր մյուս բաժիններին վերաբերող ընդհանուր/խաչվող հարցադրումներով: Նախքան աշխատաժողովը, գործիքը թարգմանվել էր հայերեն, ստուգվել ու տեղայնացվել ԵՀԹ անդամների և հիմնական շահագրգիռ գործընկերների կողմից: Մշակվել է նաև գործիքում կիրառվող սահմանումների և եզրույթների բացատրական բառարան:

Գնահատման աշխատաժողովի հիմնական արդյունքներն ամփոփվել են ըստ խնամքի ոլորտների, հետևելով քննարկումների տրամաբանությանը, իսկ առաջարկությունների ցանկը տրամադրվել է ըստ համակարգի բաղադրիչների, ինչը թույլ կտա արագ հայտնաբերել խնամքի բոլոր ոլորտների համար անհապաղ ուշադրություն պահանջող ընդհանուր հարցերը:

Աշխատաժողովի մասնակիցները քննարկել են հարցադրումները և տվել իրենց պատասխանները՝ խմբի անդամների միջև փոխհամաձայնության հիման վրա: Մասնակիցները բաժանվել են 5 խմբի, յուրաքանչյուրում 12-13 ներկայացուցիչ տարբեր կառույցներից, այդ թվում՝ կենտրոնական և տեղական իշխանությունները և ՔՀԿ-ները, որոնք ներկայացնում են երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումներին առնչվող բոլոր ոլորտները, այդ թվում սոցիալական աջակցություն, կրթություն, առողջապահություն և այլն և միջին ղեկավար օղակը, ծրագրերի տնօրեններ, մասնագետներ, աշխատողներ: Այս մոտեցմամբ խմբերը ստացել են երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների տարբեր օղակներից ներկայացուցչություն ունենալու և գնահատման ենթակա բոլոր հարցադրումների վերաբերյալ փաստերի վրա հիմնված եզրակացություններ անելու հնարավորություն:

Հիմնական հետևություններն ըստ այլընտրանքային խնամքի ոլորտների

Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում կա **նպաստավոր օրենսդրական դաշտ, որը սահմանում է երեխային այլընտրանքային խնամքի ուղղորդելու կամ ընդգրկելու ստանդարտ գործընթացը:** Հայաստանի գործող օրենսդրությունը համահունչ է ՄԱԿ-ի Երեխայի այլընտրանքային խնամքի ուղեցույցի պահանջներին: ՀՀ կառավարության կողմից 2016թ. մայիսի 12-ին ընդունված հայեցակարգային փաստաթուղթը ընդհանուր նկարագրում է Հայաստանում այլընտրանքային խնամքի համակարգի զարգացման հիմնական սկզբունքներն ու քաղաքականությունը: Բացի դրանից, երեխայի իրավունքների մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների մասին ՀՀ նոր օրենքի նախագիծը ներկայացվել են ՀՀ Ազգային ժողովի հաստատմանը:

Ընտանիքներից երեխաների առանց անհրաժեշտության բաժանումը կանխարգելելը. Գործող իրավական դաշտը նախատեսում է որոշ հիմնական կարգավորումներ, որոնք ուղղված են իրենց ընտանիքներից երեխաների առանց անհրաժեշտության բաժանումը կանխելուն, սակայն դրանք ավելի շուտ ընդհանրական բնույթի են. կան հսկայական բացեր ընտանիքի ամրապնդմանն ուղղված ծառայությունների առկայության և մատչելիության առումով, հատկապես աջակցության ծառայությունների մասով այն ընտանիքներին, որոնք կանգնած են երեխաներից բաժանման վտանգի առջև, ինչպես նաև բավարար չեն համապատասխան կադրերը և թերի են գոյություն ունեցող ծառայությունների համար սահմնված որակի չափանիշները: Ընթացիկ օրենսդրությունը և ենթաօրենսդրական դաշտը հստակ չեն սահմանում ընտանիքից երեխայի առանց անհրաժեշտության բաժանումը կանխելու առաջնային, երկրորդային և երրորդային մեխանիզմները: Առկա է **վաղ տարիքից երեխայի զարգացման և խնամքի վերաբերյալ** ռազմավարություն, որը, սակայն, վերաբերում է միայն կրթության ոլորտին և չի ներառում դրույթներ 0-3 տարեկան երեխաների

վերաբերյալ: Արդյունքում չկա այս տարիքային խմբի համար նպատակային կանխարգելման ծառայությունների լավ մշակված շրջանակ:

Խնամք խնամատար ընտանիքում. ՀՀ կառավարությունը մշակել է խնամատար ընտանիքում երեխայի խնամքի կազմակերխման նոր ընթացակարգ, որը ներառում է ՄԱԿ-ի ուղեցույցի բազմաթիվ կարևոր դրույթներ, ինչպես օրինակ՝ խնամատարների և երեխաների մասնագիտացված նախապատրաստման մասին դրույթը, խնամատարների երաշխավորումը և գրանցումը, նախքան երեխային խնամատար ընտանիք հանձնելը թե՛ խնամատարներին, թե՛ երեխաներին աջակցություն և խորհրդատվություն տրամադրելու մասին դրույթը, խնամատար ծնողների ընտրության հարցում երեխաների կարծիքը հաշվի առնելու մասին դրույթը, ինչպես նաև դրույթներ խնամատար ընտանիքներում գտնվող երեխաների մշտադիտարկման մասին: Սակայն, չկան **խնամատարության գործը փակելու հստակ սահմանված ընթացակարգեր**:

Խնամք շուրջօրյա հաստատություններում. Պետական քաղաքականությամբ և կառավարության որոշումներով սահմանվում են խնամքի հաստատությունների աշխատողներին վերաբերող պահանջները և մատուցվող ծառայությունների չափանիշները, անկախ այդ հաստատությունների կազմակերպական կամ իրավական կարգավիճակից: ՀՀ ԱՍՀՆ-ը պարբերաբար իրականացնում է ծառայությունների որակի մշտադիտարկում մանկատներում և գիշերային խնամքի հաստատություններում: ՀՀ ԿԳՆ-ը պատասխանատու է հատուկ դպրոցներում որակյալ ծառայությունների մատուցման և երեխաների խնամքի ու կրթության կազմակերպման համար: Ոչ պետական մանկատների և շուրջօրյա խնամքի հաստատությունների գործունեությունն ու ծառայությունների որակը մշտադիտարկման չի ենթարկվում: Կառավարության ընդհանուր քաղաքականությունն ուղղված է շուրջօրյա հաստատությունների վերակազմավորմանը և համայնքներում այլընտրանքային խնամքի ծառայությունների մատուցման համակարգի զարգացմանը, որի նպատակն է նվազեցնել խոցելի ընտանիքների կախվածությունը շուրջօրյա խնամքի մեծ հաստատություններից՝ իրենց երեխաների խնամքի ապահովման նպատակով: Սակայն գնահատման մասնակիցները համաձայնեցին, որ ծնողների շրջանում և ընդհանուր առմամբ հասարակության մեջ տարածված է այն կարծիքը, որ աղքատ երեխաները, հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաները, ավելի որակյալ խնամք և ծառայություններ ստանում են մանկատանը, քան իրենց ընտանիքներում: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ հաշմանդամության նպաստը և ընտանիքներին տրվող սոցիալական աջակցությունը շատ ցածր է և չի բավականացնում որակյալ ծառայութուններից օգտվելու համար:

Ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպում.Գնահատումը բացահայտեց, որ ուղեկցվող անկախ ապրելակերպի մասով ծառայությունները Հայաստանում բավականաչափ զարգացած չեն և ներառված չեն ՀՀ կառավարության միջոցառումների ծրագրում: Մանկատան շրջանավարտներին որոշ ծառայություններ մատուցվում են, սակայն սահմանված չէ որևէ ծառայություն հատուկ դպրոցների և գիշերային խնամքի հաստատությունների շրջանավարտների համար: Հաշմանդամություն ունեցող երիտասարդներն ավելի խոցելի են անկախ կյանք սկսելու առումով, քանի որ չկան ծառայություններ, որոնք նրանց կպատրաստեն ինքնուրույն կյանքի համար:

Խնամակալություն. Խնամակալությունը կարգավորող օրենսդրական դաշտը թերի է: Ֆինանսական աջակցություն չի տրամադրվում խնամակալներին, ովքեր հանձն են առել երեխայի խնամքը ընտանեկան միջավայրում՝ շուրջօրյա խնամքի հաստատություն հանձնելու փոխարեն: Չկան կանոնակարգեր, որոնք կկանխեն երեխայի իրավունքների խախտումը ֆորմալ գրանցում չունեցող խնամակալների կողմից: Գնահատման խմբերը համաձայնեցին, որ խնամակալության

գծով համապատասխան մասնագետները վերապատրաստման կարիք ունեն: Չկա ծառայությունը մշտադիտարկելու մեխանիզմ:

Ոչ ազգականի կողմից տրամադրվող ոչ ֆորմալ խնամք. Չկան ոչ ազգականի կողմից տրամադրվող ոչ ֆորմալ խնամքի վերահսկման մեխանիզմներ՝ երեխաներին պաշտպանելու հնարավոր բռնությունից, անտեսումից, մանկական աշխատանքի չարաշահումից և շահագործման բոլոր այլ ձևերից: Երեխաների խնամքի և պաշտպանության այս ոլորտի աջակցությանն ուղղված քայլերը պետական համակարգի կողմից որպես առաջնահերթություն չեն ընդունվել: Աշխատաժողովի որոշ մասնակիցների կարծիքով սա ամենահրատապ հարցն է, որ պետք է լուծել Հայաստանում այլընտրանքային խնամքի համակարգի ձևավորման շրջանակներում՝ կանխարգելելու և խուսափելու երեխայի իրավունքների խախտման հնարավոր դեպքերից:

Որդեգրում. Հայաստանը հանդիսանում է որդեգրման մասին Հաագայի միջազգային կոնվենցիայի ստորագրող կողմ, սակայն երկրի օրենսդրությունը դեռևս պետք է ներդաշնակեցվի դրա պահանջներին, հատկապես միջազգային որդեգրման ժամանակ հավանական ծնողներին երեխայի հետ համապատասխանեցման և երեխաներին իրենց որդեգրման մասին տեղեկացման հարցերում: **Պետական քաղաքականությունը կարգավորում է թե՛ ներքին և թե՛ օտարերկրյա որդեգրումը:** Ստանդարտ ընթացակարգեր կան, սակայն դրանք միշտ չէ, որ կիրառվում են: Որդեգրման գործընթացների կազմակերպման համար ֆինանսավորում չի հատկացվում, իսկ որդեգիր ծնողներին բացի վարչական կողմնորոշումից, այլ մասնագիտական աջակցություն չի տրամադրվում որդեգրման գործընթացի ժամանակ և դրանից հետո: Հաշմանդամություն ունեցող երեխաները հիմնականում որդեգրվում են երկրից դուրս: Առկա է երեխա որդեգրել ցանկացող անձանց ռեեստր և որդեգրված երեխաների տեղեկատվական համակարգ, սակայն այդ տեղեկատվությունը մատչելի է միայն ՀՀ ԱՍՀՆ ներքին օգտագործման համար:

Երախաների վերամիավորումը ընտանիքների հետ. 2016թ.-ից սկսած երկրի օրենսդրական և քաղաքական դաշտը ներառել է երեխաների հետ ընտանիքի վերամիավորման մասին ընթացակարգեր և կանոնակարգեր: Սակայն այդ դրույթները հստակ չեն սահմանում ծառայություն մատուցողների դերերի ու պարտականությունների բաժանումը, և չկան մեթոդական ուղեցույցեր՝ ղեկավարելու ընտանիքի հետ երեխայի արդյունավետ վերաինտեգրման գործընթացը: Համայնքները միշտ չէ, որ ունեն համապատասխան ծառայություններ և ռեսուրսներ ընտանիքի վերամիավորմանն աջակցելու համար: Ընդհանրապես, նորից խնամքի հաստատություններ վերադառնալու վտանգի առջև կանգնած երեխաներ ունեցող խոցելի ընտանիքներին մատուցվող ծառայություններն իրենց բնույթով ոչ թե կանխարգելիչ, այլ ավելի արձագանքող են:

Հաստատությունների վերակազմավորում. Չնայած խնամքի հաստատությունների վերակազմավորման գործում դրական առաջընթացին, **թույլ միջգերատեսչական համագործակցությունը** դժվարություններ է ստեղծում երեխաներին և ընտանիքներին որակյալ ծառայություններ մատուցելու գործում՝ **խնամքի հաստատություններից երեխաների դուրս բերելու ընթացքում** և դրանից հետո: Համապատասխան իշխանությունները կամ ծառայությունները միշտ չէ, որ տեղեկացվում են նախքան խնամքի հաստատություններից դուրս բերելը երեխաների և ընտանիքների կարիքների համակողմանի գնահատման և երեխաներին խնամքի հաստատությունից դուրս բերելու ընթացքում և դրանից հետո նրանց սոցիալական, առողջապահական և կրթական կարիքների բավարարման համակարգված ծրագրերի մասին: Այս գործընթացում ընդգրկված մասնագետների կարողությունները բավարար չեն: Չնայած տրամադրված նախնական վերապատրաստումներին, չկան շարունակական կողմնորոշման և վերապատրաստման մեխանիզմներ: Վերապատրաստումների արդյունավետությունը նույնպես պետք է վերահսկվի և բարելավվի:

Ընդհանուր/խաչվող հարցեր. Դեպք վարողները և խնամակալության և հոգաբարձության մարմինները կամ հանձնաժողովները (ԽՀՀ) պատասխանատու են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված յուրաքանչյուր երեխայի վրա ազդեցություն ունեցող հանգամանքների գնահատումն իրականացնելու համար: Գնահատումը հաշվի է առնում երեխայի անմիջական անվտանգությունը և բարեկեցությունը, ինչպես նաև նրա երկարաժամկետ խնամքն ու զարգացումը: Սակայն այլընտրանքային խնամքի համակարգում երեխաների տեղավորումը գնահատելու, պլանավորելու և ստուգելու պարտադիր ընթացակարգերի ետևում միշտ չէ, որ կանգնած են համապատասխան մասնագետներ, չհամակարգված և **սահմանափակ կողմնորոշման ու վերապատրաստման** պատճառով:

Հետևություններ և առաջարկություններ ըստ երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների համակարգային բաղադրիչների

Աղյուսակ 8-ը ներկայացնում է մասնակցային գնահատման արդյունքում դուրս բերված առաջարկությունների ցանկը՝ խմբավորված ըստ համակարգի բաղադրիչների և խնամքի ոլորտների: Առաջարկությունների ցանկից առաջնահերությունների սահմանումը և միջացառումների ծրագրում դրանք ներառելու վարժությունն իրականացվել է հիմնական գործընկերների հետ համատեղ՝ 2018 թվականի ապրիլի 27-ին տեղի ունեցած աշխատանքային քննարկման ժամանակ: Այդ միջոցառման արդյունքների մասին հաշվետվությունն առանձին կմշակվի: Հաջորդիվ բերված են մասնակցային գնահատման արդյունքում վերհանված հիմնական բացահայտումներն ու համապատասխան առաջարկություններն՝ ըստ համակարգի բաղադրիչների: Առավել մանրամասն առաջարկությունները բերված են հաշվետվության վերջում՝ «Ամփոփում» վերնագրի ներքո և դրան հաջորդող աղյուսակ 8-ում:

Կառավարում և առաջնորդում

- Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում կա **նպաստավոր օրենսդրական դաշտ, որը սահմանում է երեխային այլընտրանքային խնամքի ուղղորդելու կամ ընդգրկելու ստանդարտ գործընթացը:** Հայաստանի գործող օրենսդրությունը համահունչ է ՄԱԿ-ի Երեխայի այլընտրանքային խնամքի ուղեցույցի պահանջներին: Ընդհանուր առմամբ, **առաջնորդումը** (քաղաքականության շրջանակն ու ռազմավարության տեսլականը) Հայաստանի երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների նախաձեռնություններում բավականաչափ ուժեղ է, սակայն **կառավարումը** (գործնական կիրառման մեխանիզմները) թույլ է: Հայաստանում այլընտրանքային խնամքի համակարգի հիմնարար փոփոխությունների սկիզբը նախանշվեց 2016 թվականին: ՀՀ կառավարության կողմից 2016թ. մայիսի 12-ին ընդունված արձանագրային որոշումը նկարագրում է երկրում այլընտրանքային խնամքի համակարգի ձևավորման հիմնական սկզբունքներն ու քաղաքականությունը: Բացի այդ, երեխայի իրավունքների մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների մասին ՀՀ նոր օրենքի նախագիծը ներկայացվել են ՀՀ Ազգային ժողովի հաստատմանը:
- Կան բարելավման կարիք ունեցող ոլորտներ. Պետք է մշակվեն միջգերատեսչական համագործակցության, ծառայությունների որակի ստանդարտներ և որակավորման պահանջներ ծառայություններ մատուցողների համար, հատկապես կանխարգելման և ընտանիքների վերամիավորման ծառայությունների համար: Ոչ ֆորմալ խնամքի տրամադրումը նույնպես

կանոնակարգման կարիք ունի՝ կանխելու երեխաների հնարավոր բռնությունը և երեխաների իրավունքների խախտումը: Ամենակարևորը, պետք է վերանայվի 0-3 տարեկան երեխաների այլընտրանքային խնամքի օրենսդրական կարգավորումը՝ առաջնահերթություն տալով հաշմանդամության վաղ հայտնաբերման և արձագանքման, նորածնային սկրինինգների ցանկի ընդլայնմանը և այս խմբի երեխաներին խնամքի հաստատություն հանձնելը կանխելու և նրանց ընտանեկանին մոտ միջավայրում խնամք տրամադրելու հարցերը: Երեխաների համար այլընտրանքային խնամքի ծառայություններ մատուցելիս պետք է առաջնորդվել այն իրավական հիմքերով, որտեղ սահմանված է երեխայի լավագույն շահը, իսկ համապատասխան մասնագետներն ու ծառայություն մատուցողները վերապատրաստվեն և ստանան անհրաժեշտ կողմնորոշում: Բացի այդ, պետք է մշակվեն որոշ ծառայությունների, ինչպես օրինակ՝ ընտանիքի ամրապնդում, ուղեկցվող անկախ ապրելակերպ, օրենսդրական կարգավորումները:

Ծառայությունների մատուցում

- Հիմնականում այլընտրանքային խնամքի ծառայություններ մատուցողները **գրանցված են և հավաստագրված իրավասու մարմինների կողմից**: Այնուամենայնիվ, գործնականում **ծառայությունների մատուցումը միշտ չէ, որ իրականացվում է համաձայն իրավական ընթացակարգերի**: Ըստ գնահատման արդյունքների, դա պայմանավորված է երկու պատճառներով՝ 1) ծառայությունների որոշակի չափանիշների բացակայություն, ներառյալ այն ծառայությունների, որոնք անհրաժեշտ են երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխարգելման և ընտանիքի վերամիավորմանն աջակցելու համար, և 2) խնամքի համակարգում ներգրավված համապատասխան անձնակազմի թերի իրազեկվածություն և վերապատրաստում:
- **Ծառայությունները պետք է համահունչ լինեն օրենսդրական դրույթներին:** Պետք է առաջնահերթությունը տալ ընտանիքահենք այլընտրանքային խնամքի ծառայությունների զարգացմանը բոլոր մարզերում, թերևս ներդնելով կանխարգելման ծառայությունների պետության կողմից ֆինանսավորվող նվազագույն փաթեթ (ընտանիքներին աջակցություն, խնամատար ընտանիքներում տրամադրվող խնամք և այլն), ներդաշնակեցնելով այդ փաթեթը բոլոր սոցիալական ծառայությունների հետ (օր.՝ կրթություն): Երկրում ընդամենը մեկ ոչ մեծ հասարակական կազմակերպության միջոցով կանխարգելման և (կամ) ընտանիքի վերամիավորման ծառայությունների տրամադրումը և միայն մի քանի մարզերում ցերեկային կենտրոնների առկայությունը բավարար չէ կանխելու երեխաների առանց անհրաժեշտության բաժանումն ընտանիքներից, ինպես նաև ամրապնդելու ռիսկային ընտանիքները կամ կազմակերպելու երեխաների արդյունավետ վերամիավորումն ընտանիքների հետ:
- Որակի նվազագույն ստանդարտների ներմուծումը բոլոր ծառայությունների՝ ներառյալ ընտանիքի վերամիավորումն ապահովող ծառայությունների համար կարևոր է ծառայությունների մատուցումը կանոնակարգելու համար: Պետք է ներդրվի ծառայություն մատուցողների (ինչպես պետական այնպես էլ ոչ պետական) արդյունավետ մշտադիտարկում՝ ապահովելու ծառայությունների որակի համապատասխան ստանդարտների պահպանումը:
- Խիստ կարևոր է նեղ մասնագիտացված ծառայությունների կատարելագործումը կամ զարգացումը, այդ թվում՝ բողոքարկման մեխանիզմի ստեղծումը երեխաների՝ ներառյալ հաշ-

մանդամություն ունեցող երեխաների, բռնության զոհերի, ոչ մերձավոր ազգականների/հարազատների կողմից ոչ ֆորմալ խնամքի տակ գտնվող երեխաների համար: Պետք է մշակել նաև ծառայություններ հաշմանդամություն ունեցող խնամատարների/խնամակալների կարողությունների զարգացման և ռեսուրսներով ապահովման համար:

- Կարևոր է զարգացնել ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպման և ժամանակավոր խնամքի ծառայությունները:

Կադրեր/աշխատակազմ

- Բոլոր այլընտրանքային խնամքի ծառայություն տրամադրողները պետք է գրանցվեն և ստանան հավաստագրում իրավասու մարմնի կողմից, սակայն 2017 թվականից սկսված գործընթացը շատ դանդաղ է ընթանում: Ծառայություն մատուցողների հավաստագրումը պարբերաբար վերանայվում է ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից՝ օրենքով սահմանված ստանդարտ չափորոշիչների հիման վրա: Սակայն **խնամքի յուրաքանչյուր ոլորտի համար** կա **որակի ստանդարտներն ու չափանիշները սահմանող ուղեցույցների** կարիք: Այս ուղեցույցները պետք է նույն ձևով պարտադիր լինեն ծառայություն մատուցող և՛ պետական, և՛ ոչ պետական կառույցների համար: Համապատասխան կադրերը, այդ թվում՝ դեպք վարողները և սոցիալական աշխատողները, չունեն ծանրաբեռնվածության հստակ սահմանված շեմեր և աշխատանքի որակի ստանդարտներ: Չկան դեռահասների հետ աշխատելու որակավորում ունեցող մասնագետներ, հատկապես մարզերում:
- **Կադրերը/մասնագետները պետք է վերապատրաստվեն:** Կարևոր է շարունակաբար զարգացնել առանց աշխատանքից կտրվելու կամ աշխատանքին զուգահեռ վերապատրաստման մեխանիզմը մասնագետների համար, ովքեր աշխատում են սոցիալական աջակցության և խնամքի տրամադրման համակարգում, որպեսզի երեխաների կարիքները բավարարվեն միասնական ձևով ու հավասարապես բոլոր մարզերում, անկախ ծառայություն մատուցողների տեսակից (պետական և ոչ պետական): Շտապ անհրաժեշտ են վերապատրաստման մեխանիզմներ՝ նպատակաուղղված աշխատողների կարողությունների զարգացմանը, ովքեր ներգրավված են խնամակալության, խնամատարության, որդեգրման և հատկապես ընտանիքի վերամիավորման և վերաինտեգրման ծառայությունների բնագավառներում:
- Թեև չափազանց մեծ է դեռահասների հետ աշխատող մասնագետների կարիքը, գնահատումը բացահայտեց, որ **երկրում չկան դեռահասների/երիտասարդների հարցերով զբաղվող հատուկ որակավորում ունեցող մասնագետներ**: Կա նաև **ուղեկցվող անկախ ապրելակերպի և ժամանակավոր ծառայությունների** մատուցման համար մասնագետներ պատրաստելու կարիք:

ՄԵԳ և տեղեկատվական համակարգեր

- **Գնահատումը ցույց տվեց, որ երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի մշտադիտարկումն ու գնահատումն ամենաթույլ բաղադրիչներից է:** Գերակա խնդիր է հիմնել մեկ միասնական համակարգ այլընտրանքային խնամքի բնագավառում տվյալների հավաքագրման, փոխանակման և օգտագործման համար:

- Կարևոր է մշակել ստանդարտացված ցուցանիշներ երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների իրականացումը մշտադիտարկելու, տվյալների պահանջարկը խթանելու և տվյալների որակի ապահովման համակարգեր ներդնելու համար:

Սոցիալական նորմեր, գործելաոճ

- **Առաջնահերթություն տրված չէ հանրային իրազեկման և բացասական սոցիալական նորմերը փոփոխելուն ուղղված միջոցառումների խթանմանը** Երեխաների, ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքում ապրելու իրավունքի իրազեկման քարոզարշավները հիմնականում իրականացվում են ՀԿ-ների և/կամ միջազգային կազմակերպությունների կողմից և կանոնավոր բնույթ չեն կրում: **Գնահատման մասնակիցներն առաջարկում են մշակել և ներդնել քարոզչության և հանրային իրազեկման ռազմավարություն,** որը կօգնի հաղթահարել հասարակության բացասական դիրքորոշումը և բարձրացնել իրազեկվածությունը, որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխային խնամքի հաստատություն հանձնելը չի բխում երեխայի լավագույն շահից:
- Պետք է խթանել միջգերատեսչական համագործակցությունը՝ բարձրացնելու հանրության իրազեկվածությունն առ այն, որ խնամակալությունը, խնամատարությունը և որդեգրումը խնամքի ավելի նախընտրելի ձևեր են, քան շուրջօրյա խնամքի հաստատություններ երեխաներին հանձնելը:
- Կարևոր է նաև զարգացնել հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների գիտելիքն ու կարողությունները, ինչպես նաև խթանել դրական վերաբերմունք այդ երեխաների համար ընտանեկան տիպի խնամքի անհրաժեշտության հանդեպ:

Ֆինանսավորում

- **Այլընտրանքային խնամքի յուրաքանչյուր տեսակին օժանդակելու համար անհրաժեշտ ֆինանսավորման համար չկա ծախսերի գնահատում**: Ընտանիքներից երեխաների առանց անհրաժեշտության բաժանումը կանխարգելելու նպատակով ընտանիքներին աջակցելու և ամրապնդման համար անհրաժեշտ ծառայություններ մատուցելու ծախսերը նույնպես գնահատված չեն: Բյուջետային հատկացումները բավարար չեն այլընտրանքային խնամքի ծառայությունների որևէ տեսակի մատուցման և հատկապես ընտանիքի բաժանման կանխարգելման համար: Գնահատման արդյունքների հիման վրա մասնակիցներն առաջարկում են կատարել ծախսերի նախահաշվարկ՝ պարզելու, թե որքան ֆինանսավորում է անհրաժեշտ այլընտրանքային խնամքի յուրաքանչյուր տեսակը ֆինանսավորելու համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների գնահատման նախաձեռնությունը հիմնված է Միավորված ազգերի կազմակերպության «Երեխայի այլընտրանքային խնամքի մասին ուղեցույցի» վրա (այսուհետ «ՄԱԿ-ի ուղեցույց»), որը նկարագրում է երեխաների պատշաճ խնամքին վերաբերող հիմնական սկզբունքներն ու ստանդարտները, որոնք ուղղված են ապահովելու, որ երեխաները մեծանան պաշտպանված միջավայրում՝ զերծ զրկանքներից, շահագործումից, վտանգներից և անապահովությունից: Այս նպատակներին աջակցելու համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ)՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) «Տեղահանված և ծնողազուրկ երեխաների հիմնադրամի (DCOF) և “MEASURE Evaluation» ծրագրի ֆինանսավորմամբ և մասնագիտական աջակցությամբ իրականացրեց երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների մասնակցային ինքնագնահատում՝ հիմնական շահագրգիռ կողմերի հետ աշխատաժողովի միջոցով, որը տեղի ունեցավ Հայաստանում 2018 թվականի հունվարի 17-ից-19-ը, Ծաղկաձորի «Ռոսիա» հյուրանոցում:

Գնահատման աշխատաժողովի նախապատրաստումն ու կազմակերպումն իրականացվել է երկրի հիմնական թիմի (ԵՀԹ) կողմից, որը ձևավորվել էր 2017թ. հուլիսին և որի կազմում ներկայացված են որոշում կայացնողներ ու մասնագետներ կառավարության, միջազգային դոնոր գործընկերների ու քաղաքացիական հասարակության կազմակերպություններից (ՔՀԿ): ԵՀԹ անդամներն ընտրվել են գործընկեր նախարարությունների կողմից՝ Հայաստանում ԱՄՆ ՄԶԳ առաքելության միջնորդությամբ, Հայաստանում երեխաների խնամքի և պաշտպանության բարեփոխումների ոլորտում ունեցած փորձառության, փորձի և նվիրվածության հիման վրա: ԵՀԹ անդամների կազմը բերված է Հավելված Ա-ում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Սոնա Հարությունյանը կարևոր ներդրում է ունեցել աշխատաժողովի նախապատրաստման ամբողջ ընթացքում: Աշխատաժողովի հետ կապված բոլոր միջոցառումները և նախապատրաստական աշխատանքները հանրությանը ներկայացվել են ՀՀ ԱՍՀՆ կայքէջի միջոցով:

Գնահատման աշխատաժողովի նպատակն էր հզորացնել համապատասխան պետական կառույցների գործընկերների կարողությունները՝ հետևյալ որոշակի խնդիրներն իրագործելու համար.

- կազմակերպել երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների և պետական ռազմավարության, վարվող քաղաքականության համակարգված գնահատման իրականացումը՝ ստանդարտացված գործիքի կիրառմամբ,
- վերհանել ընթացող բարեփոխումներում երեխաների խնամքի և պաշտպանության համակարգային բացթողումներն ու գնահատել շարունակական կարիքները,
- մշակել ծրագրեր՝ երեխաների խնամքի և պաշտպանության բարեփոխումների առաջնահերթ կարիքներին լուծումներ առաջադրելու համար:

Գնահատման աշխատաժողովը մեկտեղել էր երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումներում ներգրավված հիմնական դերակատարներին, այդ թվում՝ որոշում կայացնողներին, քաղաքականություն մշակողներին, ծառայություն մատուցողներին, քաղաքացիա-

կան հասարակության ներկայացուցիչներին և դոնորներին՝ գնահատելու և հայտնաբերելու երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների այն ոլորտները, որոնք պահանջում են հրատապ միջամտություն և գործողություններ: Գնահատման արդյունքները կնպաստեն բարելավելու երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների իրականացումը՝ կառավարության ստանձնած միջազգային պարտավորություններին և ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թթ. ազգային ռազմավարության ու գործողությունների ծրագրին համահունչ:

Աշխատաժողովին ներկա էին **ընդհանուր թվով 66 մասնակից** (54 կին, 12 տղամարդ, 6 մասնակից մարզերից), այդ թվում՝ մասնակիցներ ՀՀ ԱՍՀՆ-ից, ՀՀ կրթության և գիտության նախարարությունից (ԿԳՆ), ՀՀ արդարադատության նախարարությունից (ԱրդՆ), ՀՀ առողջապահության նախարարությունից (ԱՆ), ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից (ՏԿԶՆ), ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից (ԱՎԾ), ՀՀ ոստիկանությունից, ՀՀ քննչական կոմիտեից, մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների պետերը, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունները, ցերեկային խնամքի կենտրոնները և մանկատները, հետազոտող-վերլուծաբաններ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակը և ԱՄՆ ՄԶԳ առաքելությունը: ԵՀԹ բոլոր անդամները, բացի մեկից, մասնակցեցին աշխատաժողովին ամբողջ ընթացքում: Մասնակիցների ցանկը բերված է Հավելված Բ-ում: Գծապատկեր 1-ը ներկայացնում է մասնակիցների կազմի գրաֆիկական պատկերը:

Գծապատկեր 1. Գնահատման աշխատաժողովի մասնակիցների կազմը, %



«MEASURE Evaluation» ծրագիրը ԵՀԹ-ին ներկայացրել է աշխատաժողովի մասին հաշվետվությունը, որտեղ նկարագրված է աշխատաժողովի ընթացքը, հաջորդ գնահատումների մասին առաջարկություններ և նախնական արդյունքներն ու առաջարկությունները: Այս հաշվետվության մեջ մանրամասն ներկայացված են գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա արված հետևությունները, ինչպես նաև առանձին առաջարկություններ և այդ հետևությունների հիման վրա կառավարության և գործընկերների կողմից իրականացվելիք քայլերը:

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատաժողովի ժամանակ կիրառված գնահատման գործիքը նախապես մշակվել էր ԱՄՆ ՄԶԳ/DCOF և “MEASURE Evaluation» ծրագրի կողմից ՄԱԿ-ի ուղեցույցի հիման վրա՝ նպատակ ունենալով գնահատել երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումները չորս երկրներում՝ Հայաստանում, Գանայում, Մոլդովայում և Ուգանդայում, ըստ գնահատման շրջանակի [տե՛ս ստորև Գծապատկեր 2]:

Գծապատկեր 2. Գնահատման շրջանակը



Գործիքը թարգմանվել է հայերեն լեզվով և անցել մշակման մի քանի փուլ՝ երկրի համատեքստին համապատասխանեցնելու համար: Առաջին փուլը տեղի ունեցավ 2017 թ. սեպտեմբերին Լոնդոնի աշխատաժողովի ժամանակ, որտեղ ԵՀԹ-ն մասնակցում էր գործիքի նախագծի վերանայմանը: Դրանից հետո գնահատման գործիքը և հիմնական սահմանումների և եզրույթների բառարանը մանրազնին քննարկվել են ԵՀԹ-ի և հիմնական շահագրգիռ կողմերի կողմից երկօրյա աշխատաժողովի ընթացքում Ծաղկաձորում, 2017թ. հոկտեմբերի 19-20-ը: Երրորդ անգամ գործիքը լրամշակվել է նախաթեստի և պիլոտային գնահատման ժամանակ՝ 2017 թ. նոյեմբերի 22-23-ը, Աղվերանում (այս աշխատաժողովների մասին մանրամասն հաշվետվությունները կցված են գնահատման աշխատաժողովի հաշվետվությանը): Ստորև բերված է գնահատման գործիքի և մեթոդաբանության ընդհանուր նկարագրությունը: Գնահատման գործընթացն առավել մանրամասն ամփոփում ներառված է «Երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների մշտադիտարկում, ուսումնասիրում և արձագանքում. Մասնակցային գնահատման աշխատաժողովի հաշվետվության մեջ, MEASURE Evaluation 2018.

Գործիքը բաղկացած է մի քանի բաժնից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների վերը գծապատկերում պատկերված ոլորտները: Յուրաքանչյուր բաժնում կան մի շարք հարցադրումներ, որոնք կազմակերպված են ըստ համակարգի բաղադրիչների: Աշխատաժողովի մասնակիցները քննարկում և իրենց պատասխանները տալիս էին փոխհամաձայնության հիման վրա: Գործիքն ունի պատասխանների նախապես որոշված տարբերակներ՝ «լիովին», «մեծմասամբ», «որոշ չափով», «բոլորովին ոչ» կամ «այո», «ոչ»: Գործիքի նշումներ բաժնում տեղ է հատկացվել պատասխանների հիմնավորումների մանրամասն նշումների համար: Գործիքը ներառում է նաև գծապատկերներ, որոնք ցույց են տալիս գնահատման արդյունքներն ըստ բաժինների, ինչպես նաև ըստ համակարգի բաղադրիչների:

Նախնական փորձարկման արդյունքում քաղված դասերի հիման վրա “MEASURE Evaluation» ծրագրի թիմը և ԵՀԹ-ն համաձայնության եկան նախքան աշխատաժողովը կազմակերպել գնահատման մեկնարկին նվիրված միջոցառում 2017 թ. դեկտեմբերի 19-ին (միջոցառման օրակարգը կցված է Հավելված Գ-ում): Գնահատման մեկնարկի միջոցառմանը հրավիրվեցին հիմնական մասնակիցները և շահագրգիռ կողմերը՝ ներկայացնելու գործիքն ու գնահատման գործընթացը և գրանցելու գնահատման աշխատաժողովի մասնակիցներին: ԵՀԹ յուրաքանչյուր անդամ կարճ ներկայացրեց ոլորտի գլխավոր զարգացումները՝ կապված երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների հետ, իսկ “MEASURE Evaluation» ծրագրի երկրի խորհրդատուն ներկայացրեց գործիքն ու գնահատման մեթոդաբանությունը: Միջոցառումից հետո հիմնական շահագրգիռ կողմերը, որոնք արտահայտեցին հետաքրքրություն և պատրաստակամություն մասնակցելու գնահատման աշխատաժողովին, գրանցվեցին՝ բաժանվելով 5 խմբի: Գնահատման գործիքը տրվեց գնահատման բոլոր մասնակիցներին եզրույթների բառարանի հետ միասին (գործիքը և բառարանը կարելի գտնել Միջոցառման հաշվետվությանը կից):

Նախքան գնահատման աշխատաժողովը կազմակերպված բոլոր քննարկումներն ու հանդիպումները կարևոր ներդրում են ունեցել գնահատման գործընթացի կազմակերպման և գործիքի կատարելագործման համար և նպաստել են գնահատման գործիքի հարցադրումների հանգամանալից ընկալմանը և ճիշտ մեկնաբանմանը գնահատման աշխատաժողովի ժամանակ:

Արդեն փաստացի ինքնագնահատման աշխատաժողովի ժամանակ գրանցված մասնակիցները բաժանվել են 5 խմբերի, որոնցից յուրաքանչյուրում ներկայացված են եղել և՛ կենտրոնական, և՛ մարզային իշխանությունները, ծառայություն մատուցողները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և միջազգային դոնոր կազմակերպությունները (աշխատաժողովի օրակարգը կցված է որպես Հավելված Դ): Բոլոր խմբերն ունեցել են աշխատանքը վարող (ֆասիլիտատոր), պատասխանները գրանցող և արձանագրություն վարող (խմբերի կազմն ու ֆասիլիտատորների մեթոդաբանական ուղեցույցը կցված են Հավելված Ե-ում): Այս մոտեցման շնորհիվ խմբերում ապահովվել է երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների տարբեր մակարդակների ներկայացուցիչների առկայությունը, ինչը նպաստել է փաստերի վրա հիմնված հետևությունների կայացմանը՝ գնահատման բոլոր հարցադրումների վերաբերյալ: Գնահատման նախապատրաստական գործընթացը ցույց տվեց, որ բոլոր հիմնական գործընկերները ցանկանում են աշխատել «երեխաների ընտանիքից առանց անհրաժեշտության բաժանումը կանխելու» «հաստատություններից երեխաների դուրսբերման» և «ընտանիքի վերամիավորման» բաժինների հետ, քանի որ դրանք համարվում են ամենակարևոր բաժինները Հայաստանում ընթացող բարեփոխումների տեսանկյունից: Այս խնդրանքը բավարարելու համար այդ բաժինները հանձնարարվեցին բոլոր 5 խմբերին, իսկ մյուս բաժինները բաժանվեցին խմբերի միջև, որպեսզի յուրաքանչյուր բաժին քննարկվեր ու գնահատվեր առնվազն երկու խմբի կողմից: Տե՛ս ստորև Աղյուսակ 1:

Աղյուսակ 1. Գնահատման գործիքի՝ գնահատող խմբերին հանձնարարված բաժինները

Խումբ #	Բաժին 1	Բաժին 2	Բաժին 3	Բաժին 4	Բաժին 5	Բաժին 6	Բաժին 7	Բաժին 8	Բաժին 9	Բաժին 10
1		X	X	X	X			X	X	X
2		X	X	X	X			X	X	X
3	X	X	X					X	X	X
4	X	X				X	X		X	X
5	X	X				X	X		X	X

Խմբերի վարողներն իրենց խմբերի անդամների հետ քննարկում և մեծամասնության պատասխանների հիման վրա գրանցում էին վերջնական համաձայնեցված պատասխանները բոլոր հարցադրումների համար՝ ըստ բաժինների: Ապա պլենար քննարկման ժամանակ խմբերը ամփոփ ներկայացրեցին իրենց խմբի եզրակացությունը՝ յուրաքանչյուր ոլորտի համար ըստ հետևյալ կետերի.

- համակարգում հատկորոշված հիմնական թույլ կողմերը
- հարցադրումներ, որոնց շուրջ դժվարությամբ է ձեռք բերվել փոխհամաձայնություն
- հարցադրումներ, որոնց պատասխաններն անորոշ են (կամ տեղեկությունների բացակայության պատճառով, կամ գործիքի որոշ ձևակերպումների անհստակության պատճառով)
- առաջարկություններ՝ ուղղված երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի յուրաքանչյուր բնագավառի բարելավմանը:

Քննարկման յուրաքանչյուր օրվա վերջում “MEASURE Evaluation» ծրագրի թիմը կատարում էր բոլոր խմբերի կողմից լրացված պատասխանների արագ նախնական վերլուծություն և համեմատում նմանությունները, տարբերություններն ու հակասական պատասխանները: Պատասխանները խմբավորվել են ըստ դրական կամ բացասական հակվածության: «Լիովին», «մեծմասամբ» և «այո» պատասխանները համարվում են դրական պատասխաններ, «Բոլորովին ոչ», «որոշ չափով» և «ոչ» պատասխանները՝ բացասական: Այն հարցադրումները, որոնց շուրջ փոխհամաձայնություն չի եղել, լրացուցիչ քննարկվել են պլենար քննարկումների ժամանակ, որպեսզի փոխհամաձայնություն ձեռք բերվի յուրաքանչյուր հարցադրման կամ բաժնի շուրջ:

Աշխատաժողովի ավարտին ձևավորվեց համաձայնեցված պատասխաններով վերջնական ֆայլ, ինչպես նաև խմբերի կողմից պատրաստված առաջարկությունների ցանկ, որոնք ուղղված էին գործիքի լրամշակմանը և համակարգի կատարելագործմանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս բաժնում գնահատման արդյունքներն ամփոփ ներկայացված են ըստ համակարգի յուրաքանչյուր ոլորտի: Նախ նկարագրվում են ընդհանուր/խաչվող հարցերին վերաբերող արդյունքները, որոնք հիմնված են գնահատման գործիքի խաչվող հարցերին տրված պատասխանների վրա: Ապա ներկայացվում են խնամքի յուրաքանչյուր առանձին ոլորտին վերաբերող հիմնական հետևությունները: Գնահատման արդյունքները ներառում են համակարգի ուժեղ և թույլ կողմերը, սակայն հիմնական շեշտադրումը կատարված է վերհանված բացերի նկարագրության վրա: Նման կառուցվածքն արտացոլում է քննարկման արդյունքները, քանի որ խմբերը դուրս էին բերել բազմաթիվ բացեր, իսկ դրանց հիման վրա հնարավոր կլինի մշակել նաև գործողությունների ծրագիր, որը կհանդիսանա գնահատման հիմնական արդյունքը:

Ստորև ներկայացված գծապատկերները պարունակում են հորիզոնական սյուներ համակարգի յուրաքանչյուր բաղադրիչի համար: Յուրաքանչյուր հորիզոնական սյան վրա նշված թվերը ցույց են տալիս, թե ինչպես են բաշխվել մասնակցային գնահատման մասնակիցների պատասխաններն ըստ համակարգի բաղադրիչի համար նախատեսված հարցապնդումների ընդհանուր քանակի: Օրինակ, 3-րդ գծապատկերում «Ծառայությունների մատուցում» համակարգի բաղադրիչի համար ընդգրկված են ընդհանուր 26 հարցապնդումներ:Պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ. «լիովին / այո» գնահատվել է մեկ հարցապնդում, «մեծմասամբ» ինը հարցադնդումներ, «որոշ չափով»՝տասնհինգ հարցապնդումներ և մեկ հարցապնդման համար նշվել է «բոլորովին ոչ/ոչ» պատասխան:

Ընդհանուր/խաչվող հարցեր

Ընդհանուր/խաչվող հարցեր բաժնում քննարկվող հարցադրումները վերաբերում են խնդիրներին, որոնք ընդհանուր են երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների բոլոր ոլորտների համար և ներառում են հետևություններ հիմնական օրենսդրական դաշտի, ծառայությունների մատուցման ընդունված պրակտիկայի և կադրային ու ՄԱԳ պահանջների մասին: Համակարգի բաղադրիչները, որոնք ավելի շատ վերաբերում են առանձին ոլորտներին, քննարկվում են հաջորդ բաժիններում, որտեղ ներկայացվում է խնամքի համապատասխան ոլորտի մասին վերլուծությունը և հետևությունները: Համակարգի յուրաքանչյուր բաղադրիչի համար հակիրճ ներկայացվում է հիմնական օրենսդրական դաշտը և ՀՀ կառավարության տեսլականը և այնուհետև՝ գնահատման արդյունքները:

Զարգացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների բավարարմանն ուղղված համայնքային ծառայությունների համակարգը՝ նկատի ունենալով, որ այն ներառման սկզբունքի հիման վրա լիարժեքորեն պետք է ապահովի նաև հատուկ կարիքներ ունեցող երեխաների բազմազան կարիքների բավարարումը՝ կանխարգելելու համար նմանատիպ երեխաների հայտնվելը երեխաների խնամքի ու պաշտպանության կենտրոնացված մեծ հաստատություններում:

ՀՀ կառավարության որոշում 13 նոյեմբերի, 2014 թ., թիվ 1273-Ն, կետ 24

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2014թ. նախաձեռնել է երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի հիմնարար բարեփոխումների[2] չորրորդ շրջանը և այլընտրանքային խնամքի համակարգի հաստատումը՝ առաջնորդվելով այն սկզբունքով, որ **բոլոր երեխաներն ունեն իրենց ընտանիքներում ապրելու իրավունք և պետք է ապրեն իրենց ընտանիքներում:** 2016[3] թ. կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար այլընտրանքային խնամքի ծառայությունների ստեղծման վերաբերյալ հայեցակարգային փաստաթուղթն ընդունելուց հետո, ՀՀ կառավարությունը հաստատեց բազմաոլորտային գործողությունների ծրագիրը[4], որը կարգավորում է համապատասխան նախարարությունների ջանքերը՝ կարգավորելու պետության կողմից ֆինանսավորվող խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների տեղավորումն ու խնամքը: Երեխաների ուղղորդումն այլընտրանքային խնամքի ծառայություններ կարգավորվում է «ՀՀ կառավարության երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության որոշում թիվ 1112 10 սեպտեմբերի, 2015 թ.): Այս որոնման մեջ 2016 թ մայիսի 26-ին արված փոփոխությունները ներառում են երեխաներին այլընտրանքային խնամքի համակարգ ուղղորդելու պայմաններն ու չափանիշները (ՀՀ կառավարության որոշում թիվ 551-Ն 26 մայիսի, 2016թ): 2017 թ. հուլիսի 13-ին ՀՀ կառավարությունն ընդունեց երեխայի իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և 2017-2021 թթ. գործողությունների ծրագիրը, որը ներառում է մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են պաշտպանելու երեխաների հիմնարար իրավունքներն ու ազատությունները՝ ճանաչելով երեխայի լավագույն շահը և երեխայի՝ ընտանեկան միջավայրում մեծանալու և զարգանալու իրավունքը:

Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում առկա է նպաստավոր ենթաօրենսդրական դաշտ, որը սահմանում է երեխային այլընտրանքային խնամքի համակարգ ուղղորդելու և տեղավորելու ստանդարտ գործընթացը: Սակայն, երեխաների կարիքների գնահատման, ծառայությունների պլանավորման և այլընտրանքային խնամքի ձևերի ընտրության պարտադիր ընթացակարգերը միշտ չէ, որ պահպանվում են համապատասխան մասնագետների կողմից՝ ցածր իրազեկվածության ու ոչ բավարար վերապատրաստման պատճառով: Համապատասխան մասնագետները չունեն հստակ սահմանված ծանրաբեռնվածության շեմեր և աշխատանքի որակի

---

[2] *Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամքի ու պաշտպանության բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը պայմանականորեն երեք փուլի բաժանումը տրված է ՀՀ կառավարության 2014թ.-ի նոյեմբերի 13-ի թիվ 1273-Ն որոշման մեջ:*

[3] *2016թ.-ի մայիսի 12-ի ՀՀ կառավարության արձանագրային որոշում թիվ 18 «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի կազմակերպման» հայեցակարգին հավանություն տալու մասին*

[4] 2016թ.-ի սեպտեմբերի 15-ի ՀՀ կառավարության արձանագրային որոշում թիվ 36 «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգի միջոցառումների ծրագրին» հավանություն տալու մասին

ապահովման ստանդարտներ: Չնայած այլընտրանքային խնամքի համակարգում գտնվող երեխաների մասին տվյալները կանոնավոր հավաքագրվում են, այդ տեղեկատվությունը բավարար չափով չի փոխանակվում հիմնական շահագրգիռ կողմերի միջև և չի օգտագործվում որպես հիմք քաղաքականության մշակման համար: Հավաքագրված տվյալների որակն ունի բարելավման կարիք, և անհրաժեշտ է ներդնել տվյալների որակի ապահովման մեխանիզմ: Այլընտրանքային խնամքի համակարգի վերաբերյալ տվյալները պետք է մշտապես փոխանակվեն հիմնական շահագրգիռ կողմերի միջև:

Գծապատկեր 3. Ընդհանուր/խաչվող հարցեր բաժնի գնահատման արդյունքների պատկերը



Կառավարում և առաջնորդում

Հայաստանի գործող օրենսդրությունը հիմնականում համահունչ է ՄԱԿ-ի այլընտրանքային խնամքի ուղեցույցով սահմանված դրույթներին: Երեխաների խնամքի և պաշտպանության ոլորտին առնչվող օրենսդրական դաշտը արմատական փոփոխությունների ենթարկվեց 2016թ.-ին: ՀՀ կառավարության 2016թ.-ի մայիսի 12-ի արձանագրային որոշմամբ ընդունված հայեցակարգային փաստաթղթում ընդհանուր նկարագրվում են Հայաստանում այլընտրանքային խնամքի համակարգի զարգացման հիմնական սկզբունքներն ու քաղաքականությունը: Փաստաթղթում նշվում է, որ հայեցակարգի նպատակն է այլընտրանքային խնամքի համակարգը կանոնակարգող դաշտը համապատասխանեցնել «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին:

ՀՀ կառավարության 2016թ.-ի մայիսի 26-ի թիվ 551 որոշմամբ հստակ սահմանվում է երեխային այլընտրանքային խնամքի ուղղորդելու կամ ընդգրկելու ստանդարտ գործընթացը՝ որպես գերակայություն ընդունելով ընտանեկան տիպի խնամքը, իսկ խնամքի հաստատություն հանձնելը համարելով որպես ծայրահեղ, ժամանակավոր և հնարավորինս կարճատև միջոցառում (առավելագույնը 6 ամիս):

Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը, որի նախագահն է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, պատասխանատու է բազմաոլորտային վերահսկողության համար՝ ապահովելով այլընտրանքային խնամքի սկզբունքների պահպանումը, միջգերատեսչական համակարգումն ու պետական քաղաքականության իրականացումը: ՀՀ ԱՍՀՆ-ը հանդիսանում է կառավարության լիազոր մարմինը, որը պատասխանատու է ազգային մակարդակում երեխաներին ֆորմալ այլընտրանքային խնամքի համակարգ ուղղորդելու կամ ընդգրկելու

մասին որոշումներ կայացնելու համար, իսկ մարզպետարանների[5] ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները եզրակացություն են տալիս երեխային այլընտրանքային խնամքի համակարգ ուղղորդելու մասին: Պետական քաղաքականությունը պարտադիր է տարածքային մակարդակում իրականացման համար: Մարզպետարանները պատասխանատու են պետական քաղաքականության պատշաճ իրականացման համար մարզերում: Համայնքները որպես տեղական ինքնակառավարման միավորներ կարող են ընդունել սեփական մոտեցումները, սակայն դրանք պետք է համահունչ լինեն պետական քաղաքականության հետ:

Գործող իրավական և քաղաքական դաշտը չի նախատեսում մասնագիտացված աջակցություն այլընտրանքային խնամքի համակարգում գտնվող հաշմանդամություն ունեցող երեխաների համար, կամ հաշմանդամություն ունեցող խնամակալների/հոգաբարձուների համար, բացառությամբ ցերեկային կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունները: Թեև առկա է սոցիալական պաշտպանության պետական քաղաքականություն (Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքը), որտեղ նախատեսվում են ընդհանուր դրույթներ երեխաների խնամքն իրականացնողների մասին, այն չի ներառում դրույթներ, որոնք վերաբերում են հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտացված ծառայությունների մատուցմանը:

Ուղղորդումը և ընդգրկումը խնամքի համակարգ

ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 26-ի որոշմամբ հստակ սահմանվում են խնամքի համակարգ ուղղորդելու սկզբունքներն ու որոշումների կայացման ընթացակարգերը, ինչպես նաև այլընտրանքային խնամքի տեսակներն ու հիմնական շահագրգիռ կողմերը, որոնք մասնակցում են ուղղորդման և որոշումների կայացման գործընթացներին: Այն հստակ սահմանում է երեխայի խնամքն առաջին հերթին կենսաբանական ընտանիքում կազմակերպելու առաջնահերթությունը, իսկ դրա անհնարինության դեպքում երեխայի այլընտրանքային խնամքի ծառայություններ ուղղորդումը՝ որպես տվյալ ժամանակահատվածում անհրաժեշտ, սակայն պարտադրված միջոց, իսկ բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված) կամ խնամքի գիշերօթիկ հաստատություններում տեղավորելը՝ որպես ծայրահեղ քայլ և ժամանակավոր լուծում (կետ 3, ենթակետ 1): Վեցերորդ սկզբունքն ասում է, որ ընտանիքի վատ սոցիալ-տնտեսական պայմանները երբեք չեն կարող ծառայել որպես միակ հիմնավորում երեխային ընտանիքից երկարաժամկետ բաժանելու և այլընտրանքային խնամքի որևէ ծառայությունում տեղավորելու համար: Սակայն այս սկզբունքները միշտ չէ, որ պահպանվում են, և խնամքի հաստատություններում գտնվող բազմաթիվ երեխաներ հիմնականում սոցիալապես անապահով և խոցելի ընտանիքներից են: Այս երեխաները հաստատություններում մնում են այնքան ժամանակ, քանի դեռ ծնողները չեն կարողանում հոգալ նրանց ապրուստն ընտանիքներում:

Երեխան կարող է ընտանիքից առանձնացվել ծնողների կամքին հակառակ միայն լիազոր մարմնի կամ դատարանի որոշմամբ: Առանց ծնողական խնամքի մնացած յուրաքանչյուր երեխայի տրամադրվում է օրինական խնամակալ կամ օրինական ներկայացուցիչ կամ իրավասու պետական մարմին՝ երեխայի շահերը ներկայացնելու համար: Ըստ աշխատաժողովի մասնակիցների, այս ընթացակարգերը միշտ կիրառվում են:

Այլընտրանքային խնամքի համակարգ հանձնված երեխաները միշտ չէ, որ մոտ են գտնվում իրենց բնակության վայրին: Տեղավորման սկզբունքը բխում է խնամքի տարբերակների առկայու-

[5] Հայաստանի վարչական բաժանումների՝ մարզերի կառավարման մարմին

թյունից և դրանց տեղակայվածությունից: Որոշման մեջ հստակ սահմանված է, որ քույրերին ու եղբայրներին պետք է տեղավորել միասին, եթե դա չի հակասում նրանց լավագույն շահերին: Այս դրույթի պահանջը սովորաբար կատարվում է, սակայն եղել են դեպքեր, երբ քույրերն ու եղբայրներն առանձնացվել են:

Խնամքի հաստատություններում գտնվող երեխաների մեծ մասը սերտ կապ է պահպանում ընտանիքի հետ, սակայն իրավիճակն այլ է խնամատար ընտանիքների դեպքում:

Թեև ՀՀ կառավարության 2016թ.-ի մայիսի 26-ի որոշման 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված է, որ «0-3 տարեկան երեխաները պետք է տեղավորվեն ընտանեկան տիպի խնամքի միջավայրում, եթե կա նրանց կենսաբանական ընտանիքից առանձնացնելու անհրաժեշտություն», այս սկզբունքը չի պահպանվում, որովհետև չկան ընտանեկան տիպի խնամքի հաստատություններ: Ուստի 0-3 տարեկան երեխաներն անմիջապես հանձնվում են մանկատուն և ապա գրանցվում որդեգրման համար, եթե ծնողները հրաժարվում են այդ երեխաներին հոգ տանելուց:

Բողոքարկման մեխանիզմներ

Խնամքի հաստատությունների կանոնադրություններով նախատեսվում է բողոքարկման ստանդարտ մեխանիզմների առկայությունը երեխաների համար: Երեխաներին միշտ ծանոթացնում են իրենց իրավունքներին ու պարտականություններին, ինչպես նաև խնամքի հաստատության կանոններին ու կանոնակարգերին: Սակայն երեխաները խիստ հազվադեպ են բողոքում խնամքի հաստատության ծառայություններից, որովհետև բողոքարկման մեխանիզմը երեխաների համար հարմար և հեշտ կիրառելի չէ, այլ պահանջում է գրավոր բողոքը գցել «Բողոքների արկղը»: Խնամակալների/հոգաբարձուների կամ խնամատար ընտանիքներում խնամվող երեխաների կամ որդեգրված երեխաների համար բողոքարկման մեխանիզմ գոյություն չունի:

Ծառայությունների մատուցում

Առօրյա աշխատանքում սահմանված ընթացակարգերը ոչ միշտ են պահպանվում: Սա արդյունք է խնամքի համակարգում ներգրավված համապատասխան մասնագետների ոչ կանոնավոր կողմնորոշման ու վերապատրաստման: Դեպք վարողները, համայնքային սոցիալական աշխատողները, խնամակալության և հոգաբարձության մարմինները կամ հանձնաժողովները, մարզպետարանների սոցիալական աշխատողները, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, ոստիկանության անչափահասների արդարադատության հարցերով աշխատակիցներն ունեն իրենց պաշտոնի նկարագրերն ու հրահանգները պարտադիր ընթացակարգերի վերաբերյալ, որոնցով ուղղորդվում են երեխաներին այլընտրանքային խնամքի տեղավորելու համար կարիքների գնահատում, անհատական պլանների մշակում իրականացնելու և այլընտրանքային խնամքի անհրաժեշտությունը վերանայման համար: Սակայն, գործնականում միշտ չէ, որ ընթացակարգերը պահպանվում են: Արդյունքում երեխաները շատ հաճախ հայտնվում են խնամքի հաստատություններում ընտանեկան տիպի խնամքի ծառայություններ ստանալու փոխարեն: Ընտանիքներին աջակցող և ընտանիքներն ամրապնդող ծառայությունները, որոնք ուղղված են կանխարգելելու երեխաների ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանումը և խթանելու ընտանիքների վերամիավորումը, զարգացած չեն:

Դեպք վարողները և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները պատասխանատու են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված յուրաքանչյուր երեխայի անհատական հանգամանքների գնահատում իրականացնելու համար: Այդ գնահատման ժամանակ անհրաժեշտ է

հաշվի առնել երեխայի անմիջական անվտանգությունն ու բարեկեցությունը, ինչպես նաև նրա երկարաժամկետ խնամքն ու զարգացումը: Սակայն, ընթացակարգերը պահպանվում են միայն որոշ մարզերում, որտեղ իրականացվում է հաստատությունների վերակազմավորման ծրագիրը:

ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսվում է, որ խնամքի հաստատություններում գտնվող երեխաների անհատական աջակցության պլանները պետք է կանոնավոր կերպով վերանայվեն հաստատության սոցիալական աշխատողների կողմից (սահմանված պարբերականությամբ)՝ դիտարկելու մշտական ընտանեկան խնամքի տեղավորման հնարավորությունը (օր.՝ վերադարձ ընտանիք, ընդլայնված ընտանիք, որդեգրում կամ երկարաժամկետ խնամք խնամատար ընտանիքում): Սակայն գնահատման մասնակիցները փաստեցին, որ անհատական պլանների ոչ միշտ են վերանայվում:

Չկան այլընտրանքային խնամքի գործը փակելու հստակ սահմանված ընթացակարգեր, բացառությամբ շուրջօրյա հաստատություններից երեխաների դուրսգրման դեպքերի: Եվ թեև շատ կարևոր, սակայն նման ընթացակարգ չի նախատեսված նաև խնամատար ընտանիքից երեխայի դուրս գալուն:

Լիարժեք չեն նաև դեպք վարելու մասնագիտացված աջակցության ընթացակարգերը՝ խնամքի հաստատությունից դուրս բերվող հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար: ՀՀ ԱՍՀՆ խնամքի հաստատություններում կամ հատուկ դպրոցներում գտնվող հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն անհատական ուսումնական և (կամ) զարգացման պլաններ: Սակայն գնահատման խմբերը բացասական գնահատեցին հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքի վարման մասնագիտացված աջակցության որակը:

Արտակարգ իրավիճակներում առանց ծնողական խնամքի մնացած կամ ընտանիքից բաժանված երեխաներին հաշվառելու կամ գրանցելու և վերահսկելու ընթացակարգերը հետևյալն են՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները պատասխանատու են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին հայտնաբերելու, այդ երեխաների ռեեստրը վարելու, նրանց ծնողական խնամքից զրկված լինելու պատճառները գրանցելու և այդ երեխաների խնամքի տեսակը ընտրելու համար: Երեխայի մասին տեղեկատվությունն ու գործին առնչվող փաստաթղթերը փոխանցվում են համայնքային դեպք վարողին կամ մարզպետարանի համապատասխան բաժին, որտեղ երեխայի մասին բոլոր տվյալները մուտքագրվում են «Մանուկ» տեղեկատվական համակարգ: Սակայն երեխայի մասին ամբողջ տեղեկատվությունը պարունակող գործը երեխայի հետ չի փոխանցվում այլընտրանքային խնամքի մի տեսակից մյուսին՝ նրան տեղափոխելու դեպքում:

Այլընտրանքային խնամքի ծառայություն մատուցող պետական կամ պետական ֆինանսավորմամբ ծառայություն մատուցողկառույցները հաշվառված են և ունեն ծառայություն մատուցելու հավաստագիր՝ լիազոր մարմնի կողմից: Սակայն ոչ պետական և տարբեր կրոնական կառույցների կողմից գիշերօթիկ կամ ցերեկային խնամքի ծառայություններ մատուցող ոչ բոլոր կառույցներն են պաշտոնապես գրանցված և չեն վերահսկվում պետության կողմից: Ծառայություն մատուցողներին թույլտվություն տալու գործընթացը վերահսկվում է ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից՝ օրենքով սահմանված ստանդարտ չափանիշների հիման վրա:

Կադրեր/աշխատակազմ

Այլընտրանքային խնամք ստացող երեխաների հաշվով մեկ աշխատողի ծանրաբեռնվածության ստանդարտ շեմ (օր.՝ խնամքի համակարգում գտնվող երեխաների թվաքանակը յուրաքանչյուր աշխատողի հաշվով) սահմանված է միայն խնամքի հաստատությունների և խնամատար

ընտանիքների համար: Աշխատանքի ծանրաբեռնվածության նկարագրեր ունեն նաև պետական ֆինանսավորմամբ աշխատող ցերեկային խնամքի հաստատությունները: Մնացած կառույցների աշխատողները (բուժաշխատողներ, մանկավարժներ, նեղ մասնագետներ և այլն) այլընտրանքային խնամքի համակարգում գտնվող երեխաներին ծառայություններ մատուցում են, սակայն նրանց աշխատանքի նկարագրերում այլընտրանքային խնամքի համակարգում գտնվող երեխաներին խնամքի ծառայությունների մատուցումը հստակ նշված չէ:

ՄԱԳ և տեղեկատվական համակարգեր

ՀՀ ԱՍՀՆ-ը ունի ՄԱԳ սահմանված քաղաքականություն և պարբերաբար հավաքագրում է տվյալներ պետական ֆինանսավորմամբ իրականացվող խնամքի ծառայությունների՝ խնամատար ընտանիքներում, խնամքի հաստատություններում, ցերեկային խնամքի կենտրոններում, և ընտանիքից երեխաների բաժանման կանխարգելման և մանկատան շրջանավարտներին մատուցվող ծառայությունների որակը գնահատելու համար: «Մանուկ» տեղեկատվական համակարգը պարունակում է տեղեկատվություն պետության կողմից ֆինանսավորվող այլընտրանքային խնամքի համակարգում գտնվող երեխաների մասին: Այս տվյալները կարելի է ստանալ ըստ ազգային և մարզային մակարդակների և արտացոլում են պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի միջոցով տրամադրվող ֆորմալ այլընտրանքային խնամքի համակարգում գտնվող երեխաների թիվը: «Մանուկ» տեղեկատվական համակարգում առկա տվյալները նաև բացատրում են այլընտրանքային խնամքի համակարգում երեխաներին տեղավորելու պատճառները: Սակայն, չկա երկրում այլընտրանքային խնամքի համակարգում գտնվող բոլոր երեխաների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգ: Չկան տվյալներ երեխաների վերաբերյալ, որոնց աջակցում կամ խնամք են տրամադրում ոչ պետական միջոցների հաշվին, ինչպես նաև ոչ ֆորմալ այլընտրանքային խնամք ստացող երեխաների մասին: Բազմաոլորտային տեղեկատվության և տվյալների փոխանակում գործնականում տեղի չի ունենում:

Ընտանիքից երեխայի առանց անհրաժեշտության բաժանման կանխումը

ՄԱԿ-ի այլընտրանքային խնամքի ուղեցույցում առանձնացված է կանխարգելման երեք մակարդակ՝ առաջնային, երկրորդային և երրորդային կանխարգելման միջոցառումներ, որոնք ներառում են հիմնական սոցիալական ծառայությունների մատուցումը, սոցիալական արդարության ապահովումը և մարդու իրավունքների պաշտպանությունը: Հիմնական սոցիալական ծառայությունները՝ առողջապահություն, կրթություն և սոցիալական պաշտպանություն տրամադրվում են առողջության ապահովագրության, կրթության աջակցության, ծնունդների գրանցման, ֆինանսական աջակցության և այլն միջոցով: Կանխարգելումը ենթադրում է նաև ամուր սոցիալական պաշտպանության համակարգ, հատկապես այն ընտանիքների համար, որոնք սոցիալապես խոցելի են և խոցելի են մասնավորապես ունենալով բարձր ռիսկ հանձնելու իրենց երեխաներին հաստատություններ և միայն հիմնական սոցիալական ծառայությունների տրամադրմամբ նրանց խնդիրները չեն լուծվում: Երկրորդային մակարդակի կանխարգելման հիմնական սկզբունքներն են կարիքի գնահատումն ու նպատակային ծառայությունների մատուցումը, մինչդեռ երրորդային մակարդակը ներառում է ծառայություններ, որոնք կանխում են երեխաների վերադարձը խնամքի հաստատություններ՝ իրենց ընտանիքների խնամքի տակ վերադառնալուց հետո:

Հայաստանում ընտանիքներից երեխաների բաժանումը կանխարգելելը և առանց անհրաժեշտության հաստատություններում, ներառյալ հատուկ դպրոցներում նրանց տեղավորումը խիստ առաջնահերթ լուծում պահանջող հարց է և գտնվում է կառավարության, ՔՀԿ-ների և դոնոր համայնքի ուշադրության կենտրոնում:

Հոդված 36. Ծնողների իրավունքներն ու պարտականությունները

1. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

2. Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Գործող օրենսդրական դաշտը տալիս է որոշ հիմնական ուղղություններ իրենց ընտանիքներից երեխաների առանց անհրաժեշտության բաժանումը կանխելու համար, սակայն այդ դրույթները շատ ընդհանրական են և չեն տալիս հստակ հրահանգներ, թե ինչպես է պետք կանխարգելումն իրականացնել գործնականում: Բավարար չեն ընտանիքի ամրապնդմանն ուղղված ծառայությունները, հատկապես երեխաներից բաժանման վտանգի առջև կանգնած ընտանիքներին մասնագիտացված ծառայություններ մատուցող կառույցները: Բավարար չեն նաև համապատասխան կադրերը: Չկան որակի ստանդարտներ գոյություն ունեցող ծառայությունների համար: Ընտանիքներից երեխաների առանց անհրաժեշտության բաժանումը կանխարգելելու համար պետական բյուջեից հատկացումներ կատարվում են ֆինանսավորելու ցերեկային խնամքի կենտրոնները[6] և մեկ կանխարգելման ծրագիր, որն իրականացվում է «Առավոտ» հասարակական կազմակերպության կողմից Լոռու և Շիրակի մարզերում: Սոցիալական ապահովության երաշխիքները ներառում են պետական նպաստները[7] և հիմնական առողջապահական, կրթական և սոցիալական ծառայությունները[8], որոնք անուղղակիորեն նպաստում են կանխարգելելու առանց անհրաժեշտության երեխային բաժանումը ընտանիքից: Կանխարգելումը մշտադիտարկելու համար պահանջվող տվյալներ առկա են միայն այն ծառայությունների վերաբերյալ, որոնք ֆինանսավորվում են պետության կողմից կամ իրականացվում են պետության հետ համաֆինանսավորմամբ: Մնացած դերակատարները այս ուղղությամբ կատարվող միջամտությունների վերաբերյալ ոչ մի տեղեկատվություն չեն տրամադրում:

---

[6] Երեխայի ընտանիքից առանց անհրաժեշտության բաժանման կանխարգելումը և ընտանիքների վերավիավորմանը նպաստելը ամրագրված է պետության կողմից ստեղծված կամ պետական համաֆինանսավորմամբ գործող ցերեկային խնամքի կենտրոնների կանոնադրություններում: Նման ցերեկային կենտրոններ գործում են Գյումրիում և Երևանում 2005թ-ից, ինչպես նաև 2016-2017թթ-ին գիշերօթիկ հաստատությունների վերակազմավորման արդյունքում ստեղծված Կապանի և Նուբարաշենի ցերեկային կենտրոնները, պետական համաֆինանսավորմամբ գործող «Հույսի կամուրջ» ՀԿ 4 կենտրոնները Տավուշի մարզում, «Լիարժեք կյանք» ՀԿ և «Իմ ուղին» ՀԿ ցերեկային կենտրոնները Երևանում և Երևանի թիվ 92 մանկապարտեզին կից ստեղծված բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների ցերակային վերականգնողական կենտրոնը:

[7] Երեխայի ծննդյան միանվագ նպաստը, մայրության նպաստը, երեխայի խնամքի նպաստը, հաշմանդություն ունեցող երեխաների հաշմանդամության նպաստը, ընտանեկան նպաստը, որը տրամադրվում է անապահով երեխա ունեցող ընտանիքներին:

[8] Անվճար բժշկական ծառայությունները, որոնք տրամադրվում են 0-7 տարեկան երեխաներին, անապահովության գնահատման համակարգում գրանցված ընտաիքների մինչև 18 տարեկան երեխաներին, անվճար հանրակրթական ծառայությունները և ներառական կրթությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

Ընտանիքից երեխայի առանց անհրաժեշտության բաժանումը կանխարգելելու նպատակով ընտանիքներին աջակցելու և ամրապնդելու համար անհրաժեշտ ծառայությունները ստեղծելու, տրամադրելու և պահպանելու համար պահանջվող ֆինանսավորման գնահատում արվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի[9] կողմից 2010թ.-ին: ՅՈՒՆԻՍԵՖ-ի զեկույցում բերված են ընտանիքներին աջակցող համայնքային ծառայությունների, ինչպես օրինակ՝ ցերեկային խնամքի կենտրոններ, մասնագիտական խորհրդատվություն, աջակցություն ճգնաժամում գտնվող ընտանիքներին, ժամանակավոր ապաստարաններ, սոցիալ-հոգեբանական աջակցություն, անկախ խորհրդատուներ և այլն, ծախսերի նախահաշվարկներ: Այդ գնահատականը չի թարմացվել 2010 թվականից ի վեր:

Գծապատկեր 4. Ընտանիքից առանց անհրաժեշտության երեխաների բաժանման կանխարգելում բաժնի գնահատման արդյունքների պատկերը



Կառավարում և առաջնորդում

Վերանայված ՀՀ ընտանեկան օրենսգիրքը, ՀՀ օրենքը երեխայի իրավունքների մասին և ՀՀ օրենքը սոցիալական աջակցության մասին տրամադրում են երաշխիքների շրջանակ՝ պաշտպանելու յուրաքանչյուր երեխայի՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքը: Մի շարք որոշումներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնք ընդունվել են կառավարության կողմից 2014-2016 թթ. ՀՀ սոցիալական աջակցության մասին օրենքի կատարումն ապահովելու համար, կարգավորում են երեխաներին այլընտրանքային խնամքի ծառայություններ տեղավորելու, ուղղորդելու և կանխարգելելու մեխանիզմները: 2016թ. ՀՀ կառավարությունն ընդունեց N 36 արձանագրային որոշումը, որով հաստատեց 2016-2020թթ. միջոցառումների ծրագիրը՝ ապահովելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար այլընտրանքային խնամքի համակարգի զարգացման մասին հայեցակարգային փաստաթղթի իրականացումը: Միջոցառումների ծրագրով նախատեսվում է 2017թ.-ից մինչև 2019թ. ստեղծել մասնագիտական ծառայություններ և մեխանիզմներ ընտանիքներին աջակցելու և ընտանիքներից երեխաների առանց անհրաժեշտության բաժանումը կանխելու նպա-

[9] Towards Alternative Child Care Services in Armenia: Costing Residential Care Institutions and Community Based Services, 2010, UNICEF. ՅՈՒՆԻՍԵՖ-ի զեկույցը ներկայացնում է այլընտրանքային խնամքի ծառայությունների՝ երեխային և ընտանիքին աջակցող համայնքային ցերեկային կենտրոնների, բաժանման ռիսկ ունեցող ընտանիքներին տրամադրվող խորհրդատվական և աջակցության ծառայությունները, ժամանակավոր կացարանները ճգնաժամային իրավիճակների դեպքում հոգեբանա-սոցիալական աջակցության ծառայությունների և անկախ խորհրդատուի ծառայությունների ֆինանսավորման նախահաշվարկը:

տակով (կետ 3, ենթակետ 2): Սակայն կանխարգելմանն ուղղված առավել նպատակային քայլեր նախատեսված չեն: Այդպիսով, ըստ գնահատման թիմերի, կանխարգելման մեխանիզմները հստակ չեն կարգավորվում իրավական դաշտում: Դեռևս սահմանված չէ հստակ ընթացակարգ՝ բաժանման վտանգի առջև կանգնած ընտանիքների կարիքների գնահատման և ընտանիքի ամրապնդման և խորհրդատվական ծառայությունների տրամադրման համար: Չկան ընթացակարգեր՝ կարգավորելու ընտանիքներին ու երեխաներին ընտանեկան բռնության, ալկոհոլի և թմրանյութերի չարաշահման դեպքերում[10] տրամադրվող աջակցությունը: Այն դեպքերի համար, երբ երեխան արդեն հայտնվել է կյանքի դժվարին իրավիճակում, գործում են հստակ կանոնակարգեր և ծառայություններ:

Այս առումով առաջընթաց է ՀՀ ԱՍՀՆ-ի նախաձեռնությունը խնամքի հաստատությունները ցերեկային խնամքի կենտրոնների վերակազմավորելու վերաբերյալ: Նուբարաշենի գիշերային խնամքի հաստատությունը (Երևանի Երախաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպությունը) 2017թ.-ին վերակազմավորվել է որպես ընտանիքի և երեխայի մասնագիտացված աջակցության կենտրոնի: 2005 թվականից գործող ցերեկային խնամքի կենտրոնները Գյումրիում և Երևանի Աջափնյակ վաչական շրջանում նույնպես նախատեսված են խոցելի ընտանիքներին աջակցելու համար՝ տրամադրելով երեխաներին մեկանգամյա սնունդ, օգնելով դասապատրաստման ժամանակ և խթանելով երեխաների զարգացումը՝ սովորեցնելով արվեստ, երաժշտություն, սպորտ և այլն: Ցերեկային խնամքի տրամադրման կանոնակարգի համաձայն, կենտրոնները պետք է աշխատեն ընտանիքների հետ, զարգացնեն ծնողավարման հմտություններ և տրամադրեն հոգեբանական աջակցություն ընտանիքներից երեխաների բաժանումը կանխելու համար: Պետության կողմից ֆինանսավորվող ցերեկային խնամքի ծառայությունները նախատեսված են 6-18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ առանց ծնողական խնամքի մնացած, ծնողների խնամքից զրկվելու վտանգի տակ գտնվող, աճի և զարգացման համար անբարենպաստ և վտանգավոր կենսապայմաններում գտնվող երեխաների համար են:

Առողջապահության և կրթության բնագավառներում ծառայությունների մատուցումը կանոնակարգող օրենքներն ու ընթացակարգերը անմիջապես ուղղված չեն այլընտրանքային խնամքի տրամադրմանը և ընտանիքներից երեխաների բաժանումը կանխելուն: Սակայն, նորածինների սկրինինգը և զարգացման խանգարումների վաղ հայտնաբերումն ու հաշմանդամության կանխարգելմանն ուղղված միջամտությունները, հատուկ դպրոցների վերակազմավորումը և համընդհանուր ներառական հանրակրթության խթանումը քայլեր են, որոնք կանխում են երեխա-ընտանիք բաժանումն անուղղակիորեն:

Բոլոր խմբերը համաձայնեցին, որ համապատասխան պետական դերակատարները մինչև այժմ ստացել են խիստ սահմանափակ կողմնորոշում և վերապատրաստում՝ ընտանիքից երեխայի առանց անհրաժեշտության բաժանումը կանխելու պետական քաղաքականության և ռազմավարության իրականացման համար իրենց դերերի ու պատասխանատվության մասին: Բոլոր պետական գործակալությունները, մարզային, տարածքային և համայնքային կառույցները ներքին ցանցի միջոցով ստանում են ծանուցումներ և կառավարության կողմից ընդունված կամ հաստատված քաղաքական փաստաթղթերի օրինակները: Միջոցառումների ծրագրերը ներառում են բա-

[10] ՀՀ օրենքը ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018թ.-ի հունվարի 31-ին՝ գնահատման աշխատաժողովի ավարտից հետո:

ժիններ, որտեղ նշվում են պատասխանատու մարմինները կամ դերակատարները: Սակայն, պետական քաղաքականության և կանոնակարգերի գծով վերապատրաստումները կանոնավոր բնույթ չեն կրում: Միայն դեպք վարողներն են վերապատրաստվում ՀՀ ԱՍՀՆ, միջազգային և տեղական ՀԿ-ների օգնությամբ: ՀԿ ոլորտի մասնագետները կողմնորոշում և վերապատրաստում ստանում են միայն այն դեպքում, երբ համաֆինանսավորում են ստանում ՀՀ ԱՍՀՆ-ի, ԿԳՆ-ի հետ, կամ եթե գործում են դոնորների կողմից ֆինանսավորվող համապատասխան ծրագրեր: Առողջապահության և կրթության ոլորտների և ոստիկանության գլխավոր դերակատարները, ինչպես նաև տեղերում համայնքային ծառայություններ մատուցողները կարիք ունեն վերապատրաստման նոր պետական քաղաքականության և ընթացակարգերի գծով:

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները (ԽՀՀ) կարևորագույն դերակատարներ են, որոնք պատասխանատու են համայնքներում ընտանիք-երեխա բաժանումը կանխելու համար: Համաձայն իրենց կանոնադրության, հանձնաժողովները պատասխանատու են բաժանման վտանգի առջև կանգնած ընտանիքները վաղօրոք հայտնաբերելու և դեպքերը մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ ուղղորդելու համար, որպեսզի հետո դրանք ուղղորդվեն դեպք վարողներին՝ ինտեգրված սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով: Սակայն, ինչպես նշել են գնահատման խմբերը, ուղղորդման մեխանիզմը լավ չի գործում: Ոչ բոլոր ԽՀՀ-ներն են ստացել պատշաճ վերապատրաստում և կողմնորոշում իրենց դերերի ու պարտականությունների վերաբերյալ: Բացի դրանից, չկան կանոնակարգեր, որոնցում սահմանված է, թե ինչ է տեղի ունենում, երբ ԽՀՀ-ները չեն հետևում ընթացակարգին (իրենց կանոնադրություններին): Անհրաժեշտ է, որ կառավարությունն արմատապես կարգավորի վաղ հայտնաբերման և ուղղորդման մեխանիզմները:

Ծառայությունների մատուցում

Գնահատումը ցույց է տալիս, որ պետական քաղաքականությունը և օրենսդրական դաշտը մեծ մասամբ ներառում են ՄԱԿ-ի ուղեցույցով նախատեսված որոշակի ծառայությունների մատուցումը ընտանիք-երեխա առանց անհրաժեշտության բաժանումը կանխելու նպատակով, բացառությամբ հատուկ ծառայությունների, որոնք ուղղված են ծնողավարման հմտությունների բարելավմանը, բաժանումը կանխելու համար ընտանիքի տնտեսական ամրապնդմանը, և անչափահաս ու հաշմանդամություն ունեցող ծնողների համար ծառայությունների մատուցմանը: Առողջապահության և կրթության բնագավառներում մատուցվող ծառայությունները, որոնք անուղղակիորեն նպաստում են ընտանիքից երեխաների բաժանման կանխարգելմանը, իրենց ծածկույթով խիստ սահմանափակ են՝ ռեսուրսների բացակայության պատճառով:

Երեխայի վաղ զարգացման և խնամքի ռազմավարություն գոյություն ունի միայն կրթության ոլորտում և այն չի ներառում դրույթներ 0-3 տարեկան երեխաների համար[11]: Արդյունքում այս տարիքային խմբի համար նպատակային կանխարգելման ծառայությունները բավականաչափ զարգացած չեն: Նախադպրոցական կրթության մեջ 0-6 տարեկան երեխաների ընդգրկվածությունը կազմում է մոտ 35%: Մարզերի միջև կա հսկայական տարբերություն ծառայությունների ծածկույթի առումով. Երևանն ունի ավելի լայն ծածկույթ՝ անվճար նախադպրոցական կրթության ծառայու-

[11] Կառավարության միջոցառումների ծրագրերում 0-3 տարեկան երեխաների համար խնամքի և կրթության ծառայություններն առաջնահերթություն չեն: Նախադպրոցական կրթության մասին օրենքը չի կարգավորում մսուրների գործունեությունը:

թյուններով: Նախադպրոցական և վաղ տարիքի երեխայի խնամքի ծառայությունների մատուցումն ավելի սահմանափակ է հեռավոր և բարձր լեռնային սահմանային համայնքներում: Այդ համայնքներում ընտանիքները, որտեղ կան հաշմանդամություն ունեցող երեխաներ, հազվադեպ են օգտվում երեխայի վաղ զարգացման և խնամքի ծառայություններից, քանի որ չկան մասնագետներ, որոնք կարող են աշխատել նման ընտանիքների հետ և աջակցել նրանց: Մի քանի տեղական և միջազգային ՀԿ-ներ մարզերում ունեն վաղ մանկական տարիքից զարգացման ծրագրեր ունեցող ցերեկային խնամքի կենտրոններ, որոնք ներառում են աջակցության ծառայություններ այն ընտանիքներին, որտեղ կան հաշմանդամություն ունեցող երեխաներ: Սակայն այս ծառայությունների մատուցման ծածկույթը սահմանափակ է, քանի ոչ բոլոր մարզերում կան նման կենտրոններ:

Կրթական ծառայությունների մատչելիությունը Հայաստանում համընդհանուր է: Սկսած 2014թ.-ից, կառավարությունն ընդունել է համընդհանուր ներառական հանրակրթության քաղաքականություն, և ներառական դպրոցների ցանցն ընդլայնվում է: Այդ դպրոցներում գործող բազմամասնագիտական խմբերը տրամադրում են մանկավարժահոգեբանական աջակցության, ծնողավարման հմտությունների զարգացման և այլ ծառայություններ հաշմանդամություն և հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների ծնողներին: Ուսումնական տարվա սկզբին խոցելի ընտանիքների երեխաներն ստանում են աջակցություն գրենական պիտույքների և դպրոցի հետ կապված այլ պարագաների ձևով: Հանրակրթական դպրոցներում սովորող հաշմանդամություն կամ հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների կրթության համար հատկացված ֆինանսավորումը 4 անգամ ավելի է մյուս երեխաների հետ համեմատած: Սակայն, ուսուցչական կազմի սահմանափակ կարողությունների և մասնագետների պակասի պատճառով (լոգոպեդներ, հոգեբաններ, հատուկ ուսուցիչներ և սոցիալական մանկավարժներ) կարիքները մնում են չբավարարված հատկապես մարզերում: Չկա կանոնակարգ և համակարգ՝ հայտնաբերելու դպրոցից դուրս մնացած երեխաներին:

Տնտեսական վիճակի ամրապնդմանը միտված ծառայությունները չափազանց քիչ են և սահմանափակ՝ ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով: Զբաղվածության պետական գործակալությունն առաջարկում է աշխատաշուկայի որոշ ակտիվ ծրագրեր՝ խոցելի և շուկայում անմրցունակ բնակչության համար: Այս ծրագրերը ներառում են վերապատրաստում եկամտաբեր գործունեությամբ զբաղվելու ուղղությամբ: Մի շարք ՀԿ-ներ նույնպես կազմակերպում են խոցելի և անապահով ընտանիքների կարողությունների զարգացում սեփական եկամտի աղբյուր ձեռք բերելու նպատակով: Սակայն այս բոլոր նախաձեռնությունները հստակ կապված չեն ընտանիքից երեխայի առանց անհրաժեշտության բաժանումը կանխելու ռազմավարությանը: Ընտանեկան նպաստների պետական համակարգը տրամադրում է դրամական աջակցություն անապահով ընտանիքներին, սակայն միջոցները սուղ են պահանջները բավարարելու համար, իսկ եղած ֆինանսավորումը բավարար չէ շահառուներին աղքատությունից դուրս բերելու համար[12]:

Առողջապահական ծառայությունների մատչելիությունը – հիմնական առողջապահական ծառայություններն անվճար են միայն 0-7 տարեկան երեխաների համար և հստակ կապված չեն կանխարգելման քաղաքականության հետ: Պոլիկլինիկաների մանկաբույժները պատասխանատու են իրենց սպասարկման տարածքներում ապրող երեխաների առողջական վիճակի և զարգաց-

[12] Ընտանեկան նպաստների համակարգում ներգրավված է աղքատ բնակչության մեկ երրորդը միայն: Իսկ նպաստները կապված չեն կենսապահովման նվազագույնի հետ և բավարար չեն ապահովելու ընտանիքի նվազագույն կարիքները: ՀՀ ԱՎԾ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը տարեկան հաշվետվություններ:

ման պայմանների կանոնավոր վերահսկողություն իրականացնելու համար, ծնողներին, հատկապես զարգացման խանգարումներ ունեցող երեխաների, խորհրդատվության տրամադրելու և այնպիսի դեպքերի մասին հայտնելու համար, երբ երեխաները զրկված են համապատասխան խնամքից կամ լքված են: Նորածինների վաղ բժշկական սկրինինգի ծառայությունները կանխարգելում են ի ծնե բուժելի խանգարումների զարգացումը և կանխում երեխայից հավանական հրաժարումը հաշմանդամության պատճառով: Սակայն, զարգացման հապաղում ունեցող երեխաներին տրամադրվող առողջապահական և հատկապես վերականգնողական ծառայությունների դիմաց գանձվող վճարների պատճառով այդ ծառայություններն անմատչելի են դառնում անապահով ընտանիքների համար:

Աջակցության և խնամքի ծառայություններ միայնակ կամ դեռահաս ծնողներին և նրանց երեխաներին – միայնակ մայրերն ունեն ընտանեկան նպաստ ստանալու իրավունք, իսկ միայնակ մայրերի երեխաներին տրամադրվում են զեղչեր կրթության և զարգացմանն ուղղված ծառայությունների համար: Միևնույն ժամանակ հատուկ ծառայություններ անչափահաս ծնողների և նրանց երեխաների համար չկան, բացառությամբ որոշ կենտրոնների, որտեղ կարող են ժամանակվոր աջակցություն տրամադրել անօթևան մնացած անչափահաս մայրերին: Նման դեպքերի համար օրենքով նախատեսվում է խնամակալություն: Այս խմբի ծնողների և նրանց երեխաների համար ուրիշ ոչ մի քաղաքականություն կամ կանոնակարգ գոյություն չունի:

Սոցիալ-հոգեբանական աջակցություն երեխաներին և խնամատարներին տրամադրվում է դպրոցներում, ցերեկային խնամքի կենտրոններում և տարբեր համայնքային ծառայությունների կողմից, սակայն այդ ծառայությունները կապված չեն կանխարգելման նախաձեռնություններին և խիստ հազվադեպ են Երևանից դուրս գտնվող համայնքներում:

Ալկոհոլի և թմրանյութերի չարաշահման դեմ պայքարի հարցերով հիմնականում զբաղվում է ոստիկանությունը: Չկան ճգնաժամային իրավիճակներում գտնվող ընտանիքների վաղ հայտնաբերման հստակ կանոնակարգեր, ինչպես նաև կանխարգելման ծառայություններ: ԽՀՀ-ները պատասխանատու են այդպիսի կանխարգելման ծառայությունների մատուցման համար, սակայն գործնականում սա խիստ հազվադեպ է տեղի ունենում:

Ժամանակավոր խնամքի ծառայությունների (Respite service) մատուցումն ընդունված պրակտիկա չէ Հայաստանում: Ժամանակավոր ծառայություններ մատուցվում են միայն որոշ ՀԿ-ների կողմից իսկ օրենքով հստակ կարգավորված չէ երեխային ընտանիքից առանց անհրաժեշտության բաժանման դեպքում նման ծառայությունների տրամադրումը:

Հաշմանդամություն ունեցող ծնողների կարողությունների զարգացումն օրենսդրության մեջ չի դիտվում որպես առանձին ծառայություն: Հաշմանդամություն ունեցող ծնողներն իրավունք ունեն ստանալու հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայություններ՝ նպաստներ կամ կենսաթոշակ, անվճար բժշկական աջակցություն պոլիկլինիկաներում և որոշ առողջապահական ծառայություններ: Սակայն կանխարգելման քաղաքականության մեջ դրանք չեն սահմանվում որպես միջոցառումներ, որոնք ուղղված են աջակցելու հաշմանդամություն ունեցող ծնողներին:

Մասնագիտացված ծառայություններ (առողջապահական, կրթական և այլն)՝ աջակցելու հաշմանդամություն ունեցող երեխաներին, որպեսզի նրանք ապրեն ընտանիքներում, մատուցվում են ներառական հանրակրթական դպրոցների և մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների և ցերեկային կենտրոնների կողմից: Բազմամասնագիտական թիմերը, որոնք գործում են հանրակրթական դպրոցներում և սահմանափակ թվով մանկապարտեզներում, ցուցաբերում են մասնագիտացված աջակցություն երեխաներին և նրանց ընտանիքներին: Համայնքային

վերականգնողական և ցերեկային խնամքի մասնագիտացված ծառայություններ ստեղծվում են պետություն-մասնավոր համագործակցությամբ: Սակայն ծառայությունների ծածկույթը խիստ փոքր է՝ ընդամենը 23 կենտրոն ամբողջ երկրում[13], իսկ դրանց հետ կապված միջոլորտային համագործակցությունը՝ թույլ: Կա մասնագիտացված ծառայությունների մատուցման կարիք հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող երեխաների ծնողներին:

Կալանավայրում ծնված երեխաներին (ծնվել են մոր բանտարկված լինելու ժամանակ) **մատուցվող ծառայություններն** օրենքով կանոնակարգվում են: Երեխաները ծնողի հետ մնում են մինչև երեք տարեկան դառնալը: Մայրերին տրամադրվում են բոլոր անհրաժեշտ ծառայությունները: 3 տարեկանից հետո երեխաներին տեղավորում են շուրջօրյա խնամքի հաստատություններում:

Որակի ստանդարտները ընտանիքի բաժանումը կանխելուն միտված ծառայությունների առումով վատ են սահմանված. բոլոր մասնագետների համար կան պաշտոնի նկարագրեր, սակայն բացի դեպք վարողներից, մյուս մասնագետների պաշտոնների նկարագրերում չկան հատուկ դրույթներ՝ ուղղված ընտանիքից երեխայի բաժանումը կանխելուն: Ծառայությունների մատուցման ստանդարտներ սահմանված են միայն այն ծառայություն մատուցողների համար, ովքեր աշխատում են պետության կողմից ֆինանսավորվող կազմակերպություններում: ՀԿ-ները սահմանում են իրենց ներքին ստանդարտներն ու չափանիշները:

Մշտադիտարկման մեխանիզմներն ընտանիքն ամրապնդելու և աջակցության ծառայությունների բարձր որակով տրամադրումն ապահովելու համար խիստ սահմանափակ են: Դրանք գոյություն ունեն միայն պետական կառույցների կողմից տրամադրվող կամ պետպատվերի շրջանակներում ֆինանսավորվող ծառայությունների համար: Ծառայությունների մշտադիտարկումը տեղի է ունենում միայն ստուգիչ այցերի ձևով՝ նախարարություններից, կառավարության կամ նախագահի վերահսկողական պալատներից պետական դրամամիջոցների օգտագործումն ու ընթացակարգերի կատարումը աուդիտի ենթարկելու նպատակով: Քանի որ կանխարգելման ծառայությունների համար սահմանված չեն որակի նվազագույն ստանդարտներ, աուդիտային այցերի ժամանակ ուշադրությունը կենտրոնացվում է միայն ֆինանսական և գնումների վերաբերյալ փաստաթղթերի վրա: Չկան մեխանիզմներ ոչ պետական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները կանոնակարգելու համար:

Ծառայությունների մատուցման պետական ընթացակարգերը միշտ չէ, որ իրատեսական են, որպեսզի ծառայություն մատուցողներն ապահովեն բարձր որակ: Օրինակ՝ օրենսդրությամբ պահանջվում է, որ դեպք վարողի կողմից երեխաների և նրանց ընտանիքների համար կատարվի կարիքի գնահատում երեխայի մասին տեղեկություն ստանալուց հետո 3 օրվա ընթացքում: Միշտ չէ, որ հնարավոր է համակողմանի գնահատում կատարել 3 օրվա ընթացքում: Հաճախ դեպք վարողները կարողանում են համապատասխան համայնք այցելել միայն երկրորդ օրը և իրենց տրամադրության տակ ունենում են միայն մեկ այց՝ եզրակացություն կատարելու համար: Նրանք ստիպված են լինում երեխայի համար անհրաժեշտ ծառայությունների մասին հանձնարարականները ուղարկել երրորդ օրը: Այս դրույթը սահմանափակում է դեպք վարողների գործողությունները և բացասական ազդեցություն է ունենում գնահատման որակի և երեխայի շահերից բխող քայլեր նախաձեռնելու վրա:

[13] Ըստ Սոցիալական մեկ պատուհան կայքի. http://epension.am/am/one_window/one_window_childrens_care

Կադրեր/աշխատակազմ

Բոլոր խմբերը եկան համաձայնության, որ կանխարգելման ծառայություններում ներգրավված առողջապահության բնագավառի մասնագետները, մանկավարժական կազմը և նեղ մասնագետները, ովքեր աշխատում են պետության կողմից ֆինանսավորվող առողջապահական և կրթական հաստատություններում, սոցիալական ոլորտի պաշտոնյաները, համայնքային սոցիալական աշխատողները և դեպք վարողներն ունեն հստակ սահմանված որակավորումների պահանջներ և պաշտոնի նկարագրեր, որոնք համապատասխանում են նրանց դերերին ու պարտականություններին: Սակայն, այդ սահմանված պահանջները չեն ներառում կանխարգելման հետ կապված դերերի ու պարտականությունների և որակավորման պահանջներ՝ այլընտրանքային խնամքի ծառայությունների համատեքստում: ՀԿ աշխատողների և թերապիստների համար նույնպես կան որակավորման ստանդարտների պահանջներ, սակայն այդ ստանդարտները սահմանվում են ներքին կարգով և չեն կարգավորվում պետության կողմից: Երեխաների պաշտպանության մասնագետների, սոցիալական ապահովության և համայնքային զարգացման պատասխանատուների մասով գնահատումը ցույց է տալիս, որ կա պահանջվող որակավորումներ ունեցող մասնագետների առկայության մեծ տարբերություն ազգային և համայնքային մակարդակներում: Համայնքային զարգացման պատասխանատուները, որոնք ԽՀՀ անդամներ են, հստակ սահմանված որակավորումներ չունեն: Ընդհանուր առմամբ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար կան աշխատանքների նկարագրեր և միջոցառումների իրականացման ընթացակարգեր[14], սակայն հանձնաժողովների անդամների համար որակի ստանդարտներ և պաշտոնի նկարագիր չկան:

Գնահատումը ցույց է տալիս, որ երկրում չկան դեռահասների և **երիտասարդների հարցերով որակավում ունեցող մասնագետներ**, մինչդեռ խիստ մեծ է մասնագետների կարիքը, որոնք կարող են աշխատել դեռահասների հետ:

ՄԵԳ և տեղեկատվական համակարգեր

Համապատասխան նախարարությունները հավաքում են տվյալներ, որոնք իրենց անհրաժեշտ են պետության կողմից ֆինանսավորվող ծառայություններ մատուցողների ծրագրերի և միջոցառումների կանոնավոր մշտադիտարկման համար: ՀՀ ԱՍՀՆ-ը հիմնել է ՄԵԳ համակարգ և իրականացնում է ցերեկային խնամքի կենտրոնների և «Առավոտ» ՀԿ-ի աշխատանքների ամենամյա գնահատումներ: ՀՀ ԱՍՀՆ-ը կանխարգելման ծառայությունների մշտադիտարկման և գնահատման նպատակով շահառուների շրջանում անցկացնում է նաև քանակական հարցումներ: Սակայն, չկան հստակ ցուցանիշներ և տվյալներ կանխարգելման ծառայությունների որակը վերահսկելու համար: Կանխարգելման ծառայությունների առումով, միջգերատեսչական կապը ու տեղեկատվության փոխանակումը լավ կանոնակարգված չէ: ՀԿ-ների և ընտանիքների բաժանումը կանխելու համար աջակցություն և ծառայություններ մատուցող այլ հիմնական դերակատարների ունեցած տվյալները չեն հավաքագրվում և չեն օգտագործվում պետության կողմից:

Առկա տվյալներից հնարավոր է ընտանիքների աջակցության ծառայությունների կամ ծրագրերի վերաբերյալ տվյալներն առանձնացնել ըստ սեռի, տարիքի, երեխայի կրթական կարգավիճակի, մարզի և հաշմանդամության կարգավիճակի, բայց ոչ ըստ հաշմանդամության տեսակի:

[14] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի հունվարի 31-ի թիվ 12-Ա / 1 հրամանը խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին.

Բացի այդ, չեն անցկացվում տվյալների որակի ապահովման միջոցառումներ, քանի որ չկան համապատասխան կարողություններ:

Կանխարգելման ծրագրերի ՄևԳ-ի հետ կապված համապատասխան մասնագետների դերերն ու պարտականությունները սահմանված են միայն ՀՀ ԱՍՀՆ-ի շրջանակում: Մյուս ոլորտում ներգրավված նախարարություններում այդ դերերն ու պարտականություններն ընդհանրապես սահմանված չեն: Դրանք հստակ բաշխված չեն նաև պետական և ոչ պետական դերակատարների միջև:

Սոցիալական նորմեր և գործելաոճ

Միջոցառումները, որոնք նպատակաուղղված են կարևորելու երեխային ընտանիքից առանց անհրաժեշտության բաժանումը կանխարգելելու առաջնահերթությունը՝ երեխային շուրջօրյա խնամքի հաստատություն կամ այլընտրանքային խնամքի այլ ձևեր հանձնելու փոխարեն, կանոնավոր չեն իրականացվում և ճիշտ չեն թիրախավորվում: Նույնիսկ եթե լրատվամիջոցներով լինում են հաղորդումներ, որոնք ներկայացնում են ընտանիքի բաժանումը կանխելուն ուղղված կառավարության նախաձեռնությունները, ապա դրանք բավարար չեն հասարակական նորմերը փոխելու համար: Անհրաժեշտ է մշակել հանրային իրազեկման ռազմավարություն, հասարակական կարծիքի ձևավորման և հանրային ակտիվության բարձրացման քարոզարշավներ, որոնք նպատակաուղղված կլինեն երեխա-ընտանիք առանց անհրաժեշտության բաժանումը կանխելուն: Կարևոր է հանրությանն իրազեկել հաջողված պատմությունների մասին:

Օրենսդրական նախագծերը դրվում են համապատասխան նախարարությունների կայքերում՝ հանրային քննարկումների համար: Բացի այդ, հաճախ կազմակերպվում են բաց քննարկումներ, հանրային լսումներ ՀՀ կառավարության որոշումների ու օրենքների նախագծերը քննարկելու համար: Սակայն, ընտանիքների ամրապնդման և կանխարգելման սկզբունքների ձևավորման հարցերի շուրջ քննարկումներ չեն կազմակերպվել:

Ֆինանսավորումը

Ֆինանսավորման միջոցները սուղ են և սահմանափակում են կանխարգելման ծառայությունների ստեղծմանն ու կանոնակարգմանն ուղղված միջոցառումների շրջանակն ու ծածկույթը: Թեև ՀՀ կառավարության այլընտրանքային խնամքի համակարգի ձևավորման ռազմավարության մեջ մանրամասն ներկայացվում են անհրաժեշտ այն ծառայությունների բացակայությունը, որոնք կարևոր են ընտանիքների բաժանումը կանխարգելելու համար, կառավարության սահմանափակ ֆինանսական միջոցները չեն բավականացնում բոլոր պահանջվող ծառայությունները ցանկալի ծածկույթով և ծավալով մատուցելու համար: Երեխային ընտնիքից առանց անհրաժեշտության բաժանումը կանխելու համար բյուջեով նախատեսված ուղղակի հատկացումները ներառում են «Առավոտ» ՀԿ-ի, ցերեկային խնամքի կենտրոնների ֆինանսավորումը և «Հույսի կամուրջ», «Լիարժեք կյանք», «Իմ ուղին» ՀԿ-ների և Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի No 92 մանկապարտեզի տարածքում գտնվող Հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնողական կենտրոնի համար համաֆինանսավորումը: Պետական բյուջեից կանխարգելման ծառայությունների համար հատկացված ֆինանսական միջոցները մշտապես տրամադրվում և ծախսվում են, սակայն, այդ միջոցները բավարար չեն, և անհրաժեշտ կլինի դրանք ավելացնել:

Միջնաժամկետ ծախսային ծրագրով պահանջվում է, որ նախարարությունները տրամադրեն ֆինանսավորման կանխատեսումներ: Ծախսերի այդ նախահաշվարկներն արվում են խիստ

մակերեսային, առանց տեղերում վերլուծությունների և գնահատումների: Հաշվարկները հիմնվում են առկա միջոցների՝ ծրագրերի միջև ընթացիկ բաշխման վրա և ոչ թե արվում են ըստ ծառայությունների կարիքի:

ՀՀ ԱՍՀՆ-ի կամ այլ նախարարությունների համար հստակ կանոնակարգ չկա, որը թույլ կտա վերահսկել մասնավոր կամ դոնորների կողմից աջակցվող ծրագրերը, երբ դրանք չեն իրականացվում նախարարությունների հետ փոխըմբռնման հուշագրերի շրջանակում: Բարեգործական ծրագրերը ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովում գրանցվում են:

Անհրաժեշտ է, որ մշակվի ընտանիքների առանց անհրաժեշտության բաժանման կանխարգելման առանձին քաղաքականություն և հստակ կանոնակարգ, ինչպես նաև կատարվեն անհրաժեշտ ֆինանսավորման գնահատականներ՝ առաջարկելու պետական բյուջեից համապատասխան հատկացումներ կանխարգելման ծրագրերի իրականացման համար:

Խնամատարություն

Խնամատարության համակարգը Հայաստանում անցել է զարգացման երեք փուլ՝

- *1999 թ. մանկատան ինն երեխա տեղավորվել է խնամատար ընտանիքներում երկրի տարբեր մարզերում Քրեթեյի (Ֆրանսիա) հայկական համայնքի «Մանկատներում խնամվող 3-12 տարեկան երեխաների խնամքը և դաստիարակության կազմակերպումը խնամատար ընտանիքում» ծրագրի կողմից, որն իրականացվեց Քրեթեյի քաղաքապետարանի, Քույր քաղաքների կոմիտեի և ՀՀ ԱՍՀՆ-ի միջև համագործակցության համաձայնագրի շրջանակներում:*
- *2004 թ. ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) երեխաների աջակցության կենտրոնի ջատագովությամբ ու խթանմամբ 30 երեխա տեղավորվել է 25 խնամատար ընտանիքներում, որոնց հետ տարվել է վերապատրաստման և կողմնորոշման աշխատանք նախքան երեխաներին իրենց տուն ընդունելը:*
- *2008 թ. կառավարությունը մտցրել է բյուջեի նոր տող 25 երեխայի խնամատար ընտանիքներում խնամելու համար:*

Մինչև 2017 թ. պետական բյուջեի տարեկան հատկացումները բավարարում էին միայն 25 երեխայի խնամքը խնամատար ընտանիքներում կազմակերպելու համար: Սա հնարավորություն տվեց 2008թ.-ից մինչև 2017թ. ընկած ժամանակահատվածում խնամատար ընտանիք հանձնել միայն 80 երեխա: Երեխաներին, որոնց 18-ը լրանում էր և դուրս էին գալիս խնամատար ընտանիքներում տրամադրվող խնամքի ծառայությունների համակարգից, փոխարինելու էին գալիս մանկատան ուրիշ երեխաներ: Ծառայության ընդլայնումը սահմանափակվում էր նաև օրենսդրական դաշտով: Ընտանեկան օրենսգրքի պահանջով խնամատար ընտանիք կարող էին հանձնվել միայն լքված կամ ծնողազուրկ երեխաները:

2016 թ., հետևելով խնամքի հաստատությունների վերակազմավորման ՀՀ կառավարության ծրագրին, ՀՀ ԱՍՀՆ-ը նախաձեռնեց խնամատարության զարգացման կանոնակարգերի մշակման մի նոր շրջան: Դոնորների և ՔՀԿ-ների աջակցությամբ երկրում ընտրվեց, կողմնորոշում ու վերապատրաստում անցավ 80 խնամատար ընտանիք, որպեսզի կարողանան իրականացնել երեխաների խնամքը:

Գնահատման աշխատաժողովի աշխատանքները զուգադիպեցին խնամատարության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների փոփոխություններին, և բոլոր խմբերը բարձր գնահատական տվեցին խնամատար ընտանիքներում խնամքի տրամադրման համար հատկացված ֆինանսավորման աննախադեպ ավելացմանը: Բացի այդ, 2018թ. հունվարին ՀՀ ընտանեկան օրենսգրքի մեջ կատարված փոփոխությունները ՀՀ կառավարությանը հնարավորություն տվեցին ավելի շատ երեխա հանձնել խնամատար ընտանիք: Խնամատարության բնագավառում փոփոխությունները հնարավոր դարձան շնորհիվ ՀՀ ԱՍՀՆ կողմից 2016 թ.-ին 25 խնամատար ընտանիքներում իրականացված մշտադիտարկման և գնահատման արդյունքների: Այդուհանդերձ, խմբերը համաձայնեցին, որ կառավարության որոշման նոր նախագիծը դեռևս կարիք ունի լրամշակման, որպեսզի բավարարի ՄԱԿ-ի այլընտրանքային խնամքի ուղեցույցի պահանջները, հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաներին խնամատար ընտանիքներում խնամելու մասով: Անհրաժեշտ է նաև վերապատրաստել համայնքներում գործող ԽՀՀ-ներին, որոնք պատասխանատու են խնամատարության հանձնման և խնամատար ընտանիքներում խնամվող երեխաներին վերահսկողության տակ պահելու և խնամքի որակը մշտադիտարկելու համար: Պետք է մշակվեն վերապատրաստման մեխանիզմներ, որոնք նպատակաուղղված կլինեն խնամատար ընտանիք երեխայի հանձնումը մշտադիտարկելու և աջակցելու աշխատանքներում ներգրավված աշխատողների կարողությունների զարգացմանը: Պետք է մշակել նաև նոր մեխանիզմ խնամատար ընտանիքներում տարվող խնամքի ՄևԳ-ի և խնամատար ընտանիքներ կատարվող մշտադիտարկման և վերահսկողական այցերի համար: Լայն հասարակությունն այնքան էլ իրազեկ չէ խնամատարության մասին: Չկա և, հետևաբար, պետք է մշակել նաև հանրային իրազեկման և քարոզչության ռազմավարություն, որը կխթանի խնամատար ընտանիքներում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին պատշաճ խնամքի տրամադրումը:

ՀՀ ընտանեկան օրենսգիրք՝ հոդված 139: Երեխայի (երեխաների) տեղավորում խնամատար ընտանիքում

Կետ 3. Երեխային (երեխաներին) խնամատար ընտանիք հանձնելն իրականացվում է՝ հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը:

Կետ 4. Խնամատար ընտանիք հանձնված երեխան (երեխաները) պահպանում է իրեն հասանելիք ալիմենտի, կենսաթոշակի, նպաստի և սոցիալական այլ վճարումների նկատմամբ իրավունքը, ինչպես նաև բնակելի տարածության սեփականության, օգտագործման իրավունքը, իսկ բնակելի տարածության բացակայության դեպքում՝ բնակարանային օրենսդրությանը համապատասխան՝ բնակելի տարածություն ստանալու իրավունքը:

Գծապատկեր 5. Խնամատարություն բաժնի գնահատման արդյունքների պատկերը



Կառավարում և առաջնորդում

ՀՀ կառավարության 2016թ.-ի մարտի 10-ի No 9 արձանագրային որոշմամբ հաստատվել է հայեցակարգային փաստաթուղթը[15], որը կոչված է բարելավելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատար ընտանիքներում տրամադրվող խնամքը: Խնամատարության մասին նոր իրավական շրջանակի և կառավարության որոշման նախագիծը մշակվել է 2017թ.-ին և դեռ ենթակա է կառավարության կողմից հաստատման (նախ պետք է ընդունվեն Ընտանեկան օրենսգրքում արված փոփոխությունները): Խնամատարության մասին կառավարության որշման նախագիծը ներառում է ՄԱԿ-ի ուղեցույցի բազմաթիվ կարևորագույն դրույթներ, ինչպես օրինակ՝ խնամատար ընտանիքներին և երեխաներին խնամքի մասնագիտացված նախապատրաստման, խնամատարներին հավաստագրի տրամադրման և գրանցման, նախքան խնամատարության հանձնումը և՛ խնամատարներին, և՛ երեխաներին աջակցության և խորհրդատվության տրամադրման մասին դրույթները, ինչպես նաև երեխաներին խնամատար ընտանիք հանձնելիս երեխաների կարծիքը հաշվի առնելու և խնամատար ընտանիք հանձնված երեխաների մշտադիտարկումն իրականացնելու մասին դրույթները: Այն սահմանում է խնամատար ընտանիքում իրականացվող խնամքի չորս տեսակ՝ ընդհանուր, մասնագիտացված, ճգնաժամային և արձակուրդային: Այն նաև սահմանում է խնամատար ընտանիքների և երեխաների համադրման համար չափանիշներ մշակելու կարիքը: Նոր օրենսդրությունը պարունակում է դրույթներ վարչական վարույթում ծնողների և խնամատարների մասնակցության մասին, սակայն չկան մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան աջակցություն և խորհրդատվություն տրամադրել երեխաներին և խնամատար ծնողներին խնամատար ընտանիքում երեխայի մնալու ընթացքում: Երեխաներին չի տրամադրվում նաև աջակցություն խնամատարությունից դուրս գալուց հետո: Բացի այդ սահմանված չեն բողոքարկման մեխանիզմներ: Կառավարության որոշման նախագիծը պարունակում է ընդհանրական դրույթ հաշմանդամություն ունեցող երեխաների մասնագիտացված աջակցության մասին, որտեղ նրանք անվանվում են *առողջության խնդիրներ ունեցող երեխաներ,* իսկ ընտանիքները, որոնք համաձայնվում են հանձն առնել հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքը կամ «*մասնագիտացված խնամատար ընտանիքը*» ստանում է 30%-ով ավելի ֆինանսական աջակցություն, քան մյուս խնամատար ընտանիքները:

Խնամատար ընտանիքների հետ պայմանագիր են կնքում իրենց տարածքում գտնվող համայնքային խնամակալության և հոգաբարձության մարմինները: Խնամակալության և հոգաբարձության մարմինները պատասխանատու են համայնքային սոցիալական աշխատողների հետ դեպքերը քննարկելու և խնամատար ընտանիքներին գնահատելու, խնամատար ընտանիք հանձնելու վերաբերյալ առաջարկություններ անելու և կանոնավոր մշտադիտարկման այցելություններ կատարելու համար՝ ապահովելով, որ խնամատար ընտանիքը կատարի պայմանագրի պահանջները: Մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները պատասխանատու են խնամատար ընտանիքները գրանցելու և թույլտվություն տրամադրելու համար: Այդ բաժինները պատասխանատու են նաև խնամատար ընտանիքների և երեխաների կարիքները գնահատելու և խնամատար ընտանիքում տարվող խնամքի տեսակի ու ժամանակահատվածի մասին եզրակացություն տալու համար: Սակայն, կարիքի գնահատումը և խնամատարության մասին եզրակացությունը նշված են նաև սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների դեպք վարողների պարտականությունների շարքում: Նման

[15] Երեխաների խնամակատարության կազմակերպման ընթացակարգերի բարելավման հայեցակարգ,10 մարտի, 2017թ. http://www.irtek.am/views/act.aspx?aid=84409&m=%27%27&sc=%20

վերածածկի արդյունքում երկու տարածքային մարմինների միջև առաջանում է աշխատանքների կրկնություն և վատ համակարգում:

Թեև գնահատման աշխատաժողովի ընթացքում կառավարության նոր որոշումը դեռևս չէր ընդունվել, գնահատման թիմերը համաձայնեցին, որ նոր պետական քաղաքականությունը և օրենսդրությունը լիովին արտացոլում են խնամատարության դրույթներն ու զարգացումը, և ընդհանուր առմամբ ապահովում են, որ հաշվի առնվի երեխայի լավագույն շահը խնամատար ընտանիք հանձնելու որոշում ընդունելու ժամանակ: Սակայն, պետական և ոչ պետական դերակատարները և հատկապես ԽՀՀ-ները դեռևս չեն ստացել վերապատրաստում և կողմնորոշում խնամատար ընտանիքում տարվող խնամքի նոր ընթացակարգերի գծով: ԽՀՀ-ների կանոնադրությունները դեռ չեն համապատասխանում նոր պահանջներին:

Ծառայությունների մատուցում

ՀՀ ԱՍՀՆ-ը պատասխանատու է մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների կողմից գրանցված և թույլտվություն ստացած խնամատար ընտանիքների վերապատրաստման համար: Սակայն վերապատրաստման բոլոր դասընթացներն անցկացվում են դոնորների և ՀԿ-ների աջակցությամբ: Երեխայի կարծիքն, ըստ տարիքի և հասունությանը համապատասխան, միշտ հաշվի է առնվում խնամատար ընտանիք հանձնելու մասին որոշում կայացնելու ժամանակ, սակայն խնամատար ընտանիք երեխաներին հանձնելուց առաջ, ընթացքում և հետո նրանց պատրաստելու և սովորեցնելու աշխատանքները լավ կազմակերպված չեն:

Կետ 41. Խնամատար ընտանիքի և հոգեզավակի հարաբերություններն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՄԱԿ-ի 1989 թ. «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 9-րդ հոդվածով ամրագրված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքի գործընթացի համար կարևոր ու հիմնարար սկզբունքներին, ...ՄԱԿ-ի ընդունած «Երեխայի այլընտրանքային խնամքի մասին ուղեցույց»-ին և Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի ... գաղափարախոսությանը:

ՀՀ կառավարության՝ Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգ.

Մարտ 10, 2017 թվական

Ինչպես հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները, այնպես էլ խնամատար ծնողները չեն ստանում մասնագիտացված աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքի համար:

Չկա երեխայի կարիքի գնահատման այնպիսի ընթացակարգ կամ ստանդարտացված գործընթաց, որի միջոցով կարելի կլինի որոշել, թե արդյոք 18 տարեկանը լրանալուց հետո երեխան պատրաստ է խնամատարության համակարգից դուրս գալու համար, թե ոչ: Չեն նախատեսվում նաև ծառայություններ խնամատարությունից դուրս եկող բոլոր տարիքների երեխաների համար:

Կառավարության որոշման նախագծով սահմանվում է, թե ինչ միջոցառումներ են ձեռնարկվում, երբ խնամատարները չեն կատարում պայմանագրային պահանջները, սակայն չկան աշխատանքային ստանդարտներ խնամատարության ծառայությունների որակը բարելավելու համար:

Խնամատարության գործընթացի մշտադիտարկումն իրականացվում է ԽՀՀ-ների և ՀՀ ԱՍՀՆ կողմից: ԽՀՀ-ները տարվա մեջ առնվազն երկու այց են կատարում խնամատար ընտանիք,

և ՀՀ ԱՍՀՆ-ին զեկուցում խնամատարության հանձնված երեխաների պայմանների մասին: ՀՀ ԱՍՀՆ-ը կատարում է տարեկան մշտադիտարկման այցեր և ստուգում է խնամատար ծնողների և նրանց խնամքին հանձնված երեխաների հարաբերությունները, միջոցներն ու առօրյա կյանքը: Պետք է մշակել խնամատարության հանձնման գործընթացը մշտադիտարկելու վերանայված ծրագիր և գործիքներ՝ իրականացնելու կանոնավոր մշտադիտարկման և տեսչական ստուգայցեր, որոնք հիմնված կլինեն կառավարության կողմից սահմանված նոր ընթացակարգի և աշխատանքի վերանայված ստանդարտների վրա:

Կադրերը/անձնակազմ

ԽՀՀ-ները մասնակցում են խնամատարության կազմակերպմանը և ունեն օրենսդրությամբ սահմանված հատուկ դերեր ու պարտականություններ, ինչպես նաև ծանուցվում են երբ օրենսդրության մեջ կատարվում են համապատասխան լրացումներ կամ փոփոխություններ: Սակայն խնամատարության հետ կապված չկան հստակ սահմանված որակավորումներ դեպք վարողների, սոցիալական աշխատողների և ԽՀՀ-ների համար: Խնամատարներն անցնում են վերապատրաստում և ստորագրում են պայմանագիր հստակ սահմանված դերերով ու պարտականություններով:

Մնացած կադրերը/մասնագետները, ինչպես օրինակ՝ առողջապահության մասնագետները, մանկավարժները, թերապիստները, չունեն խնամատարության հանձնված երեխաներին ծառայություններ մատուցելու հստակ դերեր ու պարտականություններ: Սակայն նրանց անհրաժեշտ է վերապատրաստում, որպեսզի ծառայություններ մատուցելիս, կարողանան ճիշտ շփվել խնամատար ծնողների և խնամատարության հանձնված երեխաների հետ:

Անհրաժեշտ է մշակել վերապատրաստման մեխանիզմներ, որոնք նպատակաուղղված կլինեն մշտադիտարկման և խնամատարության նախապատրաստական աշխատանքներում ներգրավված աշխատողների կարողությունների զարգացմանը՝ համաձայն կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին այլընտրանքային խնամքի տրամադրման բարելավման ՀՀ կառավարության գործողությունների ծրագրի:

ՄԵԳ և տեղեկատվական համակարգեր

ՀՀ ԱՍՀՆ-ը իրականացնում է խնամատար ընտանիքների կողմից մատուցվող ծառայության տարեկան գնահատում և մշակել է գնահատման ստանդարտացված ցուցանիշներ: Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների «Մանուկ» տեղեկատվական համակարգն ունի բաժիններ խնամատարության հանձնված երեխաների մասին, որտեղ պարբերաբար թարմացվում է մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների և տարածքային սոցիալական աշխատողների կողմից: Համակարգից կարելի ստանալ խնամատար ընտանիքներում խնամվող երեխաների մասին բաղդատված տվյալներ ըստ տարիքի, սեռի, բնակության վայրի, կրթական կարգավիճակի և այլ բնութագրերի:

Սակայն չկա խնամատարության բնագավառում միջգերատեսչական համագործակցություն ՀՀ ԱՍՀՆ-ի, ՀՀ ԱՆ, ՀՀ ԿԳՆ-ի, ՀՀ արդարադատության նախարարության և ոստիկանության միջև՝ տեղեկատվության փոխանակման և խնամատար ընտանիքներում խնամվող երեխաներին անհրաժեշտ ծառայությունների համակարգված մատուցման համար: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստանը, Սեյվ դը Չիլդրն Հայաստանը և Սոցիալական աշխատողների Հայկական Ասոցիացիան ու ՀՕՖ-ի երեխայի աջակցության կենտրոնը ՀՀ ԱՍՀՆ-ի հիմնական գործընկերներն են խնամատարության

խթանման և խնամատարության կազմակերպման ընթացակարգերի մշակման գործում: Երեխայի աջակցության կենտրոնը միակ ՀԿ-ն է, որը ներգրավված է խնամատարության ոլորտում: Այն հավաքում և տեղեկություններ է փոխանակում խնամատարության հանձնված երեխաների վերաբերյալ:

Գնահատումը ցույց տվեց, որ խնամատարության մշտադիտարկման և գնահատման համար համընդհանուր և միասնական ուղեցույց մշակված չէ և խնամատարության վերաբերյալ տվյալների որակի ապահովման միջոցառումներ չեն իրականացվում:

Սոցիալական նորմեր և գործելաոճ

Միջոցառումները, որոնք ուղղված են հասարակության իրազեկության բարձրացմանն այն մասին, որ խնամատարությունն ավելի համապատասխան խնամքի ձև է, քան խնամքի հաստատությունները, հաճախ չեն կազմակերպվում: Խնամատարության մասին խոսվում է միայն երեխաների խնամքի համակարգին նվիրված սեմինարների և աշխատաժողովների ժամանակ, ՀՀ ԱՍՀՆ պաշտոնյաների հետ անհատական հարցազրույցների ժամանակ և լրատվական հոդվածներում կամ հաղորդումներում: Մշակված չէ խնամատարության խթանմանն ուղղված հանրային իրազեկման և քարոզչության ռազմավարություն, ուստի և պետք է մշակվի:

Ֆինանսավորում

Խնամատարության համար պետական բյուջեում նախատեսված է հատուկ տող: 2018թ. խնամատարության համար պետական հատկացումներն ավելացել են չորս անգամ: Այդ հատկացումները բավարար են, որպեսզի խնամատար ընտանիքներում խնամք տրամադրվի մոտ 130 երեխայի: Խնամատարության համար համայնքային ֆինանսավորում չկա:

Խնամատարության ծառայություններ մատուցելու ծախսերը հաշվարկվել են խնամքի հաստատությունում երեխայի համար պահանջվող ֆինանսավորման հիման վրա և կազմված են երկու մասից՝ երեխայի խնամքի համար հատկացված ֆինանսավորում և խնամատար ծնողին նվազագույն աշխատավարձի չափով վճարելու համար ֆինանսավորում: Հաշմանդամություն ունեցող երեխայի խնամատարության համար նախատեսված հատկացումը 30%-ով ավելի է: Վերապատրաստման և խնամատար ընտանիքների պատրաստման ծախսերը բյուջեում ներառված չեն: Բյուջեի հատկացումներ խնամատար ընտանիքների մշտադիտարկման և վերահսկողական այցերի համար նույնպես նախատեսված չեն:

Խնամատարության համար պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորումը մշտապես հատկացվում է և օգտագործվում է ըստ սահմանված նպատակի:

Մասնավոր հատվածի կողմից խնամատարության համար հատկացված ֆինանսական միջոցները մասին տեղեկատվություն չկա, քանի որ չեն վերահսկվում կառավարության կողմից: Զարգացման գործընկերները հատկացնում են ֆինանսական միջոցներ խնամատար ընտանիքների վերապատրաստման համար, և այդ միջոցները վերահսկվում են կառավարության կողմից:

Խնամք շուրջօրյա հաստատությունում

Երեխայի տեղավորումը բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում [խնամքի հաստատություն] պետք է դիտարկել որպես ծայրահեղ միջոց, որը կարող է իրականացվել, եթե բացակայում են երեխայի ընտանեկանին մոտ այլընտրանքային խնամքի մնացած բոլոր տեսակները (երեխայի խնամակալությունը և հոգաբարձությունը մերձավոր ազգականների և այլ անձանց կողմից, երեխայի տեղավորումը խնամատար ընտանիքում, երեխայի որդեգրումը, երեխայի խնամքի կազմակերպումը սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում) կամ դրանց կիրառումը չի բխում երեխայի լավագույն շահերից:

ՀՀ կառավարության 26 մայիսի, 2016 թ. N 551-Ն որոշում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները, հոդված 2, կետ 9

Շուրջօրյա խնամքի հաստատություններում տրամադրվող ծառայությունները Հայաստանում ժառանգություն են մնացել նախկին Խորհրդային Միությունից, սակայն սկսած 2007թ.-ից ՀՀ կառավարությունն աստիճանաբար կրճատում է խնամքի մեծ հաստատությունների թիվը և ներմուծում է խստացված ընթացակարգեր երեխաներին այդ հաստատություններում տեղավորելու համար: Ներկայումս Հայաստանում գործում են պետության կողմից ֆինանսավորվող խնամքի հաստատությունների չորս տեսակ՝

- «Մանկան տուն» 0-ից 6/8 տարեկան երեխաների համար (N=2),
- Մանկատներ մինչև 18 տարեկանների համար (N=4),
- Գիշերային խնամքի հաստատություններ 6-ից 18 տարեկանների համար (N=6) և
- Հատուկ հանրակրթական դպրոցներ հաշմանդամություն և վարքագծային խնդիրներ ունեցող երեխաների համար (N=25):

Հաստատությունների առաջին երեք տեսակը գտնվում են ՀՀ ԱՍՀՆ-ի վարչական վերահսկողության ներքո: Հաշմանդամություն և վարքագծային խնդիրներ ունեցող երեխաների համար հատուկ դպրոցները կանոնակարգվում են ԿԳՆ-ի կողմից, սակայն որոշ դպրոցներ գտնվում են մարզային ենթակայության տակ: Ի հավելումն պետության կողմից ֆինանսավորվող խնամքի հաստատությունների, գործում են նաև ոչ պետական մանկատներ և ընտանեկան տիպի փոքր տներ կամ մանկական գյուղեր, որոնք ֆինանսավորվում են «ՍՕՍ մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամի կողմից:

Պետական քաղաքականությամբ և կառավարության որոշումներով սահմանվում են խնամքի հաստատությունների աշխատողներին վերաբերող պահանջները և մատուցվող ծառայությունների չափանիշները, անկախ այդ հաստատությունների կազմակերպական կամ իրավական կարգավիճակից: ՀՀ ԱՍՀՆ-ը պարբերաբար իրականացնում է ծառայությունների որակի մշտադիտարկում մանկատներում և գիշերային խնամքի հաստատություններում: ՀՀ ԿԳՆ-ը պատասխանատու է հատուկ դպրոցներում որակյալ ծառայությունների մատուցման և երեխաների խնամքի ու կրթության կազմակերպման համար: Ոչ պետական մանկատների և շուրջօրյա խնամքի հաստատությունների գործունեությունն ու ծառայությունների որակը մշտադիտարկման չի ենթարկվում:

Երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թթ. ազգային ռազմավարության խնդիրներից մեկը երեխաների կյանքի որակն է խնամքի հաստատություններում՝ ներառյալ աղետների վտանգի նվազեցումը և ինքնուրույն կյանքի համար նրանց նախապատրաստումը: Շուրջօրյա

խնամքի հաստատություններում գտնվող երեխաների գերակշիռ մեծամասնությունը ունի հաշմանդամություն, քանի որ նման երեխաներ ունեցող անապահով ընտանիքների համար մատչելի ծառայություններ իրենց համայնքներում չկան: Ծնողները հազվադեպ են այցելում մանկատներ և խնամքի հաստատություններ իրենց համայնքներից մեծ հեռավորության վրա գտնվելու պատճառով: Չնայած գիշերային խնամքի հաստատությունների և հատուկ դպրոցների կանոնադրություններով պահանջվում է, որ երեխաներն իրենց ընտանիքներ վերադառնան դպրոցական արձակուրդների ժամանակ, երեխաներից շատերը մնում են այդ հաստատություններում, քանի որ ծնողներն ի վիճակի չեն նրանց տուն տանելու: Մասնագիտացված խնամքի հաստատություններում գտնվող հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունների համար հատկացված պետական ֆինանսավորումը երեք անգամ ավելի է՝ համեմատած ընդհանուր տիպի մանկատների հետ: Կառավարության ընդհանուր քաղաքականությունն ուղղված է շուրջօրյա հաստատությունների վերակազմավորմանը և համայնքներում այլընտրանքային խնամքի ծառայությունների մատուցման համակարգի զարգացմանը, որի նպատակն է նվազեցնել խոցելի ընտանիքների կախվածությունը շուրջօրյա խնամքի մեծ հաստատություններից՝ իրենց երեխաների խնամքի ապահովման նպատակով: Սակայն գնահատման մասնակիցները համաձայնեցին, որ ծնողների շրջանում և ընդհանուր առմամբ հասարակության մեջ տարածված է այն կարծիքը, որ աղքատ երեխաները, հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաները, ավելի որակյալ խնամք և ծառայություններ ստանում են մանկատանը, քան իրենց ընտանիքներում: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ հաշմանդամության նպաստը և ընտանիքներին տրվող սոցիալական աջակցությունը շատ ցածր է և չի բավականացնում որակյալ ծառայութուններից օգտվելու համար:

Գծանկար 6. Խնամք շուրջօրյա հաստատություններում բաժնի գնահատման արդյունքների պատկերը



Կառավարում և առաջնորդում

Գնահատման արդյունքները ցույց տվեցին, որ ընդհանուր առմամբ պետական քաղաքականությունը հստակ կարգավորում է երեխաների խնամքը հաստատություններում. այն ներառում է դրույթներ պետական և մարզային ենթակայության և ոչ պետական հաստատությունների վերաբերյալ: Օրենսդրությամբ սահմանվում է, որ սկսած 2017թ. հունվարից, հասարակական կազմակերպությունները կարող են երեխաներին տրամադրել խնամք և ծառայություններ ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից

հավաստագիր ստանալուց հետո (համաձայն 2014թ. Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքի պահանջի, որն ուժի մեջ մտավ 2017թ.): Համաձայն ՀՀ կառավարության 2016 թ. մայիսի 26-ի որոշման, աղքատությունը չպետք է լինի միակ պատճառը երեխային խնամքի հաստատություն հանձնելու համար[16]: Որոշման մեջ ասվում է, որ այլընտրանքային խնամքի տևողությունը չպետք է գերազանցի 6 ամիսը, եթե երեխան իր կենսաբանական ընտանիքից բաժանվել է միայն սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով:

Պետական քաղաքականությունը ներառում է դրույթներ երեխաներին խնամքի հաստատություններում տեղավորելու մասին (կանխարգելման մեխանիզմ/gatekeeping mechanism): ՀՀ կառավարության 2015թ.սեպտեմբերի 10-ի թիվ 1112-Ն որոշումն այն հիմնական իրավական փաստաթուղթն է, որով կարգավորվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ուղղորդումը խնամքի հաստատություններ, երեխաների լավագույն շահի ճանաչումը և փաստաթղթերի ու տեղեկատվության հոսքը առաջին աղբյուրի, ոստիկանության, ԽՀՀ-ների, մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների և ՀՀ ԱՍՀՆ-ի միջև: Այդ քաղաքականությամբ կարգավորում է նաև երեխայի կապը ծնողների կամ օրինական ներկայացուցչի հետ, խնամքի չափորոշիչները, ինչպես նաև առողջապահական ծառայությունների մատուցումը երեխաներին խնամքի հաստատություններում՝ առողջապահության և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների համատեղ հրամանով: Մանկատներում և գիշերային խնամքի հաստատություններում գտնվող երեխաները սովորում են հանրակրթական դպրոցներում և ստանում են գրպանի փող իրենց առօրյա կարիքների համար: Եթե նրանք ունեն հատուկ կրթական կարիքներ, ապա այդ ծառայության տրամադրումը կարգավորվում է հանրակրթության մասին ՀՀ օրենքով: Հատուկ դպրոցներում երեխաների ընդունումը և նրանց կրթությունը կանոնակարգվում է ԿԳՆ-ի կողմից: Երեխային հատուկ դպրոցում տեղավորելու համար պարտադիր է ծնողների կամ երեխայի օրինական ներկայացուցչի գրավոր դիմումը՝ երեխայի հատուկ կրթական կարիքներ ունենալու մասին վկայականի հետ միասին:

Քաղաքականությամբ հստակ չի սահմանափակվում 0-3 տարեկան երեխաների տեղավորումը խնամքի հաստատություններում, ինչը ըստ ՄԱԿ-ի ուղեցույցի թույլատրվում է միայն բացառիկ հանգամանքներում:

Պետական ֆինանսավորմամբ մոր և մանկան ճգնաժամային կենտրոններ Հայաստանում չկան: Գործում են մի քանի ոչ պետական կենտրոններ: Հայ օգնության ֆոնդի երեխայի աջակցության ժամանակավոր կենտրոնը տրամադրում է ժամանակավոր ապաստարան փողոցում կամ ճգնաժամային իրավիճակներում հայտնված երեխաներին (որոնք մնացել են առանց ծնողական խնամքի՝ խնամողի կալանավորման պատճառով կամ լքվել են, կամ հեռացել են տանից բռնության կամ այլ դրդապատճառներով): Կենտրոնը գործում է ոստիկանության և ՀՀ ԱՍՀՆ-ի հետ սերտ համագործակցությամբ: Պետական ֆինանսավորմամբ գործող «Զատիկ» Անօթևան երեխաների համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» կենտրոնը յուրաքանչյուր տարի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 3-18 տարեկան թվով 20 երեխայի տրամադրվում է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք, մինչև նրան կենսաբանական ընտանիք վերադարձնելը, մանկատուն կամ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում տեղավորելը: «Ընտանեկան տիպի» տների ֆինանսավորումը մասնավոր է և իրականացվում է «ՍՕՍ մանկական գյուղեր» միջազգային կազմակերպության միջոցով: Այս ծառայությունը ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից լիազորված է 3-18 տարեկան երեխաների համար: Կազմակերպությունը տրա-

[16] ՀՀ կառավարության 2016թ. մայիսի 26-ի որոշում No 551-N, Հավելված 1 հոդված 3 կետ 6

մադրում է նար մինչև 6 ամիս ժամանակվոր խնամք ճգնաժամային իրավիճակում գտնվող ընտանիքների երեխաներին: Կազմակերպությունն ունի խնամքի տրամադրման իր ներքին կանոնակարգերը:

Համապատասխան պետական դերակատարները տեղեկացել են ազգային քաղաքականության իրականացման հետ կապված իրենց դերերի ու պարտականությունների մասին հիմնականում փաստաթղթերի ներքին շրջանառության կամ ՀՀ ԱՍՀՆ և ՀՀ ԿԳՆ աշխատողների կողմից մարզեր կատարված մշտադիտարկման այցելությունների միջոցով: Համապատասխան մասնագետների վերապատրաստումը կանոնավոր չէ և գերակշռում է այն շրջաններում, որտեղ երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխման միջոցառումներն իրականացվում են միջազգային կազմակերպությունների և տեղական ՀԿ-ների անմիջական մասնակցությամբ: ԽՀՀ-ները միշտ չէ, որ ծանոթ են երեխաներին խնամքի հաստատություններ ուղղորդելու հարցում իրենց դերերի ու պարտականությունների մասին իսկ ոչ պետական դերակատարները ստանդարտներին և ընթացակարգերին ծանոթանում են ինքնուրույն:

Ծառայությունների մատուցում

Չնայած շուրջօրյա խնամքի հաստատություններում և հատուկ դպրոցներում գտնվող երեխաների մեծամասնությունն ունի հաշմանդամություն, գնահատումը ցույց տվեց, որ խնամքի հաստատություններում մատուցվող ծառայությունները պատշաճ կերպով չեն բավարարում հաշմանդամություն և այլ հատուկ կարիքներ ունեցող երեխաների պահանջները: Որակի չափորոշիչները հստակ սահմանված չեն. կառավարության որոշմամբ սահմանվում են երեխաներին տրվող սննդի, հագուստի չափորոշիչները, լուսավորության, տարածքի, կահույքի և հիգիենայի պահանջները, սակայն խնամքի և երեխաների զարգացման որակի չափորոշիչները չեն սահմանվում: Կրթական չափորոշիչները սահմանվում են ՀՀ ԿԳՆ-ի կողմից, և ըստ սահմանված պահանջների, հատուկ դպրոցներում յուրաքանչյուր երեխայի համար պետք է մշակվի անհատական ուսումնական պլան: Սակայն գնահատումը ցույց տվեց այդ ծառայությունների ցածր որակը և՛ խնամքի հաստատություններում, և՛ հատուկ դպրոցներում:

Խնամքի հաստատություններում ծառայությունների որակի ապահովման համար տեսչական այցերը կանոնավորապես իրականացվում են ՀՀ ԱՍՀՆ-ի և ԿԳՆ-ի կողմից, իսկ օրենսդրական դաշտը հստակ սահմանում է, թե ինչ միջոցներ են ձեռնարկվում, երբ խնամքի հաստատությունները չեն պահպանում նվազագույն ստանդարտները:

ՀՀ կառավարության 2016 թ. մայիսի 12-ի այլընտրանքային խնամքի համակարգի զարգացման միջոցառումների ծրագիրը նպատակ է հետապնդում հատուկ դպրոցները վերակազմավորելու տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, իսկ գիշերային խնամքի հաստատությունները՝ բազմաֆունկցիոնալ ցերեկային խնամքի կենտրոնների: Ծրագիրը նաև նախատեսում է միջոցառումներ խնամքի հաստատություններում գտնվող երեխաների կարիքների համակողմանի գնահատման և վերամիավորված ընտանիքներին նպատակային ծառայությունների մատուցման համար:.

Կադրեր/անձնակազմ

Բոլոր տեսակների խնամքի հաստատությունների աշխատողների համար հստակ սահմանված են որակավորման պահանջներ, որոնք կապված են նրանց դերերի ու պարտականությունների

հետ: Սա վերաբերում է երեխաների հետ գործ ունեցող սոցիալական աշխատողներին, հատուկ մանկավարժներին, դաստիարակներին, առողջապահության ոլորտի մասնագետներին, դայակներին և թերապիստներին: Սոցիալական ապահովության պատասխանատուները ազգային և մարզային մակարդակներում, այդ թվում և նրանք, ովքեր աշխատում են սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում և մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններում, ունեն հստակ սահմանված որակավորումներ և աշխատանքի նկարագրեր խնամքի հաստատություններ երեխաների ուղղորդման կամ խնամքի հաստատություններից երեխաների դուրս բերման գործում իրենց ունեցած դերերին ու պարտականություններին համապատասխան: Սակայն ԽՀՀ-ները երեխաներին խնամքի հաստատություններ հանձնելու հետ կապված հստակ կանոնակարգեր չունեն: Խնամքի հաստատություններում դեռահասների/երիտասարդների գծով հատուկ որակավորում ունեցող մասնագետներ չկան:

Խնամքի հաստատություններում մատուցվող ծառայությունների որակի ապահովման միջոցառումներ պարբերաբար իրականացվում են: ՀՀ ԱՍՀՆ-ն ունի մեխանիզմներ մանկատներում և գիշերային խնամքի հաստատություններում խնամքի որակը մշտադիտարկելու համար: ՀՀ ԿԳՆ-ն իրականացնում է մշտադիտարկման ստուգայցեր հատուկ դպրոցներում: Սակայն տեսչական գործառույթներում խնամք տրամադրողների վերապատրաստման և կարողությունների զարգացման բաղադրիչ ներառված չէ: Դեպքերի մեծ մասում նման մշտադիտարկման այցերի նպատակը լինում է գնումների ընթացակարգերի աուդիտը: Պետության կողմից հստակ սահմանվում են այն միջոցառումները, երբ խնամքի հաստատությունները չեն բավարարում նվազագույն ստանդարտներին:

ՄևԳ և տեղեկատվական համակարգեր

ՀՀ ԱՍՀՆ-ը երկու անգամ անցկացրել է խնամքի հաստատությունների մանրամասն անկախ գնահատում: Այդուհանդերձ, ՀՀ ԱՍՀՆ-ում խնամքի հաստատությունների վերաբերյալ մշտադիտարկման տվյալների կանոնավոր հավաքագրման և հաշվետվությունների մշակման գործում դերերն ու պարտականությունները հստակ սահմանված և ամրագրված չեն: Բացի այդ, ՀՀ ԱՍՀՆ-ի մշտադիտարկում և գնահատում իրականացնող համապատասխան մասնագետները լավ վերապատրաստված չեն: «Մանուկ» տեղեկատվական բազան պարունակում է տվյալներ միայն ՀՀ ԱՍՀՆ-ի խնամքի հաստատություններում գտնվող երեխաների մասին: ՀՀ ԿԳՆ-ն չունի հատուկ դպրոցների հետ կապված ՄևԳ համակարգեր:

Պետական կառույցների միջև տվյալների փոխանակում տեղի չի ունենում, միայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունն է (ԱՎԾ) հավաքագրում և ամփոփ հաշվետվությունների տեսքով հրապարակում վարչական տվյալներ խնամքի հաստատություններում գտնվող երեխաների մասին: Գոյություն ունեցող ցուցանիշները կարիք ունեն վերանայման, որպեսզի ի հավելումն հաստատություններում գտնվող երեխաների թվաքանակի մասին տեղեկությունների, հավաքվեն նաև տվյալներ ընտանիքներից երեխաների առանց անհրաժեշտության բաժանման պատճառների, ինչպես նաև ընտանիքներ վերադառնալու հնարավորությունների մասին:

Տվյալների մեծ մասը պետության կողմից ֆինանսավորվող խնամքի հաստատություններում գտնվող երեխաների մասին են: Խիստ սուղ տեղեկություններ կան խնամքի ոչ պետական հաստատությունների վերաբերյալ, որոնք սակավաթիվ են և իրենց տվյալներն ՀՀ ԱՎԾ-ին հայտնում են անմիջականորեն: Բաղդատված տվյալներ առկա են ըստ խնամքի տեսակի, տևողության, երեխաների տարիքի և սեռի, կրթության և հաշմանդամության կարգավիճակի: Տվյալների որակի ապահովման միջոցառումները հիմնականում չեն կատարվում:

Սոցիալական նորմեր և գործելաոճ

Խմբային քննարկման մասնակիցները համաձայնեցին, որ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումները բավարար չեն, և հասարակության մեջ ընդհանուր տարածված չէ այն կարծիքը, որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխային խնամքի հաստատություն հանձնելը միշտ չէ, որ բխում է երեխայի լավագույն շահից: Դեռևս լայն հասարակության մեջ հատկապես մարզերի բնակչության մեջ, ինչպես նաև խնամք տրամադրողների շրջանում կա կարծիք, որ շուրջօրյա խնամքի հաստատությունը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների պաշտպանության լավագույն ձևն է: Շատ ընտանիքներ թաքցնում են կամ ամաչում են հաշմանդամություն ունեցող երեխային տանը խնամել, կամ հիմնականում վախենում են, որ չեն կարողանա ապահովել երեխային անհրաժեշտ ծառայությունները՝ դրանց բացակայության կամ անմատչելիության պատճառով:Մշակված չէ հանրային իրազեկման և քարոզչության ռազմավարություն, որտեղ կներկայացվեն շուրջօրյա խնամքի հաստատությունների դերը և հստակեցված կլինի, որ շուրջօրյա խնամքի հաստատությունը միջոց է զուտ ծայրահեղ դեպքերի համար, եթե չկա ընտանեկան տիպի այլընտրանք:

Ֆինանսավորումը

Խնամքի հաստատություններում տրամադրվող ծառայությունների ծախսերը հաշվարկվում են ՀՀ ԱՍՀՆ-ի և ԿԳՆ-ի կողմից և ներառվում են պետական ու մարզային (Երևան քաղաքի) բյուջեներում: Պահանջվող ֆինանսավորումը հատկացվում և լիովին վճարվում է երեխաների հիմնական կարիքները բավարարելու, սպասարկման ծառայությունների և աշխատողների աշխատավարձերը վճարելու համար: Սակայն այդ միջոցները բավարար չեն խնամվող երեխաների համար որակյան ծառայություններ ապահովելու համար:

Կառավարությունն իրականացնում է լիակատար վերահսկողություն պետական հատկացումների նկատմամբ, սակայն մասնավոր նվիրատվությունները և մասնավոր հատվածի կողմից ստացված աջակցությունը միշտ չէ, որ ենթարկվում են մշտադիտարկման և համապատասխան ձևով վերահսկվում պետության կողմից, որպեսզի հնարավոր լինի ստանալ խնամքի հաստատություններ մտնող ֆինանսական միջոցների լրիվ պատկերը:

Ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպում

«Գործակալություններն ու հաստատությունները պետք է ունենան հստակ քաղաքականություն և պետք է իրականացնեն համաձայնեցված քայլեր, որոնք վերաբերում են երեխաների հետ իրենց աշխատանքը ավարտելուն պլանավորված և չպլանավորված գործողություններով՝ ապահովելու համապատասխան հոգածություն և/ կամ ուղեկցում: Խնամքի ամբողջ ընթացքում, նրանք պետք է համակարգված կերպով պատրաստեն երեխաներին ինքնուրույնությանը և հասարակության հետ լիարժեք ինտեգրմանը, մասնավորապես սոցիալական և կյանքի հմտությունների ձեռքբերման միջոցով, որը հնարավոր է տեղական համայնքի կյանքում մասնակցելով:

ՄԱԿ-ի երեխայի այլընտրանքային խնամքի ուղեցույց, Աջակցություն խնամքից դուրս գալուց հետո, կետ 131

Այլընտրանքային խնամքի համատեքստում, երեխաները մեծանալու հետ միասին, պետք է նախապատրաստվեն անկախ ապրելակերպին, քանի որ, չափահաս դառնալով, նրանք դուրս են գալիս պաշտոնական խնամքի համակարգից: Եթե նրանց չեն նախապատրաստում

կամ աջակցում, շուրջօրյա խնամքի հաստատություններից դուրս գալուց հետո, 18-23 տարեկան երիտասարդները հայտնվում են բռնության ենթարկման, թրաֆիքինգի և շահագործման մեծ ռիսկի տակ:

Հայաստանի օրենսդրությունը սահմանում է պետական մանկատների շրջանավարտներին մատուցվող ծառայությունների տեսակներն ու ծավալները, ինչպես նաև աշխատողների որակավորումները, դերն ու պարտականությունները: Սակայն, ցածր ֆինանսավորման, ինչպես նաև ծրագրի ոչ ճիշտ մշակված լինելու պատճառով, մանկատան շրջանավարտների սոցիալական աջակցության պետական ծրագիրը կասեցվեց 2016 և 2017 թվականների համար: «ՍՈՍ մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամը տրամադրում է ուղեկցվող անկախ ապրելակերպի ծառայություններ միայն իր շրջանավարտներին: Այս ծառայությունները կարգավորվում և վերահսկվում են հենց կազմակերպության կողմից:

Գնահատումը ցույց տվեց, որ ուղեկցվող անկախ ապրելակերպի ծառայությունները լավ չեն մշակված Հայաստանում և ներառված չեն ՀՀ կառավարության միջոցառումների ծրագրում: Պետական մանկատների շրջանավարտները ստանում են որոշ ծառայություններ, սակայն հատուկ դպրոցների և գիշերային խնամքի հաստատությունների շրջանավարտների համար նման աջակցություն նախատեսված չէ: Սակայն մանկատան շրջանավարտների բնակարանային հարցը կարգավորման կարիք ունի: Որոշ դեպքերում 18 տարին լրացած սաները, շարունակում են մնալ հենց նույն մանկատներում, քանի որ ապրելու տեղ չունեն:

Հաշմանդամություն ունեցող երիտասարդներն ավելի խոցելի են անկախ կյանք սկսելու համար:

Գծապատկեր 7. Ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպում բաժնի գնահատման արդյունքների պատկերը



Կառավարում և առաջնորդում

Հայաստանում պետական մանկատների շրջանավարտների համար նախատեսված են մի շարք սոցիալական ծառայություններ, որոնք կարգավորվում են Սոցիալական աջակցության մասին

ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության որոշմամբ[17]: Համաձայն օրենսդրական կարգավորումների՝ շրջանավարտներին պետք է տրամադրվեն կրթական և առողջապահական ծառայություններից օգտվելու արտոնություններ: Ծնողազուրկ երեխաների համար բուհական կրթությունն անվճար է: Պետական մանկատների շրջանավարտներն աշխատաշուկայում համարվում են անմրցունակ և կարող են ներգրավվել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության ակտիվ ծրագրերում: Մանկատնից դուրս գալուց մեկ տարի առաջ պետական մանկատները շրջանավարտների համար բանկում հաշիվ են բացում և մանկատնից դուրս գալուց փոխանցում 50,000 ՀՀ դրամ: Բացի այդ բնակարան չունեցող շրջանավարտներին տրամադրվում է ամսական 30,000 դրամ՝ բնակարանի վարձակալության փոխհատուցման համաև, այդպիսով որոշակի գումար հատկացնում նրանց՝ անկախ կյանք սկսելու համար: Մանկատան շրջանավարտները իրավունք են ստանում օգտվելու նաև ընտանեկան նպաստից, կարող են ստանալ անվճար կացարան և որոշակի նվազագույն գույք՝ անկախ ապրելու համար: Սակայն հարկ է նշել, որ անհատույց կացարանի տրամադրման ծրագիրը, որը իրականացվում էր 2005-2008թթ.-ին, դադարեցվել է՝ անհաջող իրականացման պատճառով:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ կառավարության որոշումն ընդունվել էր 2014թ.-ին, գնահատող խումբը գտավ, որ այն ամբողջովին չի կարգավորում մանկատան շրջանավարտներին տրամադրվող ծառայությունների շրջանակը՝ մանկատնից դուրս գալուց հետո: Բնակարանի տրամադրման ծրագիրը թույլ է կառավարվում և չկա որևէ պաշտոնական մարմին, որը պատասխանատու է ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպումը պետական ստանդարտներին համապատասխանեցնելու համար:

Ծառայությունների մատուցում

ՍՈՍ Մանկական գյուղեր բարեգործական կազմակերպությունը ուղեկցվող անկախ ապրելակերպի ծառայություններ մատուցող միակ կազմակերպությունն է: Գնահատող խմբերը ՍՈՍ Մանկական գյուղեր բարեգործական կազմակերպության մատուցած ծառայությունները քննարկելուց հետո, եկել են այն եզրահանգման, որ ոչ պետական դերակատարները ծառայություններ մատուցելիս ուղղորդվում են ստանդարտ չափանիշներով: Երեխաները գնահատվում են ստանդարտացված ընթացակարգով՝ պարզելու համար, թե նրանք երբ են պատրաստ անցում կատարելու դեպի ուղեկցվող անկախ ապրելակերպին: Շրջանավարտներին ուղեկցվող անկախ ապրելակերպի ծառայություններ մատուցելու որոշումներ կայացնելիս հաշվի է առնվում նրանց կարծիքը՝ տարիքին ու հասունությանը համապատասխան:

Միևնույն ժամանակ գնահատումը նշեց, որ երկրում գրեթե բացակայում են մանկատների շրջանավարտներին մատուցվող ծառայությունները: Մասնագիտացված մանկատների շրջանավարտների խնամքի կարգավորման նպատակով փոփոխվեց Խարբերդի մանկատան կանոնադրությունը և 18 տարին լրանալուց հետո մանկատան սաները շարունակում են մնալ մանկատանը: Սակայն չլուծված է մնում մյուս մանկատների շրջանավարտների բնակարանային հարցը, որը կարելի է մեղմել օրինակ «ՍՈՍ մանկական գյուղեր» կազմակերպությանն այդ ծառայությունը պատվիրակելու միջոցով: Աշխատանքային հանդիպման մասնակիցները համաձայնեցին, որ գոյություն

[17] ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1452 - Ն որոշում՝ Հայաստանի Հանրապետության պետական մանկատների շրջանավարտներին պետական աջակցության ծրագիրը

ունեցող ծառայությունների համար բացակայում են մշտադիտարկման մեխանիզմները, որոնք կապահովեին ուղեկցվող անկախ ապրելակերպի որակյալ ծառայությունների մատուցում:.

Կադրեր/անձնակազմ

Բացի ՍՈՍ Մանկական գյուղեր բարեգործական կազմակերպության անձնակազմից, մանկատների շրջանավարտների հետ աշխատող հատուկ մասնագիտացված մասնագետներ չկան: Սահմանված չեն ուղեկցվող անկախ ապրելակերպի ծառայությունների համար չափանիշները, որակի ստանդարտները: Այս բնագավառում համապատասխան կադրերի կարողությունների զարգացում չի կատարվում:

Մշտադիտարկում և գնահատում, տեղեկատվական համակարգեր

Չկան ուղեկցվող անկախ ապրելակերպի ծառայությունների մշտադիտարկման ստանդարտ ցուցանիշներ: Թեև ՍՈՍ Մանկական գյուղեր բարեգործական կազմակերպությունն ունի իր խնամքի տակ գտնվող երեխաների հետագա կյանքի մասին տվյալների հավաքագրման և մշտադիտարկման, ինչպես նաև տվյալների որակի ապահովման համակարգ: Կազմակերպության ունեցած տվյալները հնարավոր է դիտարկել ըստ երեխաների տարիքի, սեռի, բնակության վայրի և այլ կտրվածքով:

Սոցիալական նորմեր և գործելաոճ

Չկա համապատասխան հանրային իրազեկման և քարոզչության ռազմավարություն, որը կնպաստի այլընտրանքային խնամքից դուրս եկող երեխաների/դեռահասների համար նոր հնարավորությունների ստեղծմանը, կապահովի այնպիսի միջավայր, որում այդ երեխաները կկարողանան հաջողել և սահուն անցում կատարել դեպի ինքնաբավ անկախ ապրելակերպ: Բազմաթիվ լրատվական հաղորդումներ և հոդվածներ հանրության ուշադրությանն են ներկայացնում մանկատների շրջանավարտների անապահով, աղքատ կենսապայմանները և մանկատներից դուրս գալուց հետո նրանց չլուծված խնդիրները: Ընդհանուր առմամբ ուղեկցվող անկախ ապրելակերպի ծառայությունները խնամքի մի տեսակ է, որի մասին տեղեկացվածությունը շատ ցածր է և գնահատման մասնակիցների մեծ մասի համար դժվար է եղել խնամքի այս տեսակը քննարկելը:

Ֆինանսավորում

Ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները գնահատված չեն: Կան շրջանավարտներին աջակցելու համար տրամադրվող դրամական հատկացումներ, սակայն այդ ծախսերը և ծառայություններն ուղղակիորեն կապված չեն ուղեկցվող անկախ ապրելակերպի ծառայության կազմակերպման հետ: Միջազգային դոնոր կազմակերպությունների և մասնավոր հատվածի կողմից այս ծառայության համար ֆինանսական միջոցներ չեն հատկացվում կամ հատկացվող միջոցները չնչին են և չեն հաշվառվում պետության կողմից:

Խնամք բարեկամի կողմից/խնամակալություն

Խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանվում է այն երեխաների նկատմամբ, ովքեր մնացել են առանց ծնողական խնամքի՝ նրանց պահելու, դաստիարակելու և կրթություն տալու, ինչպես նաև նրանց իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակներով:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, Հոդված 134, կետ 1

Խնամակալն ու հոգաբարձուն խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող երեխայի նկատմամբ խնամակալության և հոգաբարձության պարտականությունները կատարում են անհատույց

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, Հոդված 136, կետ 4

Խնամքը բարեկամի կողմից հայերը համարում են բարոյական պարտք, բարեկամների ընտանիքները սովորաբար վերցնում են կենսաբանական ծնողների մահվան կամ արտագաղթի պատճառով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի պատասխանատվությունը: Այնուամենայնիվ, խնամակալության գրանցումը հազվադեպ է կատարվում՝ միայն այն դեպքերում, երբ հարկ է լինում դիմելու սոցիալական ծառայություններին կամ հանդես գալու երեխայի անունից: Խնամակալության մշտադիտարկում չի կատարվում, մասնագետների համար չկան խնամքի այս տեսակի ներքո գտնվող երեխաների առօրյա կենսապայմանների մշտադիտարկում իրականացնելու ընթացակարգեր: ՀՀ օրենսդրությունն օգտագործում է «խնամակալություն և հոգաբարձություն» տերմինները խնամակալության փոխարեն: 0-14 տարեկան երեխաների պաշտոնական խնամքը կատարվում է խնամակալների կողմից, իսկ 14-18 տարեկան երեխաներին հոգաբարձուներ են նշանակվում, որոնք երեխաների փոխարեն կայացված բոլոր որոշումները պետք է համաձայնեցնեն երեխաների հետ:

Գնահատող խմբերն ընդգծեցին, որ խնամքի այս բնագավառը կարգավորող իրավական դաշտը վերանայման կարիք ունի: Խնամակալություն իրականացնողներին ոչ մի ֆինանսական աջակցություն չի ցուցաբերվում: Պետական քաղաքականությունը աջակցություն չի նախատեսում այն բարեկամների համար, ովքեր նախընտրում են խնամել երեխաներին՝ խնամքի հաստատություններ ուղարկելու փոխարեն: Չկան խնամակալության տակ գտնվող երեխաների մշտադիտարկման և նրանց իրավունքների հնարավոր խախտումների կանխարգելման կարգավորումներ, քանի որ այդ խնամքը գրանցված չէ: Գնահատող խմբերը համաձայնեցին, որ խնամակալությանը աջակցող անձնակազմը վերապատրաստման և կողմնորոշման կարիք ունի և երեխաներին տրամադրվող խնամակալության որակի մասին տեղեկատվություն չկա:

Գծապատկեր 8. Խնամք բարեկամի կողմից/խնամակալություն բաժնի գնահատման արդյունքների պատկերը





Կառավարում և առաջնորդում

Պետական քաղաքականությունը և իրավական դաշտը որոշ չափով կարգավորում են խնամակալությունը: Ընտանեկան օրենսգիրքը, Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքը, կառավարության որոշումները և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կանոնադրությունը օրինական հենք են տրամադրում սահմանելու, գնահատելու և որոշումներ կայացնելու ֆորմալ խնամակալության վերաբերյալ: Այնուամենայնիվ, կարգավորող ոչ մի փաստաթուղթ ուղղակիորեն չի անդրադառնում խնամակալներին հատուկ նախապատրաստելու, աջակցելու և խորհրդատվություն տրամադրելու ծառայություններին, որոնք պետք է տրամադրվեն մինչև նրանց խնամքին երեխա հանձնելը, հանձնելու ընթացքում և երեխային նրանց խնամքին հանձնելուց հետո: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները պատասխանատու են խնամակալների կամ հոգաբարձուների՝ պետական պահանջներին համապատասխանության գնահատման համար: Սոցիալական դեպք վարողների, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամների և մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների աշխատակիցների համար կողմնորոշման և ուսուցման դասընթացները կազմակերպվում են միայն կոնկրետ դեպքերի համար, առանց համապատասխան կարգավորումների և հաճախականության: Խնամակալության գրանցումը համընդհանուր չէ. միայն այն երեխաներն, ովքեր ստանում են «կյանքի դժվարին իրավիճակում հայտնված» կամ «ծնողական խնամքից զրկված» կարգավիճակ և օգտվում են պետական սոցիալական որևէ ծառայություններից գրանցվում են «Մանուկ» տեղեկատվական համակարգում մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների աշխատակիցների կողմից՝ հիմնվելով խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից տրամադրված թղթային տեղեկատվության վրա:

Ծառայությունների մատուցում

Ծնողները և խնամակալները մասնակցում են խնամակալության պաշտոնական նշանակմանը վերաբերող վարչական գործընթացներին և երեխայի կարծիքը հաշվի է առնվում ըստ նրանց տարիքի ու հասունության:

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները պատասխանատու են երեխաներին նախապատրաստելու, աջակցելու և խորհրդատվություն տրամադրելու համար՝ մինչև խնամակալության պաշտոնական նշանակումը, սակայն իրականում դա չի կատարվում, քանի որ չկան մանրամասն ընթացակարգեր, թե ինչպես պետք է համապատասխանեցնել երեխաներին և խնամակալներին, ինչպես պարզել, թե որ բարեկամն է առավել համապատասխանում խնամակալի դերում, և թե ինչպես առավելագույնս հաշվի առնել երեխայի շահերը: Հնարավոր խնամակալներին

միայն որոշակի խորհրդատվություն է տրամադրվում խնամակալությունը գրանցելու համար պահանջվող փաստաթղթերի պատրաստման համար: Չկան գործընթացի կազմակերպման չափանիշներ՝ խթանելու ֆորմալ խնամակալության որակյալ տրամադրումը: Աջակցություն չի տրամադրվում երեխային խնամակալության հանձնելուց առաջ և հետո: Համաձայն ՀՀ կառավարության ընթացակարգերի, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը պետք է առնվազն կիսամյակը մեկ անգամ այցելի երեխաներին, այնուամենայնիվ, իրականում դա տեղի չի ունենում: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը միջամտում է միայն այն դեպքերում, երբ ընտանիքում առկա են բռնության, շահագործման կամ այլ կոնֆլիկտների/ճգնաժամային դեպքեր: Օրենքում կան որոշակի դրույթներ, որոնք սահմանում են խնամակալների պատասխանատվությունները, սակայն օրենքով հստակ սահմանված չէ, թե ինչ տեղի կունենա, եթե խնամակալները չեն պահպանում երեխայի խնամքի չափանիշները: Ոչ մի հատուկ աջակցություն չի տրամադրվում հաշմանդամություն ունեցող երեխաների խնամակալներին, բացառությամբ մեկ դրույթի. հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքի տարիների քանակը խնամակալի կենսաթոշակի հաշվարկում ներառվում են որպես աշխատանքային ստաժ՝ առավելագույնը 10 տարի:

Երեխաներն անմիջապես դուրս են գալիս խնամակալությունից իրենց 18 տարին լրանալուց հետո: Ոչ մի հատուկ ծառայություն կամ խորհրդատվություն նրանց չի տրամադրվում անցումային շրջանում:

Կադրեր/անձնակազմ

Խնամակալության և հոգաբարձության մարմինները և նրանց հանձնաժողովները պատասխանատու են խնամակալության վերաբերյալ որոշումներ կայացնելու և մշտադիտարկում իրականացնելու համար: Նրանք հիմնականում համայնքների ղեկավարներն ու համայնքապետարանների ավագ աշխատակիցներն են: Համայնքների խոշորացման գործընթացին զուգահեռ համայնքային սոցիալական աշխատողի հաստիքի առաջադրմամբ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների և սոցիալական աշխատողների համար դասընթացներ են կազմակերպվում դոնոր կազմակերպությունների և ՀԿ-ների աջակցությամբ: Այնուամենայնիվ, գոյություն չունի դասընթացի հստակ մեխանիզմ, որը կզարգացնի ֆորմալ խնամակալությանն աջակցելու և մշտադիտարկում իրականացնելու համար պատասխանատու անձնակազմի հմտությունները: Համայնքային և մարզային սոցիալական աշխատողները, սոցիալական ոլորտի պատասխանատուները, ովքեր տալիս են խնամակալության թույլտվություն, ունեն խնամակալության տրամադրմանը վերաբերող հստակ սահմանված աշխատանքի նկարագրեր և պատասխանատվություններ

Գոյություն չունի մասնագետների վերապատրաստման հաստատված մեխանիզմ, որը միտված կլինի զարգացնել ֆորմալ խնամակալներին տրամադրվող աջակցության մեջ ներգրավված անձնակազմի հմտությունները:

Մշտադիտարկում և գնահատում, տեղեկատվական համակարգեր

Չկա հատուկ համակարգ ֆորմալ խնամակալության ներքո գտնվող երեխաների գրանցման և նրանց մատուցվող ծառայությունները վերահսկելու համար: Միայն ծնողական խնամքից զրկված խնամակալության հանձնված երեխաներն են գրանցված մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների կողմից «Մանուկ» տեղեկատվական համակարգում: Ֆորմալ խնամակալության ծառայությունները մշտադիտարկելու համար ստանդարտ ցուցանիշներ մշակված չեն: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարա-

ության ներսում կամ առընչվող այլ նախարարություններում և ՔՀԿ-ներում չկան խնամակալության վերաբերյալ տվյալների հավաքագրման, հաշվետվությունների պատրաստման ընթացակարգեր: Գոյություն չունի վերապատրաստման հստակ մեխանիզմ, որը կզարգացնի ֆորմալ խնամակալների մշտադիտարկում իրականացնող անձնակազմի հմտությունները:

Միևնույն ժամանակ, «Մանուկ» տեղեկատվական համակարգը պարունակում է ծնողական խնամքից զրկված կարգավիճակով և ֆորմալ խնամակալության ներքո գտնվող երեխաների մասին տեղեկատվություն, իսկ առկա տվյալները հնարավոր է առանձնացնել ըստ երեխաների տարիքի, սեռի, հաշմանդամության, բնակության վայրի և խնամքի տևողության չափորոշիչների:

Սոցիալական նորմեր և գործելաոճ

Չեն կազմակերպվում հանրային իրազեկման միջոցառումներ տեղեկացնելու, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամակալությունը ստանձնած անձանց որևէ ֆինանսական փոխհատուցման չի տրամադրվում: Չկա հանրային իրազեկման կամ քարոզչության ռազմավարություն, որը խթանում է բարեկամի կողմից ֆորմալ խնամակալությունը որպես երեխայի խնամքի երկրորդ լավագույն միջոց (եթե երեխայի վերամիավորումը կենսաբանական ընտանիքի հետ կամ որդեգրումը հնարավոր չէ իրականացնել):

Ֆինանսավորում

Կառավարության կողմից ֆինանսական միջոցներ չեն ուղղվում խնամակալությանն աջակցելու կամ մշտադիտարկում իրականացնելու նպատակներով: Կառավարությունը չի տիրապետում միջազգային դոնոր կազմակերպությունների և մասնավոր հատվածի կողմից խնամքի այդ տեսակին հատկացվող ֆինանսական միջոցների մասին տեղեկատվության:

Ոչ ֆորմալ խնամակալություն

Ոչ ֆորմալ խնամակալության մասին չկա որևէ դրույթ կամ անդրադարձ պետական քաղաքականության կամ օրենսդրության մեջ: Գոյություն չունի խնամքի այս տեսակի դեպքերի մասին տեղեկատվություն ստանալու ընթացակարգ, որի օգնությամբ կարելի է իրականացնել մշտադիտարկում: Մինչդեռ չհսկվող ոչ ֆորմալ խնամակալությունն իր մեջ թաքնված ռիսկեր է պարունակում երեխայի նկատմամբ հնարավոր բռնության կամ շահագործումների դեպքերի դրսևորման: Սահմանված չեն խնամքի տրամադրմանը վերաբերող դերակատարումները և պատասխանատվությունները: Խնամակալներն իրավունք չունեն գործելու երեխայի անունից և չեն կարող դիմել կամ օգտվել որևէ սոցիալական ծառայությունից քանի դեռ նրանք պաշտոնապես չեն գրանցել իրենց խնամակալությունը կամ հոգաբարձությունը: Կառավարության կողմից ֆինանսական միջոցներ չեն ուղղվում խնամակալությանն աջակցելու կամ մշտադիտարկման նպատակներով: Կառավարությունը չի տիրապետում միջազգային դոնոր կազմակերպությունների և մասնավոր հատվածի կողմից խնամքի այդ տեսակին հատկացվող ֆինանսական միջոցների մասին տեղեկատվությանը:

Այլընտրանքային խնամքի այլ ձևեր

Ոչ ազգականի կողմից ոչ ֆորմալ խնամքը ներառում է ընտանեկան միջավայրում տրամադրված ցանկացած ոչ ֆորմալ՝ ներքին համաձայնությամբ իրականացվող խնամք, որի դեպքում երեխային որոշ ժամանակով կամ անորոշ ժամկետով խնամում են ոչ բարեկամ կամ մոտիկ ծանոթ անձինք: Սա հայտնի է որպես «ոչ ազգականի ոչ ֆորմալ խնամք», որը տեղի է ունենում Հայաստանում, սակայն չունի իրավական ձևակերպում:

Գոյություն չունեն ոչ ազգականի կողմից ոչ ֆորմալ խնամակալության վերահսկման մեխանիզմներ, որոնք կկանխեն երեխայի հնարավոր շահագործման, անտեսման, աշխատեցման և այլ դեպքերը: Կառավարության կողմից խնամքի այս տեսակին օժանդակելու քայլերը առաջնահերթ չեն համարվում, իսկ գնահատման որոշ մասնակիցների կարծիքով, դա Հայաստանում ամենակարևոր խնդիրներից մեկն է, որը պետք է լուծվի Հայաստանում այլընտրանքային խնամքի համակարգի զարգացմանը զուգահեռ՝ կանխելու և խուսափելու երեխայի իրավունքների խախտման հնարավոր դեպքերից:

Գծապատկեր 9. Այլընտրանքային խնամքի այլ ձևեր բաժնի գնահատման արդյունքների պատկերը



Գոյություն չունեն իրավական դրույթներ կամ քաղաքական մոտեցումներ, որոնք վերաբերում են ոչ ազգականի կողմից ոչ ֆորմալ խնամքին և չկան որևէ պաշտոնական ընթացակարգեր մշտադիտարկելու նման խնամքի կազմակերպումը երկրում: Չկա որևէ տեղեկատվություն, թե քանի երեխա է գտնվում ոչ ֆորմալ ոչ ազգականի խնամքի ներքո Հայաստանում: Խնդիրը կայանում է նրանում, որ բարեկամ չհանդիսացող անձանց կողմից ոչ ֆորմալ խնամակալության տակ գտնվող երեխաների մասին տեղեկատվություն չկա և նման տեղեկատվությունը ստանալը չի հստակեցված, իսկ նման խնամքի դեպքերը հնարավոր չէ հեշտությամբ հայտնաբերել առանց որևէ համակարգի, որը կգրանցի խնամքի կազմակերպման նման դեպքերը: Բացի այդ, խնամքի այս տեսակի մասով չկան համապատասխան մասնագետներ, իսկ խնամքի մասնագետները, չունեն այս բնագավառի համար նշանակված որևէ դեր կամ պարտականություն, և չկան ոչ մի նախատեսված պետական ֆինանսական միջոցներ որևէ աջակցություն տրամադրելու համար:

Որդեգրում

Որդեգրումը իրավաբանական այն ակտն է, որի համաձայն որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ: Որդեգրումը պետք է կատարվի հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը և հիմնվելով ապագա որդեգրողի և երեխայի համադրելիության արդյունքների վրա համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված չափանիշների:

Հոդված, կետ 1. ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, 2018 թ հունվար

Հայաստանը ստորագրել է Հաագայի կոնվենցիան, սակայն տեղական օրենսդրությունը դեռևս պետք է համապատասխանեցվի դրա պահանջներին, մասնավորապես օտարերկրյա որդեգրումների ժամանակ որդեգրողի առաջնահերթ թեկնածու հանդիսացող անձանց և երեխայի համապատասխանեցման հարցում և երեխային իր որդեգրման մասին տեղեկացնելու հարցում:

Պետական քաղաքականությունը հիմնականում սահմանում է ներքին և օտարերկրյա որդեգրման կանոններն ու ընթացակարգերը:

Գործընթացի կազմակերպման չափանիշներ սահմանված են, սակայն դրանց կիրառման որակը գոհացուցիչ չէ: Ոչ մի մասնագիտական աջակցություն չի տրամադրվում ընտանիքներին որդեգրման ընթացքում և հետո, բացի վարչական ուղղորդումներից:

Որդեգրումը միայն պետական գործընթաց է: Ոչ պետական կամ հասարակական կազմակերպությունները լիազորված չեն մասնակցելու որդեգրման գործընթացում: Որդեգրման վերաբերյալ հասարակական կարծիքը երկակի է՝ որդեգրումը ընդհանուր առմամբ դրական է ընդունվում, սակայն որդեգրման հետ կապված կոռուպցիոն դեպքերը բացասական ստվեր են գցել այդ կարևոր գործընթացի վրա: Ավելի հաճախ գրանցվում է 0-ից 3 տարեկան երեխաների որդեգրումը, 10 տարեկանից բարձր երեխաները շատ հազվադեպ են որդեգրվում: Հաշմանդամություն ունեցող երեխաները որդեգրվում են հիմնականում օտարերկրյա քաղաքացիների կողմից: Առկա է որդեգրողի առաջնահերթ թեկնածուների և որդեգրած երեխաների հաշվառման համակարգ: Որդեգրման համար որևէ ֆինանսավորում չի հատկացվում: Որդեգիր ծնողները վճարում են պետական տուրք: Որդեգրումից հետո երեխայի մշտադիտարկում չի իրականացվում, բացառությամբ օտարերկրյա որդեգրման դեպքերի, երբ Հայաստանի հյուպատոսական ծառայություններին տվյալ երկրի սոցիալական ծառայությունների կողմից պարբերաբար տրամադրվում են ընթացիկ հաշվետվություններ տվյալ երկրում որդեգրված երեխաների մասին:

Գծապատկեր 10. Որդեգրում բաժնի գնահատման արդյունքների պատկերը



Կառավարում և առաջնորդում

Երկրի օրենսդրությամբ որդեգրումը համարվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար խնամքի նախընտրելի տարբերակ:[18] Հայաստանը վավերացրել է երեխաների պաշտպանության և միջպետական որդեգրումների բնագավառում համագործակցության մասին 1993թ. Հաագայի կոնվենցիան: Սակայն, ապագա որդեգիր ծնողների և երեխաների համապատասխանեցման մեխանիզմների վերաբերյալ դրույթները, որոնք կապահովեն լիարժեք համապատասխանեցում կոնվենցիայի պահանջներին, դեռևս նախագծային փուլում են: 10 տարեկան և բարձր տարիքի երեխաները պետք է տան իրենց գրավոր համաձայնությունը որդեգրման համար: Գոյություն ունի միայն պետական տուրք որդեգրման համար, ոչ մի ուրիշ վճարումներ չեն պահանջվում: Միջպետական որդեգրումների դեպքերում առկա են հաստատված մեխանիզմներ որդեգրող ծնողների երկրների իշխանությունների հետ համագործակցության համար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը վարում է ապագա որդեգիր ծնողների և որդեգրման դեպքերի տվյալների բազան: ՀՀ կառավարությունը պլանավորում է վերանայել պետական քաղաքականությունը որդեգրման առավել հստակ ընթացակարգեր մշակելու համար և ներդնելու որդեգրման գործընթացների և որդեգրվող երեխաների մշտադիտարկման մեխանիզմներ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը որդեգրման կարգի վերաբերյալ նոր որոշումը կներկայացնի 2018 թվականի հունվարի 18-ին Ընտանեկան օրենսգրքում փոփոխությունների ու լրացումների ընդունումից հետո 6 ամսվա ընթացքում:

Նոր ընտանեկան օրենսգիրքը հստակ սահմանում է, որ որդեգրումը պետք է կատարվի հաշվի առնելով երեխայի լավագույն շահը և հաշմանդամություն ունեցող երեխաները կարող են որդեգրվել միայն այն դեպքում, երբ ապագա որդեգիր ծնողները ի վիճակի են ապահովելու երեխայի խնամքի և բուժման համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Համապատասխան պետական մարմիններն, ովքեր ունեն իրենց դերն ու պարտականությունները որդեգրման գործընթացում, ստացել են ուղղորդում օրենսդրության և ընթացակարգերի վերաբերյալ, սակայն նրանց համար վերապատրաստումներ չեն կազմակերպվել նոր պետական քաղաքականության վերաբերյալ: Գոյություն չունի որդեգրման վերաբերյալ առանձին համայնքային քաղաքականություն, ամբողջ երկրում միասնաբար կիրառվում է միայն ընտանեկան օրենսգիրքը և համապատասխան որոշումները՝ ներքին կամ օտարերկրյա որդեգրման համար: Որդեգրումը միայն պետության բացառիկ իրավունքն է:

Ծառայությունների մատուցում

Առկա են որդեգրման պատշաճ կազմակերպումն ապահովող չափանիշներ, սակայն դրանք ճիշտ չեն պահպանվում: Այսպիսով, ապագա որդեգիր ծնողներն անձամբ և առցանց ստանում են հստակ խորհրդատվություն օրենսդրության պահանջների և փաստաթղթերի վերաբերյալ, սակայն

---

[18]ՀՀ ընտանեկան օրենսգիրք; Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքը թիվ 59, մայիսի 29, 1996 թ., Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին ՀՀ օրենք 2002 թ. սեպտեմբերի 24 թիվ 411-Ն, ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 18-ի թիվ 269-Ն որոշում՝ որդեգրման կարգը և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1919-ն որոշման մեջ լրացում կատարելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին

ոչ ապագա որդեգիր ծնողները, և ոչ էլ երեխաները չեն ստանում աջակցություն մինչ որդեգրումը և որդեգրումից հետո, մասնավորապես չի կատարվում հատուկ նախապատրաստում, աջակցություն և/կամ խորհրդատվություն որդեգրման ընթացքում և որդեգրումից հետո: Բացի այդ, միշտ չէ որ մասնագիտացված աջակցություն է տրամադրվում հաշմանդամություն ունեցող երեխաների ապագա որդեգիր ծնողներին և որդեգրած ծնողներին, քանի որ ծառայությունները պատշաճ կերպով մշակված չեն: Ապագա որդեգիր ծնողներին և երեխաներին մատուցվող ծառայությունների որակի չափանիշները սահմանված չեն:

Ծնողները և խնամակալները պետք է մասնակցեն որդեգրման կազմակերպմանը վերաբերող դատական ընթացակարգերին, սակայն այս պահանջը գործնականում չի կիրառվում: Որդեգրման դատական կամ վարչական գործընթացներում երեխաների կարծիքը հիմնականում հաշվի է առնվում՝ իրենց տարիքին և հասունությանը համապատասխան:

Օտարերկրյա որդեգրումից հետո մշտադիտարկում իրականացնելու մեխանիզմները առկա են և կարգավորվում են ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական ծառայությունների կողմից և զեկուցվում են ՀՀ արդարադատության նախարարություն: Ներքին որդեգրման մշտադիտարկում իրականացնելու մեխանիզմները պետք է կանոնավոր կիրառվեն խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից սակայն հազվադեպ են կիրառվում:

Կադրեր/ անձնակազմ

Պետական սոցիալական աշխատողները, ներառյալ մարզպետարանների աշխատակազմը և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները, որոնք պատասխանատու են ներքին որդեգրման համար և ՀՀ արդարադատության նախարարության անձնակազմը, որը պատասխանատու է օտարերկրյա որդեգրման համար, ունեն սահմանված որակավորումներ և աշխատանքի նկարագրեր՝ որդեգրման ժամանակ իրենց դերերի և պարտականությունների վերաբերյալ: Հասարակական կազմակերպությունների սոցիալական աշխատողները չունեն որևէ դերակատարում որդեգրման գործընթացում: Իրավաբանների ու դատավորների համար ևս սահմանված են որակավորման պահանջներ և աշխատանքի նկարագրեր՝ որդեգրման ժամանակ իրենց դերերի և պարտականությունների վերաբերյալ: Սակայն, ներկայումս գոյություն չունեն վերապատրաստման մեխանիզմներ, որոնք միտված են զարգացնելու որդեգրման կազմակերպման մշտադիտարկում և աջակցություն տրամադրող աշխատակիցների հմտությունները:

Մշտադիտարկում և գնահատում, տեղեկատվական համակարգեր

Առկա են ստանդարտ ցուցանիշներ ներքին որդեգրման դեպքերի մշտադիտարկման համար: Օտարերկրյա որդեգրման մշտադիտարկումը իրականացվում է այն երկրների սոցիալական աշխատողների կողմից, որտեղ երեխան որդեգրվել է և մշտադիտարկման արդյունքները ներկայացվում են ՀՀ արդարադատության նախարարություն:

Ներքին և օտարերկրյա որդեգրումների վերաբերյալ տվյալները հնարավոր է ձեռք բերել ՀՀ ԱՎԾ-ի տարեկան հրապարակումներից[19]: Որդեգրման մասին տվյալները ՀՀ աշխատանքի և

[19] Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին, ՀՀ ԱՎԾ, http://www.armstat.am/am/?nid=82&year=2017

սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացվում են ՀՀ ԱՎԾ-ին և հասանելի են ըստ երեխայի տարիքի, սեռի և հաշմանդամության կարգավիճակի: Տվյալները բաղդատված են նաև ըստ երեխաների ընտանիքի կարգավիճակի (մանկատան սան, միայնակ ծնողի, ամուսնալուծված ընտանիքի երեխա և այլն), առողջական վիճակի (առողջության խնդրի տեսակը, եթե առկա է), ազգության, քաղաքացիության և ապագա որդեգիր ծնողների տարիքի: Բացի այդ, բոլոր տվյալները կարող են ներկայացվել ըստ մարզերի: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան մասնագետների դերը և պարտականությունները որդեգրման վերաբերյալ ցուցանիշների հավաքագրման և հաշվետվության վերաբերյալ չեն ամրագրված: Բացի այդ, տվյալների որակի ապահովման գործընթացը հստակ չէ:

Սոցիալական նորմեր և գործելաոճ

Ներկայումս չկա քարոզչություն կամ հանրային իրազեկման ռազմավարություն, որը կնեռառի երեխաների որդեգրման հետ կապված դրական վերաբերմունքի ձևավորումը: Իրազեկման բարձրացման որևէ գործողություն չի կատարվել՝ խրախուսելու ներքին որդեգրումը որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի տարբերակ:

Ֆինանսավորում

Ֆինանսական ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են որդեգրման ընթացակարգերի համար, գնահատված չեն, և որդեգրման ծառայությունների ծախսերն ընդգրկված չեն պետբյուջեում համապատասխան տողով՝ ոչ պետական և ոչ էլ համայնքային: Որդեգրման գործընթացներում ներգրավված մասնագետները վճարվում են համապատասխան գործակալությունների և նախարարությունների կողմից, որտեղ իրենք աշխատում են:

Ընտանիքների վերամիավորում

2009 թ.-ին ՀՀ կառավարությունը նախաձեռնել էր մի ծրագիր, որի նպատակն էր աջակցել երեխաների վերամիավորմանն իրենց ընտանիքներին մանկատների կամ խնամքի հաստատությունների վերակազմավորումից հետո: Ծրագիրն իրականացվում էր «Առավոտ» ՀԿ-ի կողմից: Մոտ 900 երեխաներ վերադարձել են իրենց ընտանիքներ և աջակցություն են ստացել20 այս ՀԿ-ի կողմից 2010-ից 2015 թթ.-ի ընթացքում: «Առավոտ» ՀԿ-ի ծրագիրն իրականացվում էր միայն Հայաստանի Լոռու և Շիրակի մարզերում: 2015 թ.-ից ընտանիքների վերամիավորման աշխատանքներ են նախաձեռնվել են ԱՄՆ ՄԶԳ/ DCOF- ի կողմից ֆինանսավորվող և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացվող «Խոցելի երեխաների սոցիալական ներառում» ծրագրի շրջանակներում:[21]

---

[20] 2016 թ.-ի մայիսի 26-ի ՀՀ կառավարության արձանագրության բանաձև թիվ 18 «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի կազմակերպման» հայեցակարգի հաստատում

[21]ՅՈՒՆԻՍԵՖ-ը ծրագիր է իրականացնում էր «Հույսի կամուրջ» ՀԿ-ի, «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի, «Վորլդ Վիժն Հայաստան» գրասենյակի և «Փրկեք երեխաներին» հետ միասին

Երեխային իր կենսաբանական ընտանիք վերադարձնելու նպատակով խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ ըստ անհրաժեշտության համագործակցելով ՀՀ մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների կամ բաժինների, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների, երեխաների աջակցության կենտրոնների և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշմամբ սահմանված միջգերատեսչական սոցիալական համագործակցության մյուս կողմերի հետ շարունակական աշխատանք է իրականացնում նաև երեխայի ծնողների և (կամ) ազգականների հետ, այդ թվում՝ պարզում է նրանց գտնվելու վայրը, համակողմանիորեն գնահատում նրանց սոցիալ-տնտեսական, առողջապահական, բարոյահոգեբանական խնդիրները և ձեռնարկում այդ խնդիրների լուծմանն ուղղված միջոցներ:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգի և չափանիշների վերաբերյալ 2016 թ.-ի մայիսի 26-ի ՀՀ կառավարության N 551- Ն որոշում, հոդված 2, կետ 11:

Հայաստանում 2016 թվականից վերանայվել է պետական քաղաքականությունն ու օրենսդրական շրջանակը և հստակեցվել են ընտանիքի վերամիավորման ընթացակարգերն ու կանոնակարգերը: Սակայն, այս վերանայումները հստակորեն չեն սահմանել ծառայություններ մատուցողների դերերն ու պարտականությունները, չկա որևէ մեթոդական ուղեցույց, որով կարելի է ուղղորդվել ընտանիքի հետ երեխայի արդյունավետ վերամիավորումն ապահովելու համար: Ընդհանուր առմամբ, ծառայությունները, որոնք տրամադրվում են խոցելի ընտանիքիներին, որտեղ կան խնամքի հաստատություններ վերադառնալու ռիսկի տակ գտնվող երեխաներ, կանխարգելող բնույթ չեն կրում, այլ ավելի շատ արձագանքող բնույթ ունեն: Դեպք վարողներն ու խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները պարտավոր են վերահսկել վերամիավորման գործընթացները և ապահովել երեխայի լավագույն շահը: Նրանք նույնպես պատասխանատու են վերամիավորումից հետո անհրաժեշտ աջակցող միջոցառումների իրականացման համար: Սակայն ոչ բոլոր դեպք վարողներն ու խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներն են վերապատրաստվել և ոչ բոլորն ունեն անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ՝ վերահսկելու ծառայությունների մատուցումը վերամիավորումից հետո: Սոցիալական, առողջապահական և կրթական ոլորտների միջգերատեսչական համագործակցությունը թույլ է թե ազգային, թե մարզային մակարդակներում: Համայնքներում ընտանիքի վերամիավորմանն աջակցելու համար միշտ չէ, որ առկա են համապատասխան ծառայություններ և ռեսուրսներ: «Մանուկ» տեղեկատվական համակարգը պարբերաբար թարմացվում է ընտանիքների հետ վերամիավորվող երեխաների մասին տեղեկատվությամբ, սակայն չկա մշտադիտարկման մեխանիզմ վերահսկելու ընտանիքների վերամիավորման ծառայությունների որակը: Վերամիավորման համար հատկացված ֆինանսական միջոցները ներառում են միայն «Առավոտ» ՀԿ-ին հատկացվող բյուջեի տողը և դա բավարար չէ ամբողջ երկրի համար:

Գծապատկեր 11. Ընտանիքների վերամիավորում բաժնի գնահատման արդյունքների պատկերը



Կառավարում և առաջնորդում

Հայաստանում այլընտրանքային խնամքի համակարգի զարգացման 2016-2020թթ. ազգային ռազմավարությունը և 2017-2021թթ. Երեխաների իրավունքների պաշտպանության ռազմավարությունը շեշտադրում են ընտանիքում կամ ընտանիքի տիպի միջավայրում երեխայի ապրելու կարևորությունը: 2016 թ.-ի մայիսի 26-ի ՀՀ կառավարության N 551- Ն որոշումը «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգի և չափանիշների վերաբերյալ» սահմանում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի դերն աջակցելու ընտանիքներին երեխաների ընտանիք վերադարձից հետո: ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի թիվ 743-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիքներ կազմակերպելու (բեռնաթափում) և երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելման ծրագիրը հաստատելու մասին կարգավորում է «Առավոտ» ՀԿ-ի ծրագրի իրականացումը Լոռու և Շիրակի մարզերում:

Ծրագրի նպատակն է նպաստել երեխաների խնամքի և դաստիարակությանը ընտանիքներում՝ տրամադրելով նյութական աջակցություն ընտանիքներին երեխաներին տանը պահելու համար և կանխելով նրանց վերադարձը խնամքի հաստատություններ: Սակայն, չկա հստակ ռազմավարություն, կանոնակարգ կամ ուղեցույց ընտանիքի վերամիավորման և մերձեցման համար ոչ ազգային, ոչ էլ համայնքային մակարդակներում: Դեպք վարողները, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները և «Առավոտ» ՀԿ-ի աշխատակիցները, ինչպես նաև մարզպետարանների/ Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակիցները ստացել են միայն ուղղորդում պետական քաղաքականության վերաբերյալ: Ոչ մի դասընթաց չի կազմակերպվել նպաստելու բարեփոխման և տարբեր կողմերի դերերի ու պարտականությունների վերաբերյալ համընդհանուր ընկալմանը, բացառությամբ այն մարզերի, որոնք ընդգրկված են ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացվող «Խոցելի երեխաների սոցիալական ներառում Հայաստանում» ծրագրում:

Երեխայի լավագույն շահը հստակ սահմանված է ՀՀ կառավարության որոշմամբ[22], սակայն չկան մեխանիզմներ սահմանելու և հետևելու երեխաների լավագույն շահերը ընտանիքների վերամիավորման գործընթացում: Նմանապես, կանոնադրությունը կոչ է անում հաշվի առնել երեխայի կարծիքը վերամիավորման նախապատրաստման ժամանակ, սակայն գործնականում երեխաների տեսակետները ինքնուրույն չեն ձևավորվում: Կարծիքները հաճախ ձևավորվում են ծնողների ճնշումների կամ հաստատությունների սոցիալական աշխատողների ազդեցության արդյունքում:

Ծառայությունների մատուցում

Հատուկ նախապատրաստական, աջակցության և/ կամ խորհրդատվական ծառայություններ ընտանիքներին երեխաների վերամիավորումից առաջ, ընթացքում և հետո պետական ֆինանսավորմամբ մատուցվում են «Առավոտ» ՀԿ-ի կողմից (բնամթերային աջակցություն, կոմունալ վճարումներ, հոգեբանական, ֆինանսական, և այլն), ինչպես նաև Վորլդ Վիժն միջազգային ՀԿ-ի կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ/ DCOF-ի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում: Պետական բյուջեով ֆինանսավորվող ցերեկային խնամքի կենտրոնները նույնպես պարտավորվում են աշխատել երեխաների և ընտանիքների հետ վերամիավորումից հետո և տրամադրել հոգեբանական և խորհրդատվական աջակցություն: [23] Սակայն այս ծառայությունները մատուցվում են միայն որոշակի մարզերում, որտեղ գործում են նշված կազմակերպությունները: Մասնագիտացված աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների վերաինտեգրման համար հազվադեպ է տրամադրվում: Շատ դեպքերում այս երեխաները տեղափոխվում են մասնագիտացված խնամքի հաստատություններ:

Ընդհանուր առմամբ, ինչպես ցույց տվեց գնահատումը, ընտանիքի վերամիավորման ծառայությունները լավ չեն համակարգված: Ավելին, այս ծառայությունները չեն ապահովում կայուն բարելավում ընտանիքների համար, որով կկանխվի երեխաների վերադարձը խնամքի հաստատություններ՝ ՀԿ-ների կողմից աջակցության տրամադրումը դադարեցնելուց հետո: Գործընթացների չափանիշները հստակ չեն, ինչը դժվարացնում է դեպք վարողների և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար գործնականորեն կիրառել դրանք: ՀԿ-ները մատուցում են ծառայությունները հիմնվելով իրենց չափանիշների և կանոնակարգերի վրա:

Գնահատումը ցույց տվեց, որ ընտանիքի հետ վերամիավորման ծառայությունների որակը սահմանված չէ և դժվար է վերահսկել ծառայությունների մատուցումը: Առկա է «Առավոտ» ՀԿ-ի և պետական ֆինանսավորմամբ գործող ցերեկային խնամքի կենտրոնների ծառայությունների որակի ապահովման մշտադիտարկման մեխանիզմ, սակայն այն չի արտացոլում ընտանիքի վերամիավորման/ մերձեցման ծառայությունները: Հավաքագրված տվյալները ներառում են շահառու

---

[22] ՀՀ կառավարության կողմից 2016թ. մայիսի 26-ի որոշում «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները», հոդված 1, կետ 3, ենթակետ 4

[23] Հիմնականում Երևանում, Գյումրիում, Սյունիքի և Լոռու մարզերում. որտեղ շուրջօրյա խնամք հաստատությունները վերակազմավորվել են երեխաների հոգածության ցերեկային կենտրոնների կամ մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների: Ինչպես նշվեց քննարկումների ժամանակ Արարատի մարզի ներկայացուցչի կողմից. ոչ մի աջակցություն չի ցուցաբերվում այն ընտանիքներին, որտեղ վերադարձել են հաստատությունների վերակազմավորման արդյունքում դուրս բերված երեխաները, որի պատճառով երեխաները հայտնվում են շատ վատ սոցիալ-տնտեսական իրավիճակում

երեխաների թիվը, բնաիրային աջակցության չափը, որը ստանում են ընտանիքները, ինչպես նաև ներգրավված աշխատողների քանակը:

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները պետք է պարբերաբար այցելեն վերամիավորված ընտանիքներ, սակայն այդ այցելությունները կատարվում են միայն այն դեպքում, երբ ընտանիքում կա խնդիր, որին պետք է արձագանքել, բայց ոչ թե մշտադիտարկելու ընտանիքի վիճակը և երեխայի խնամքը: Բացի այդ, չկան մեխանիզմներ մշտադիտարկելու դեպք վարողների, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կամ ցերեկային խնամքի կենտրոնների աջակցությունը ընտանիքի վերամիավորմանը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերահսկողական այցերը «Առավոտ» ՀԿ սահմանափակվում են գնումների գործընթացի ստուգումներով և բաշխված աջակցության աուդիտով:

Կադրեր/աշխատակազմ

Երեխաների ընտանիքների հետ վերամիավորման գործընթացում ներգրավված մասնագետներն ունեն իրենց աշխատանքի նկարագրերը, սակայն նրանք չունեն ընտանիքի հետ երեխաների վերամիավորման և վերաինտեգրման համար հստակ մասնագիտական որակավորման պահանջներ և պաշտոնի նկարագրեր: Ընդհանուր առմամբ, չկա հստակ սահմանված պատասխանատու մարմին ընտանիքի վերամիավորման գործընթացի համար, գործընթացում ներգրավված մասնագետները ունեն սահմանված գործառույթներ իրենց համար, բայց գոյություն չունեն հստակ մեխանիզմներ, որպեսզի պատասխանատվություն կրեն ընտանիքի վերամիավորման որակի համար: Համաձայն դեպք վարողների, ցերեկային խնամքի կենտրոնների և խնամքի հաստատությունների սոցիալական աշխատողների աշխատանքի նկարագրությունների, նրանք պետք է աշխատեն ընտանիքների հետ և աջակցեն ընտանիքների վերամիավորմանը: Կադրերի վերապատրաստումները այն մարզերում, որտեղ իրականացվում է հաստատություններից երեխաների դուրսբերման ծրագիրը, կազմակերպվում են դոնոր կազմակերպությունների կողմից: Սակայն չկան որևէ ստանդարտացված դասընթացներ ընտանիքի վերամիավորման ծառայությունների մատուցման մեջ ներգրավված բոլոր դերակատարների համար:

Մշտադիտարկում և գնահատում, տեղեկատվական համակարգեր

Ընտանիքների հետ վերամիավորված երեխաների վերաբերյալ տվյալները հասանելի են «Մանուկ» տեղեկատվական համակարգում: Տեղեկատվական համակարգը պարբերաբար թարմացվում է դեպք վարողների կամ մարզպետարանների/ Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետների կողմից: «Մանուկ» տվյալների բազան հնարավորություն է տալիս տվյալներ ստանալ երեխաների վերաբերյալ ըստ հետևյալ բաշխվածության՝ երեխայի տարիքի, սեռի, բնակության վայրի, սովորելու կարգավիճակի և նախքան վերամիավորվելը ստացած խնամքի ծառայությունների տեսակի (մանկատանը, գիշերային խնամքի հաստատությունում կամ խնամատար ընտանիքում): Սակայն, հնարավոր չէ տվյալներ ստանալ ընտանիքում մնալու տևողության վերաբերյալ և հաշմանդամության տեսակների, ինչպես նաև թե ինչ է տեղի ունենում ընտանիքի վերամիավորումից հետո:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակել է որոշ ցուցանիշներ և ունի մշտադիտարկման և գնահատման մեթոդաբանություն՝ մշտադիտարկելու «Առավոտ» ՀԿ-ի ծրագիրը, սակայն երկրում չկան ստանդարտ ցուցանիշներ և գործիքներ ընտանիքի վերամիավորման և մերձեցման ծառայությունների արդյունավետ մշտադիտարկման համար: Աշխա-

տանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ընտանիքի վերամիավորման ծառայությունների մշտադիտարկումը սահմանափակվում է միայն կենսաբանական ընտանիքներ վերադարձած երեխաների ընդհանուր թիվը դիտարկելով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տարեկան ՄԼԳ հաշվետվությունները «Առավոտ» ՀԿ-ի ծրագրի վերաբերյալ ներառում են նաև շահառուների կարծիքը ստացված ծառայությունների որակի վերաբերյալ և նրանց գոհունակությունը երեխաների խնամքի հաստատություններ վերադարձը կանխարգելելու հարցում կառավարության աջակցությունից:

Ընտանիքների վերամիավորման ցուցանիշների հավաքագրման և հաշվետվությունների մշակման համար դերերն ու պատասխանատվությունները հստակ բաշխված չեն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում և կրթության և գիտության նախարարությունում, և տվյալներ չեն փոխանակվում այս երկու առանցքային նախարարությունների միջև: «Առավոտ» ՀԿ-ի տվյալները պարբերաբար հաղորդվում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

Երեխաների ընտանիքների հետ վերամիավորմանն ու մերձեցմանն առնչվող տվյալների որակի ապահովման աշխատանքներ չեն իրականացվում, քանի որ այդ գործողության համար համապատասխան մասնագետներ չկան:

Սոցիալական նորմեր և գործելաոճ

Կազմակերպվում են որոշ հանրային իրազեկման և քարոզչության միջոցառումներ, որոնք նախաձեռնվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և գործընկեր ՀԿ-ների, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից և ուղղված են իրազեկելու և բարձրացնելու հանրային գիտակցումը երեխաների՝ ընտանիքների հետ վերամիավորման կարևորության մասին, երեխաներին հաստատություններում կամ այլընտրանքային խնամքի այլ տեսակներում տեղավորելու փոխարեն: Այս միջոցառումները հավասարապես կազմակերպվել են ընդհանուր հանրության, պետական և տեղական կառավարման մարմինների աշխատողների, դեպք վարողների, սոցիալական աշխատողների և երեխաների խնամքով զբաղվող այլ աշխատողների համար: Միևնույն ժամանակ, գոյություն չունի հանրային իրազեկման կամ քարոզչության ռազմավարություն, որը խթանում է ընտանիքների վերամիավորման և մերձեցման անհրաժեշտությունը:

Ֆինանսավորում

Երեխաների ընտանիքների հետ վերամիավորման և մերձեցման գործընթացների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը գնահատվել են դոնորների աջակցությամբ: Բյուջեում երեխաների ընտանիքների հետ վերամիավորման և մերձեցման գործընթացների իրականացման ծախսերի տողը ներառում է միայն «Առավոտ» ՀԿ ծրագիրը: Հատկացված միջոցները տրամադրվում են ամեն տարի սկսած 2009 թվականից: Սակայն այդ միջոցները բավարար չեն ամբողջ երկրում ընտանիքների վերամիավորման ծառայություններն ապահովելու համար: Ընտանիքների վերամիավորման ծառայությունները Երևանում և Սյունիքի մարզերում իրականացվում են ԱՄՆ ՄԶԳ/ DCOF- ի և SOAR հայկական բարեգործական հիմնադրամի կողմից: Սակայն, մասնավոր հատվածի և միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող ֆինանսական միջոցները պարբերաբար չեն հաշվառվում պետության կողմից:

Հաստատություններից երեխաների դուրսբերում, համակարգի վերակազմավորում

Ակտիվորեն շարունակել երեխաների խնամքի ու պաշտպանության կենտրոնացված մեծ հաստատությունների (մանկատներ ու երեխաների խնամքի ու պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ) բեռնաթափում՝ նպատակ ունենալով տվյալ հաստատություններում բնակվող բոլոր երեխաների վերադարձնել իրենց ընտանիքներ առաջիկա երկու, երեք տարիների ընթացքում և տրամադրել ընտանիքի նման այլընտրանքային խնամքի ծառայություններ այն դեպքերում, երբ ընտանիքի հետ վերամիավորվելը հնարավոր չէ:

2014թ. նոյեմբերի 13-ի ՀՀ կառավարության թիվ 1273-Ն որոշում կետ 22

2007թ.-ից սկսած Հայաստանը նախաձեռնել է խնամքի հաստատությունների բեռնաթափումը՝ փակելով 17 շուրջօրյա խնամքի հաստատություններ/հատուկ դպրոցներ և հիմնելով գիշերային խնամքի կենտրոններ և բժշկա-մանկավարժական-հոգեբանական գնահատման կենտրոններ՝ խոցելի խմբի երեխաների համար, աջակցելու ներառական կրթության կազմակերպումը:

2009թ.ին ՀՀ Կառավարությունն սկսեց մանկատներից երեխաների դուրսբերումը. պայմանագիր կնքվեց «Առավոտ» ՀԿ-ի հետ աջակցելու Լոռու մարզում երեխաների իրենց ընտանիքների հետ վերամիավորմանը:

2014թ.-ի հուլիսի 17-ի թիվ 743-Ն որոշմամբ ՀՀ Կառավարությունը հաստատեց խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիքներ կազմակերպման (բեռնաթափում) և երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելման ծրագիրը: Ծրագրով որոշված են նաև շուրջօրյա խնամքի այն հաստատությունները, որոնք պետք է վերակազմավորվեն համայնքային ծառայություններ մատուցող կենտրոնների: ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Խոցելի երեխաների սոցիալական ներառում. այլընտրանքային խնամքի, ընտանիքի և ներառական կրթական ծառայությունների ընդլայնում» ծրագիրը աջակցում է ՀՀ կառավարությանը երեխայի խնամքի համակարգում ընթացող բարեփոխումների հարցում:;

2014-2017թթ. ընթացքում տասնմեկ շուրջօրյա հաստատություններ են փակվել/ձևափոխվել ցերեկային խնամքի կամ մանկավարժական-հոգեբանական աջակցության կենտրոնների: Չնայած դրական տեղաշարժին, նախարարությունների միջև թույլ համագործակցությունը խնդիրներ է ստեղծում երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրվող ծառայությունների մատուցման համար նախքան միավորվելը, ընթացքում և դրանից հետո: Չնայած այն հանգամանքին, որ դասընթացներ են անցկացվում այդ գործընթացներում ներգրավված անձնակազմի համար, միևնույն է՝ նրանց ներուժը չի բավարարում գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար. շարունակական կողմնորոշման և վերապատրաստումների մեխանիզմները բարելավման կարիք ունեն: Հաստատություններից երեխաների դուրսբերման ընթացքի մշտադիտարկման և գնահատման համակարգը լավ չէ մշակված: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մանուկ» տեղեկատվական համակարգը կապված չէ կրթության և առողջապահության համակարգերի տեղեկատվական համակարգերին: Հնարավոր չէ հետևել, թե արդյոք երեխան ընդգրկված է կրթական ծրագրերում, թե ոչ, և թե ինչ առողջապահական ծառայություններ է ստանում: Պետական քաղաքականությունը հստակ քայլեր չի նախանշում 0-3 տարեկան երեխաներին հաստատություններից դուրս բերումը կազմակերպելու համար: ՀՀ Կառավարության պլանները և բարեփոխումների նպատակը բավականաչափ ներկայացված չեն հանրությանը և ծառայություններ մատուցողներին: Հաստատություններից երեխաների դուրսբերման համար պահանջվող ծախսերը կատարվում են շուրջօրյա խնամքի հաստատություններին հատկացված ռեսուրսների վերահաշ-

վարկով: Այս ֆինանսական միջոցները բավարար չեն ընտանիքահենք ծառայությունների ամբողջական ծավալի անհրաժեշտ ծառայությունները մատուցելու համար: Շատ կարևոր է ունենալ կառավարության և ոչ պետական շահագրգիռ կողմերի միջև ռեսուրսների և դերակատարումների լավ համակարգում: Ընտանիքահենք ծառայությունների մատուցման կարիքները բավարարող բյուջեի պլանավորում չի կատարվում կառավարության բոլոր մակարդակներում:

Գծապատկեր 12. Հաստատություններից երեխաների դուրսբերում բաժնի գնահատման արդյունքների պատկերը



Կառավարում և առաջնորդում

Գոյություն ունեն իրավական դրույթներ, որոնք ապահովում են երեխաների դուրս բերումը շուրջօրյա հաստատություններից և հանձնումը ընտանեկան խնամքի:[24] Այս դրույթները կանխարգելում են խնամքի նոր, խոշոր շուրջօրյա հաստատությունների ստեղծումը: Այլընտրանքային խնամքի համակարգ ստեղծելու և 2017-2021թթ. Երեխաների իրավունքների պաշտպանության ռազմավարական փաստաթղթերը ցույց են տալիս ՀՀ Կառավարության պլանները վերակազմավորելու բոլոր շուրջօրյա խնամքի կենտրոնները ցերեկային խնամքի կենտրոնների կամ համայնքային/ընտանիքահենք խնամքի ծառայությունների: Այնուամենայնիվ օրենքը հստակ չի կարգավորում հաշմանդամություն ունեցող երեխաների շուրջօրյա խնամքի կենտրոններից դուրս գալը և դրանից հետո նրանց մատուցվող ծառայությունները: Օրենսդրությունը նաև առաջնահերթություն չի տալիս 0-3 տարեկան երեխաների հաստատություններից դուրս բերմանը:

ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Խոցելի երեխաների սոցիալական ներառում» ծրագրի շրջանակներում հաստատություններից երեխաների դուրս բերման հետ առնչվող պետական և ոչ պետական դերակատարների համար դասընթացներ են անցկացվել այդ գործընթացին աջակցելու համար: Սակայն, այդ դասընթացները կանոնավոր բնույթ չեն կրում և բավարար չեն համապատասխան անձնակազմի ներուժը բարձրացնելու համար, որպեսզի վերջիններս կարողանան որակյալ ծառայություններ մատուցել:

Ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի նպատակն է մշտադիտարկել բարեփոխումների իրականացման ընթացքը, սակայն այդ խմբի աշխատանքն արդյունավետ չէ: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է շուրջօրյա խնամքի հաստատությունների վերակազմավորման ընթացքի մշտադիտարկման համար, մինչդեռ Կրթության և գիտության նախարարությունը պատասխանատու է հատուկ դպրոցների բեռնաթափման

[24] 2014 թ. նոյեմբերի 13 -ի ՀՀ կառավարության թիվ 1273-Ն որոշում

ընթացքի մշտադիտարկման համար: Չնայած այն հանգամանքին, որ գոյություն ունի Կառավարության որոշում միջգերատեսչական համագործակցության կարգավորման համար[25], գնահատումը ցույց է տալիս որ նախարարությունների միջև համագործակցությունը և տվյալների փոխանակումը լավ չի գործում: Օրինակ, հատուկ դպրոցներից տեղափոխված երեխաների հատուկ կրթական կարիքները գնահատված են մինչդեռ նրանց սոցիալական աջակցության կարիքները և նրանց ընտանիքների սոցիալ-տնտեսական կարիքները գնահատված և հասցեավորված չեն: Այս հանգամանքը մեծացնում է վտանգը, որ այս երեխաները նորից կհայտնվեն շուրջօրյա խնամքի հաստատություններում: Գնահատումը բացահայտել է, որ Լոռու մարզը միակ մարզն է, որտեղ միջգերատեսչական համագործակցությունն արդյունավետ գործում է:

Առկա են հստակ ընթացակարգեր շուրջօրյա խնամքի հաստատությունները պատշաճ կերպով փակելու կամ վերակազմավորելու համար և պետական և ոչ պետական կառույցների համապատասխան աշխատակիցները ստացել են ուղղորդում և վերապատրաստվել են այդ ընթացակարգերի վերաբերյալ: Այնուամենայնիվ, գնահատման մասնակիցները հաստատեցին, որ այս ուղեցույցը և ընթացակարգերը կարիք ունեն լուրջ վերանայման: Բացի այդ, անձնակազմի մեկանգամյա վերապատրաստումը բավարար չէ խնամքի այլընտրանքային համակարգում երեխաների վերաբաշխումից հետո որակյալ ծառայությունների մատուցման համար: Շուրջօրյա խնամքի հաստատությունների փակման/վերակազմավորման մշտադիտարկման (տևողություն, հաշվետվություններ, այցեր և այլն) մեխանիզմներ ստեղծվել են ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Խոցելի երեխաների սոցիալական ներառում» ծրագրի շրջանակներում, սակայն իրականում դրանք ոչ միշտ են պատշաճ կերպով կիրառվում:

Մշտադիտարկում և գնահատում, տեղեկատվական համակարգեր

«Նորք» տեղեկատվական կենտրոնի «Մանուկ» տեղեկատվական համակարգը շուրջօրյա խնամքի հաստատություններից տեղափոխված երեխաներին վերաբերող տեղեկատվության հիմնական աղբյուրն է: ՀՀ Կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի թիվ 1044-Ն որոշմամբ սահմանվում է պետական մարմինների դերը և պատասխանատվությունները, ինչպես նաև «Մանուկ» տվյալների բազային փոխանցվող տեղեկատվությունը: Նույն որոշումը սահմանում է նաև, որ խնդրի հետ առընչվող պետական բոլոր մարմինները (Առողջապահության նախարարություն, Կրթության և գիտության նախարարություն, Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Արդարադատության նախարարություն, ոստիկանություն, մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան) պետք է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ներկայացնեն տարեկան հաշվետվություններ նախորդ տարվա ընթացքում բացահայտված դեպքերի և ծառայությունների մատուցման ուղղորդման արդյունքների մասին: Սակայն գնահատումը պարզել է, որ տվյալների հավաքագրումը չի կատարվում բարձր մակարդակով (տվյալների հավաքագրումը կանոնավոր բնույթ չի կրում և ուղղորդումները միշտ չէ, որ ժամանակին են կատարվում): Գնահատման խումբն առաջարկել է կիրառել հաստատություններից երեխաների դուրս բերման 10 քայլերի մոդելը[26] և օգտագործել ցուցանիշներ գործընթացը մշտադիտարկելու համար:

---

[25] ՀՀ կառավարության որոշում թիվ 1044-Ն սեպտեմբեր 10, 2015թ.

[26] 10 քայլ դեպի երեխաների դուրս բերումը հաստատություններից՝ համայնքների կառուցում երեխաների իրավունքներին աջակցելու համար: https://resourcecentre.savethechildren.net/node/4613/pdf/4613.pdf

Սոցիալական նորմեր և գործելաոճ

Իրազեկման քարոզարշավները, որոնք միտված են փոխելու գոյություն ունեցող խնդրահարույց բացասական վերաբերմունքը և խրախուսելու հաստատություններից երեխաների դուրսբերման նոր նորմերը, սահմանափակ են: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստանն անց է կացրել գիտելիքի/պատկերացումների, վերաբերմունքի և գործելաոճի հետազոտություն, որը գնահատում է շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամք ստացող երեխաների հետ կապված վերաբերմունքն ու նորմերը: Այս հետազոտությունը անց է կացվել 2014-2015թթ.-ին և նման հետազոտություններ պարբերաբար իրականացնելու պլաններ չկան:.

Պարբերաբար չեն իրականացվում իրազեկման քարոզարշավներ, որոնք նպատակ ունեն փոխելու գոյություն ունեցող բացասական սոցիալական նորմերը երեխաներին հաստատություններում տեղավորելու/ինստիտուցիոնալացման վերաբերյալ, և այդ թեման հազվադեպ է քննարկվում լրատվամիջոցների կողմից: Հաստատություններից երեխաների դուրսբերման ազդեցությունն ուսումնասիրող ոչ մի հետազոտություն չի իրականացվել:

Գոյություն չունի հանրային իրազեկման և քարոզչության ռազմավարություն, որը խթանում է հանրային դրական վերաբերմունքի ձևավորումը ընտանիքահենք խնամքի վերաբերյալ:

Ֆինանսավորում

Գոյություն չունի համապարփակ նախահաշվարկ այն ծախսերի, որոնք անհրաժեշտ են հաստատություններից երեխաների դուրսբերման և այնպիսի համակարգի ներդրման համար, որտեղ առաջնահերթությունը տրվում է ընտանեկան խնամքին: Ծախսերի գնահատականները հատվածային են և վերաբերում են հաստատությունների վերակազմավորումից ազատված միջոցների վերաբաշխմանը այլընտրանքային խնամքի այլ ծառայությունների ստեղծման համար: Ֆինանսական միջոցները բավարար չեն հոգալու այն ընտանիքների կարիքները, որտեղ վերադառնում են երեխաները: Շուրջօրյա խնամքի հաստատությունների բեռնաթափման համար նախատեսված բյուջեն ընդգրկում է միայն Լոռու և Շիրակի մարզերը: Այլ մարզերի համար բյուջետային ծախսեր չեն նախատեսվել: Պետական բյուջեից հատուկ ֆինանսավորում չի հատկացվում՝ աջակցելու ընտանեկան խնամքին առաջնահերթություն տվող համակարգին անցնելու աշխատանքներին: Սակայն հաստատությունների փակման արդյունքում տնտեսված միջոցները միշտ չէ, որ օգտագործվում են այլընտրանքային խնամքի այլ ծառայությունների հիմնադրման համար: Ոչ պետական հատվածի կողմից հատկացվող ֆինանսական միջոցները, որոնք ուղղված են աջակցելու ընտանեկան խնամքին առաջնահերթություն տվող համակարգին անցնելու աշխատանքներին, չեն վերահսկվում պետության կողմից, սակայն միջազգային դոնոր կազմակերպությունների (օրինակ՝ ԱՄՆ ՄԶԳ, ՅՈՒՆԻՍԵՖ, Վորլդ Վիժն, Փրկեք երեխաներին, SOAR և այլն) կողմից հատկացվող ֆինանսական միջոցների մեծ մասը վերահսկվում է:.

ԱՄՓՈՓՈՒՄ

Գնահատման գործիքի միջոցով խմբերի քննարկումների արդյունքում ստացված պատասխաններն ամփոփվել են նաև ըստ համակարգի բաղադրիչների՝ կառավարում և առաջնորդում, ծառայությունների մատուցում, կադրեր/աշխատակազմ, մշտադիտարկում և գնահատում և տեղեկատվական համակարգեր, սոցիալական նորմեր և գործելաոճ, ֆինանսավորում: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ընթերցողներին կամ կոնկրետ ոլորտի մասնագետներին դիտարկել համակարգի՝ իրենց համար առավել հետաքրքրող բաղադրիչների, գնահատող խմբերի կողմից ընդգծված հիմնական խնդիրները: Այդ ամփոփ գծապատկերները ներկայացված են հավելված Զ-ում: Բացի ամփոփ գծապատկերներից գործիքի հիման վրա հնարավոր է եղել ձևավորել գնահատման արդյունքում համաձայնեցված պատասխանների գունային քարտեզները: Հաջորդիվ բաժնում ներկայացվում են այդ գունային քարտեզները միատեսակ հարցադրումների համար ըստ համակարգի բաղադրիչների, ինչպես նաև գնահատման ամփոփ բացահայտումները: Գնահատող խմբերի հիմնական առաջարկությունները՝ խմբավորված ըստ համակարգի բաղադրիչների և ոլորտների բերված են առաձին բաժնով:

Կառավարում և առաջնորդում

Ընդհանուր առմամբ, **առաջնորդումը** (քաղաքականության շրջանակն ու ռազմավարության տեսլականը) Հայաստանի երեխաների խնամքի և պաշտպանության բարեփոխումների նախաձեռնություններում բավականաչափ ուժեղ է, սակայն **կառավարումը** (գործնական կիրառման մեխանիզմները) թույլ է: Երեխաների խնամքի և պաշտպանության ծառայություններում ներգրավված պետական և ոչ պետական կառույցների համապատասխան անձնակազմը կարիք ունի **հիմնավոր վերապատրաստումների**, որպեսզի կարողանա իրականացնել կառավարության քաղաքականությունը: Մարզերը և տեղական համայնքները պետք է ունենան նաև իրենց **հատուկ ծրագրերը, որոնք համահունչ են պետական քաղաքականությանը**՝ խնամքի և պաշտպանության ծառայություններին վերաբերող իրենց ներքին կարիքները հոգալու համար: Երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխարգելման ընթացակարգը, ինչպես նաև ընտանիքի վերամիավորման միջոցառումները պետք է վերանայվեն ՄԱԿ-ի ուղեցույցին համապատասխան: Օրենսդրությունը պետք է հստակորեն սահմանի **կանխարգելման առաջնային, երկրորդային և երրորդային մեխանիզմները**՝ հիմնական դերակատարների և ծառայություններ մատուցողների միջև հստակ դերերի և պարտականությունների բաշխմամբ:

Գնահատման թիմերը խորհուրդ են տալիս ստեղծել **առանձին հանձնաժողով կամ մարմին, որը պատասխանատվություն կկրի ընտանիքի վերամիավորման, ինչպես նաև երեխաների ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխարգելման համար**: Առաջնահերթությունը պետք է տրվի **0-3 տարեկան երեխաների հաստատություններից դուրսբերմանն ու հաստատություն հանձնելու կանխարգելմանը**, հաշվի առնելով այդ երեխաների շրջանում վաղ մանկության տարիքից կապվածության հմտությունների զարգացումը: **Խնամատար ընտանիքում** խնամք ստացող երեխաներին պետք է աստիճանաբար նախապատրաստել խնամքից դուրս գալուն և ինքնուրույն ապրելուն: **Ընտանեկան տիպի կամ փոքր-տան խնամքի ծառայությունները** պետք է ունենան իրենց հստակ սահմանումները և ծառայեն միայն այն երեխաների համար, ում համար չկա հնարավորություն վերադառնալու կենսաբանական ընտանիք, խնամվելու ազգականների,

խնամակալների կողմից կամ որդեգրվելու: **Խնամակալությունը**, թե ֆորմալ, և հատկապես ոչ ֆորմալ, ինչպես նաև **ոչ ազգականի կողմից ոչ ֆորմալ խնամքը** կարգավորման կարիք ունեն: **Ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպման** ծառայություններիստակեցման և կարգավորման կարիք ունեն, իսկ, որդեգրումը լավ կարգավորված է, սակայն որոշ առումներով (գաղտնիություն և հետևողականություն, համապատասխանություն) պետք է համապատասխանեցվի միջազգային պայմանագրերին: **Հաստատություններից երեխաների դուրսբերման** համար գնահատման խմբերն առաջարկեցին, որ ՀՀ կառավարությունը կիրառի «10 քայլ երեխաների դուրս բերումը հաստատություններից» մոտեցումը և համապատասխան փոփոխություններ կատարի գործողությունների ներկայիս պլանում (ՀՀ –ում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգի միջոցառումների ծրագիր, ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 15-ի արձանագրային որոշում): Երեխայի մասին տեղեկատվությունը պետք է հետևի երեխային խնամքի բոլոր տեսակներում, որը ներկայումս հստակ չի կարգավորվում: Այլընտրանքային խնամքի ներքո գտնվող երեխաները պետք է ունենան **բողոքելու հեշտ և մատչելի մեխանիզմ**, որը ներկայումս չի կարգավորվում խնամքի որևէ ոլորտի համար:

Աղյուսակ 2. Գնահատման պատասխանների գունային քարտեզ.Կառավարում և առաջնորդում

Գնահատվող հարցեր	**Խնամքի համակարգի ոլորտներ**								
	Կանխարգելում	Խնամատարություն	Խնամք շուրջօրյա հաստատությունում	Ֆորմալ խնամակալություն	Ոչ ֆորմալ խնամակալություն	Ուղեկցվող անկախ ապրելակերպ	Որդեգրում	Ընտանիքի հետ վերամիավորում	Հաստատությունների վերակազմավորում
Առկա են կարգավորող իրավական դրույթներ									
Առկա է պետական քաղաքականություն/ռազմավարություն									
Քաղաքականությունն ընթացիկ է									
Պետական կառույցները վերապատրաստված են									
Ոչ պետական դերակատարները վերապատրաստված են									
Առկա են համայնքային ընթացակարգեր									

Կիրառելի չէ	Լիովին/այո	Մեծմասամբ	Որոշ չափով	Բոլորովին ոչ

Ծառայությունների մատուցում

Հիմնականում այլընտրանքային խնամքի ծառայություններ մատուցողները **գրանցված են և հավաստագրված իրավասու մարմինների կողմից**: Այնուամենայնիվ, գործնականում **ծառայությունների մատուցումը միշտ չէ, որ իրականացվում է համաձայն իրավական ընթացակարգերի**: Ըստ գնահատման արդյունքների, դա պայմանավորված է երկու պատճառներով՝ 1) ծառայությունների որոշակի չափանիշների բացակայություն, ներառյալ այն ծառայությունների, որոնք անհրաժեշտ են երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխարգելման և ընտանիքի վերամիավորմանն աջակցելու համար, և 2) խնամքի համակարգում ներգրավված համապատասխան անձնակազմի թերի իրազեկվածություն և վերապատրաստում:

Սոցիալական պաշտպանության ցանցը (առաջնային կանխարգելիչ ծառայություններ) չի բացահայտում կյանքի դժվար իրավիճակում գտնվող երեխաների կարիքները և չունի բաժանման ռիսկի տակ գտնվող ընտանիքների համար նախատեսված ծառայություններ: Կան ծառայություններ, որոնք արձագանքում են ճգնաժամային իրավիճակներում, սակայն չեն կանխարգելում դրանք: Ընտանիքից բաժանման վտանգի տակ գտնվող երեխաների կարիքների մանրամասն գնահատումը, որը կապված է նաև սոցիալական դեպքի վարման հետ (կանխարգելման երկրորդ մակարդակ)՝ **սոցիալական պաշտպանության ցանցի հետ միասին պետք է ընդգրկի այնպիսի ծառայություններ, որոնք բացառապես նախատեսված են կանխելու երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանումը**: Դա կնպաստի նաև երրորդ մակարդակի կանխարգելմանը՝ շեշտադրելով ընտանիքների հետ վերամիավորվող երեխաների կարիքները և օգնելով նրանց սահուն կերպով վերաինտեգրվել ընտանեկան միջավայրում: Հաշվի առնելով տարածաշրջանային տարբերությունները՝ պետք է մշակվեն **վերամիավորումից հետո ընտանիքներին և երեխաներին աջակցող անհրաժեշտ ծառայությունների ցանկ**: Առանձին որակական չափանիշներ պետք է մշակվեն այլընտրանքային խնամքի և կանխարգելման/ընտանիքի վերամիավորման յուրաքանչյուր տեսակի համար: Որակի չափանիշների տեսանկյունից պետք է մշակվեն նաև **ծառայություններ մատուցողների որակի նվազագույն չափանիշներ և մշտադիտարկման մեխանիզմներ**: Պետք է մշակվեն այլընտրանքային խնամքի տրամադրման մշտադիտարկման պլան և գործիքներ՝ կանոնավոր մշտադիտարկում և ստուգիչ այցեր իրականացնելու համար:

Երեխաների տեսակետները գրեթե միշտ հաշվի են առնվում ըստ իրենց տարիքի և հասունության, որդեգրման և խնամքի տեղավորման որոշումներ կայացնելիս: Այնուամենայնիվ, դա տեղի չի ունենում խնամքի շուրջօրյա կենտրոններում կամ խնամակալության դեպքերում: Այլընտրանքային խնամքի ներքո գտնվող երեխաների համար **ծառայությունների մատուցման անհատական պլանները** պետք է պարբերաբար վերանայվեն, սակայն դա տեղի չի ունենում նաև խնամքի շուրջօրյա հաստատություններում գտնվող երեխաների համար: Այլընտրանքային խնամքի գործի փակման կարգ չկա և գործի փակում չի կատարվում որևէ այլընտրանքային խնամքի դեպքում: Երեխայի մասին տեղեկատվությունը **թղթային/էլեկտրոնային ֆայլի** ձևով չի ուղարկվում երեխայի հետ միասին այլընտրանքային խնամքի ողջ ժամանակահատվածի ընթացքում:

Ծառայությունների հետևյալ նոր տեսակների կարիք կա՝ մոր և մանկան բաժանմունքներ, ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպում, հաշմանդամություն ունեցող խնամակալների համար ծառայություններ, հատուկ կարիքներով երեխաների համար դեպքերի կառավարման մասնագիտացված աջակցություն, դեռահասների և երիտասարդների հետ աշխատող մասնագետներ և ծառայություններ, հասանելի բողոքարկման մեխանիզմներ:

Աղյուսակ 3.Գնահատման պատասխանների գունային քարտեզ. Ծառայությունների մատուցում[27]

Գնահատվող հարցեր	**Խնամքի համակարգի ոլորտներ**					
	Կանխարգելում	Խնամատարություն	Խնամք շուրջօրյա հաստատությունում	Ֆորմալ խնամակալություն	Որդեգրում	Ընտանիքի հետ վերամիավորում
Առկա են ծառայության մատուցման որակի չափանիշներ						
Չափանիշները կիրառվում են պետական կառույցների կողմից						
Չափանիշները կիրառվում են ոչ պետական կառույցների կողմից						
Առկա է որակի մշտադիտարկման մեխանիզմ						
Պարբերաբար իրականացվում եմ ծառայությունների որակի/արդյունավետության ստուգումներ						
Սահմանված կարգով հստակեցված են նվազագույն չափանիշների չապահովման դեպքում պատասխանատվությունն ու հետևանքները						

Կիրառելի չէ	Լիովին/այո	Մեծմասամբ	Որոշ չափով	Բոլորովին ոչ

Կադրեր/աշխատակազմ

Կադրերը/մասնագետները պետք է վերապատրաստվեն: Այլընտրանքային խնամքի բոլոր հիմնական դերակատարները (դեպք վարողները, համայնքային սոցիալական աշխատողները, խնամակալության, հոգաբարձության մարմինները/հանձնաժողովները, մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների սոցիալական աշխատողները, ոստիկանության անչափահասների գծով բաժանմունքի աշխատակիցները և այլն)

[27] Ծառայությունների մատուցումը գնահատվել է միայն այն ոլորտների համար որոնք ներառված են աղյուսակում.

ունեն իրենց **աշխատանքի նկարագրերն ու կանոնակարգերը**, այլընտրանքային խնամքի ծառայություններ երեխաների ուղղորդման գնահատման, պլանավորման, ուղեկցման և վերանայման համար պարտադիր ընթացակարգերի վերաբերյալ: Սակայն, բաղադրիչի հիմնական թույլ կողմն է այլընտրանքային խնամքի տրամադրման ծառայություններում ներգրավված **մասնագետների/կադրերի համար ստանդարտացված վերապատրաստման** բացակայությունը և ծանրաբեռնվածության շեմի սահմանումը: Կարևոր է, որ բոլոր դերակատարները ստանան նույն տեղեկատվությունը և գործեն նույն կերպ՝ կանխելով այն դեպքերը, երբ ծառայությունն անհրաժեշտ է սակայն չի մատուցվում մասնագետների սխալ կամ ոչ լիարժեք կապի/տեղեկատվության փոխանակման պատճառով: Միևնույն ժամանակ, գնահատումը ցույց տվեց, որ **անհրաժեշտ որակավորմամբ մասնագետների առկայությունը պետական և համայնքային մակարդակներում խիստ անհավասարաչափ է**: Համայնքային խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամները հստակ սահմանված որակավորումներ չունեն՝ նրանք ունեն սահմանված ընթացակարգեր, բայց հանձնաժողովի անդամների համար սահմանված չեն որակի չափանիշներ և աշխատանքի նկարագրեր:

Խնամքի շուրջօրյա հաստատությունների բոլոր տեսակներում անձնակազմն ունի հստակ սահմանված որակավորումներ կապված իրենց դերի և պարտականությունների հետ: Սակայն, հաստատություններից երեխաների դուրս բերման ժամանակ, հատուկ ուշադրություն է հարկավոր դարձնել **վերակազմավորված հաստատությունների աշխատողների վերապատրաստմանն ու աշխատանքի տեղավորմանը:**

Գնահատումը ցույց տվեց, որ երկրում չկան **դեռահասների/երիտասարդների հետ աշխատելու որոկավորում ունեցող մասնագետներ**, մինչդեռ դեռահասների հետ աշխատելու կարողություն ունեցող մասնագետների կարիքը շատ մեծ է: Առաջնահերթ է ներդնել **վերապատրաստման մեխանիզմներ ուղղված** խնամակալության և խնամատարության երեխաների հանձնմանը, որդեգրմանը և հատկապես ընտանիքների վերամիավորմանն ու մերձեցմանն աջակցող և մշտադիտարկում իրականացնող անձնակազմի հմտությունների զարգացման համար: Անհրաժեշտ է **զարգացնել մասնագետներ ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպման ծառայությունների**, ինչպես նաև **կարճաժամկետ աջակցող ծառայությունների** համար: Սոցիալական աշխատողները պետք է ունենան բավարար հմտություններ բացահայտելու և կանխարգելելու ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանումը:

Աղյուսակ 4. Գնահատման պատասխանների գունային քարտեզ. Կադրեր և աշխատուժ[28]

Գնահատվող հարցեր	Խնամքի համակարգի ոլորտներ						
	Կանխարգելում	Խնամատարություն	Խնամք շուրջօրյա հաստատությունում	Ֆորմալ խնամակալություն	Ոչ ֆորմալ խնամակալություն	Որդեգրում	Ընտանիքի հետ վերամիավորում
Սահմանված են որակավորման չափանիշներ/աշխատանքի նկարագրեր հետևյալ աշխատողների համար							
Պետական կառույցներում սոցիալական աշխատողներ							
Ոչ պետական կառույցներում սոցիալական աշխատողներ							
Երեխաների պաշտպանության հարցերով մասնագետներ							
Առողջապահության ոլորտի մասնագետներ							
Թերապիստներ/նեղ մասնագետներ							
Մանկավարժներ							
Դեռահասների/երիտասարդների հարցերով մասնագետներ							
Սոցիալական պաշտպանության ոլորտի մասնագետներ							
Համայնքային պատասխանատուներ/ԽՀՄ/Հ							

Կիրառելի չէ	Լիովին/այո	Մեծմասամբ	Որոշ չափով	Բոլորովին ոչ

Մշտադիտարկում և գնահատում, տեղեկատվական համակարգեր

Թեև հիմնական նախարարություններում առկա են տեղեկատվական համակարգեր, **մշտադիտարկումն ու գնահատումը երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի ամենաթույլ բաղադրիչներից է: ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ունի մշտադիտարկման և գնահատման քաղաքականություն և պարբերաբար հավաքագրում է տվյալներ** գնահատելու խնամակալության, շուրջօրյա խնամքի հաստատությունների, ցերեկային

[28] Կադրերը գնահատվել են միայն այն ոլորտների համար, որոնք ներառված են աղյուսակում.

խնամքի ծառայությունների, կանխարգելման և մանկատան շրջանավարտներին ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպման ծառայությունների որակը:

«Մանուկ» տեղեկատվական համակարգը պարունակում է տեղեկատվություն պետության կողմից ֆինանսավորվող այլընտրանքային խնամքում ընդգրկված երեխաների մասին: Տվյալներն առանձնացված են ազգային և մարզային մակարդակներով և տալիս են ֆորմալ այլընտրանքային խնամքում ընդգրկված երեխաների ընդհանուր թիվը: Առկա տվյալները նաև բացատրություններ են պարունակում երեխաներին այլընտրանքային խնամքում ընդգրկելու պատճառների մասին: Այնուամենայնիվ, երկրում չկա այլընտրանքային խնամքում ընդգրկված բոլոր երեխաների վերաբերյալ տվյալների մշտադիտարկման համակարգ: Ոչ պետական ռեսուրսներով, ինչպես նաև այլընտրանքային խնամքի ոչ ֆորմալ ձևերով մատուցված խնամքի ծառայություններում ընդգրկված երեխաների մասին տվյալներ չկան: Այլ նախարարություններ հավաքում են ծառայությունների մասին տվյալներ, որոնք անհրաժեշտ են տվյալ ծառայությունների **պարբերական մշտադիտարկման** համար: ՀՀ ԱՎԾ-ն հրապարակում է վարչական տվյալներ մանկատների, գիշերային խնամքի հաստատությունների և հատուկ դպրոցների երեխաների, ինչպես նաև որդեգրումների մասին: **Այնուամենայնիվ, չկա այլընտրանքային խնամքի հատուկ տեղեկատվական համակարգ**: Տվյալների միջոլորտային **փոխանակում և հաղորդակցություն** տեղի չի ունենում: Բացի այդ, կան նաև այլընտրանքային խնամքի ոլորտներ, որոնք դուրս են մնում որևէ վերահսկողությունից և մշտադիտարկումից: Գնահատումը ցույց տվեց, որ նույնիսկ առանցքային դերակատարներն ու որոշում կայացնողները տվյալներ չունեն բարեկամի կամ ոչ ազգականի կողմից ոչ ֆորմալ խնամք ստացող երեխաների թվաքանակի մասին, իրենց ընտանիքների հետ վերամիավորված երեխաների և նրանց խնդիրների մասին, որքան երեխաներ են գտնվում են բաժանման ռիսկի տակ և այլն: Գրեթե **ոչ մի տեղեկություն չկա ՀԿ-ների կողմից ծառայություններ ստացող երեխաների մասին**: Գնահատումը ցույց է տալիս, որ ազգային և մարզային մակարդակներում մշտադիտարկման և գնահատման համապարփակ և միասնական ուղեցույցերի անհրաժեշտություն կա: Պետք է սահմանվեն **դերերն ու պատասխանատվությունները տվյալների հավաքագրման և հաշվետվությունների պատրաստման,** մասնավորապես, այլընտրանքային խնամքում գտնվող երեխաների վերաբերյալ պարբերական հրատարակությունների մշակման համար: Անհրաժեշտ է կազմակերպել **տվյալների որակի ապահովման միջոցառումներ**:

Աղյուսակ 5. Գնահատման պատասխանների գունային քարտեզ. ՄևԳ և տեղեկատվական համակարգեր[29]

Գնահատվող հարցեր	**Խնամքի համակարգի ոլորտներ**							
	Կանխարգելում	Խնամատարություն	Խնամք շուրջօրյա հաստատությունում	Ֆորմալ խնամակալություն	Ոչ ֆորմալ խնամակալություն	Որդեգրում	Ընտանիքի հետ վերամիավորում	Հաստատությունների վերակազմավորում
Առկա են ստանդարտ ցուցանիշներ								

[29] ՄևԳ և տեղեկատվական համակարգը գնահատվել է միայն այն ոլորտների համար, որոնք ներառված են աղյուսակում:

Գնահատվող հարցեր	Խնամքի համակարգի ոլորտներ							
	Կանխարգելում	Խնամատարություն	Խնամք շուրջօրյա հաստատությունում	Ֆորմալ խնամակալություն	Ոչ ֆորմալ խնամակալություն	Որդեգրում	Ընտանիքի հետ վերամիավորում	Հաստատությունների վերակազմավորում
Սահմանված են դերերն ու պարտականությունները տվյալների հավաքագրման և հաշվետվությունների պատրաստման համար								
Այլընտրանքային խնամքի համար պատասխանատու նախարարության ներսում								
Համապատասխան նախարարությունների միջև								
Նախարարության և ոչ պետական դերակատարների միջև								
Կանոնավոր կերպով հավաքագրվում են տվյալներ տվյալ ոլորտում մշտադիտարկում իրականացնելու համար								
Տվյալները հնարավոր է ստանալ հետևյալ բաշխվածությամբ								
ըստ սեռի								
ըստ տարիքի								
ըստ բնակության վայրի								
ըստ հաշմանդամության տեսակի								
Պարբերաբար իրականացվում են տվյալների որակի ապահովման աշխատանքներ								

Կիրառելի չէ	Լիովին/այո	Մեծմասամբ	Որոշ չափով	Բոլորովին ոչ

Սոցիալական նորմեր և գործելաոճ

Առաջնահերթություն տրված չէ հանրային իրազեկման և բացասական սոցիալական նորմերը փոփոխելուն ուղղված միջոցառումների խթանմանը: Օրենքները տեղադրվում են համապատասխան նախարարությունների կայքէջերում՝ հրապարակային քննարկումների համար: Իրականացվում են ՀՀ կառավարության ռազմավարական փաստաթղթերի և օրենքների բաց քննարկումների ֆորումներ: Այնուամենայնիվ, **գոյություն չունի այլընտրանքային խնամքի մասին**

հանրային իրազեկման ռազմավարության և քարոզչության ծրագիր: Երեխաների, ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքում ապրելու իրավունքի իրազեկման քարոզարշավները հիմնականում իրականացվում են ՀԿ-ների և/կամ միջազգային կազմակերպությունների կողմից և կանոնավոր բնույթ չեն կրում: Խմբային քննարկումների մասնակիցները համաձայնեցին, որ *կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխային մանկատանը տեղավորելը միշտ չէ, որ երեխայի համար լավագույն տարբերակն է*, և այդ գիտակցման մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումները բավարար չեն: Այնուամենայնիվ, հանրության մեջ, հատկապես մարզերի բնակչության մեջ, ինչպես նաև խնամքի ծառայությունների աշխատակիցների շրջանում մեծ հավատ կա, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաներին մանկատներում տեղավորելը նրանց խնամքի լավագույն տարբերակն է: Միջգերատեսչական համագործակցությունը պետք է նպաստի հասարակության իրազեկվածության բարձրացմանը առ այն, որ խնամատարությունը, խնամակալությունը և որդեգրումը խնամքի ավելի նախընտրելի ձևեր են, քան մանկատներում տեղավորելը:

Աղյուսակ 6. Գնահատման պատասխանների գունային քարտեզ. սոցիալական նորմեր և գործելաոճ[30]

Գնահատվող հարցեր	Խնամքի համակարգի ոլորտներ							
	Կանխարգելում	Խնամատարություն	Խնամք շուրջօրյա հաստատությունում	Ֆորմալ խնամակալություն	Ոչ ֆորմալ խնամակալություն	Որդեգրում	Ընտանիքի հետ վերամիավորում	Հաստատությունների վերակազմավորում
Պարբերաբար իրականացվում են քարոզարշավներ, վերապատրաստումներ փոխելու բացասական սոցիալակն նորմերն ու գործելաոճը								
Առկա է հանրային իրազեկման և քարոզչության ռազմավարություն, որն ուղված է ընտանեկան խնամքի կարևորության դրական նորմի ձևավորմանը								

Կիրառելի չէ	Որոշ չափով	Բոլորովին ոչ

[30] Սոցիալական նորմեր և գործելաոճ գնահատված է միայն այն ոլորտների համար, որոնք ներառված են աղյուսակի մեջ:

Ֆինանսավորում

Այլընտրանքային խնամքի յուրաքանչյուր տեսակին օժանդակելու համար անհրաժեշտ ֆինանսավորման համար չկա ծախսերի գնահատում: Ընտանիքներից երեխաների առանց անհրաժեշտության բաժանումը կանխարգելելու նպատակով ընտանիքներին աջակցելու և ամրապնդման համար անհրաժեշտ ծառայություններ մատուցելու ծախսերը նույնպես գնահատված չեն: Բյուջետային հատկացումները բավարար չեն այլընտրանքային խնամքի ծառայությունների որևէ տեսակի մատուցման և հատկապես ընտանիքի բաժանման կանխարգելման համար: Ոչ մի դրամական հատկացում չի կատարվում խնամակալության ծառայությունների համար: Այլընտրանքային խնամքի ծառայություններին ուղղված պետական բյուջեից կատարված հատկացումները միշտ կատարվում և օգտագործվում են, բայց հատկացված ֆինանսավորումը բավարար չէ և անհրաժեշտ է այն ավելացնել: Խնամքի բարեփոխումը հիմնականում ֆինանսավորվում է շուրջօրյա խնամքի համար նախատեսված ռեսուրսների այլընտրանքային խնամքի այլ տեսակների միջև վերաբաշխման միջոցով և հիմնականում հիմնվում է դոնորների աջակցության վրա:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կամ այլ նախարարությունների համար հստակ կանոնակարգ չկա, որպեսզի վերահսկեն մասնավոր անձանց կամ դոնորների կողմից իրականացվող ծրագրերը, եթե դրանք չեն իրականացվում նախարարությունների հետ փոխըմբռնման հուշագրի միջոցով: կադրերի/մասնագետների վերապատրաստման ծախսերը չեն գնահատվում և չեն բյուջետավորվում: Այլընտրանքային խնամքի ծառայությունների մշտադիտարկման և վերահսկողության համար բյուջետային հատկացումներ չկան:

Աղյուսակ 7. Գնահատման պատասխանների գունային քարտեզ. Ֆինանսավորում[31]

Գնահատվող հարցեր	**Խնամքի համակարգի ոլորտներ**							
	Կանխարգելում	Խնամատարություն	Խնամք շուրջօրյա հաստատությունում	Ֆորմալ խնամակալություն	Ոչ ֆորմալ խնամակալություն	Որդեգրում	Ընտանիքի հետ վերամիավորում	Հաստատությունների վերակազմավորում
Ծառայությունների համար անհրաժեշտ ֆինանսավորումը գնահատվել է								
Ծառայությունների համար անհրաժեշտ ֆինանսավորումն ընդգրված է պետական բյուջեում առանձին տողով								

[31] Ֆինանսավորումը գնահատված է միայն այն ոլորտների համար, որոնք ներառված են աղյուսակում .

Գնահատվող հարցեր	**Խնամքի համակարգի ոլորտներ**							
	Կանխարգելում	Խնամատարություն	Խնամք շուրջօրյա հաստատությունում	Ֆորմալ խնամակալություն	Ոչ ֆորմալ խնամակալություն	Որդեգրում	Ընտանիքի հետ վերամիավորում	Հաստատությունների վերակազմավորում
Այլընտրանքային խնամքի ծառայությունների համար անհրաժեշտ ֆինանսավորումը հատկացվել է պետական բյուջեից								
Այլընտրանքային խնամքի ծառայությունների համար հատկացված ֆինանսավորումը տրամադրվել է պետական բյուջեից								

Կիրառելի չէ	Լիովին/այո	Մեծմասամբ	Որոշ չափով	Բոլորովին ոչ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մասնակցային գնահատման աշխատաժողովի ընթացքում խմբերը սահմանել են առաջարկություններ խնամքի յուրաքանչյուր ոլորտի համար: Այդ առաջարկությունների ամփոփումը, ինչպես նաև լրացուցիչ առաջարկությունները, որոնք ձևավորվել են արդյունքների վերլուծության ընթացքում, ներկայացված են ստորև Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8: Մասնակցային գնահատման աշխատաժողովի մասնակիցների կողմից համակարգի բաղադրիչների և խնամքի ոլորտների վերաբերյալ կատարված առաջարկությունների ցանկը

	Առաջարկություն	Խնամքի ոլորտ
Կառավարում և առաջնորդում		
1.	Ստեղծել առանձին հանձնաժողով/ մարմին, որը պատասխանատու կլինի ընտանիքների վերամիավորման և երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխարգելման համար՝ հանրապետությունում այլընտրանքային խնամքի ծրագրերի իրականացումը վերահսկելու համար, և մարզային հանձնաժողովներ՝ մարզերում ընթացող գործընթացների մշտադիտարկման համար:	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
2.	Մշակել ծառայություններ աջակցելու հաշմանդամություն ունեցող խնամակալներին	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
3.	Մշակել համայնքային ռազմավարական ծրագրեր, որոնք համահունչ են ազգային քաղաքականությանը/ռազմավարությանը՝ նպաստելու տեղերում կոնկրետ միջոցառումների, ծառայությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխարգելման և խնամքի այլընտրանքային ծառայությունների որակյալ մատուցման համար:	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
4.	Մշակել ընթացակարգեր, որոնք կնախապատրաստեն, կաջակցեն և կուղղորդեն երեխաներին այլընտրանքային խնամքի հանձնելուց առաջ, ընթացքում և հետո:	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
5.	Մշակել ընթացակարգ և ապահովել, որ երեխայի գործի վերաբերյալ հիմնական փաստաթղթերը նրան ուղեկցեն խնամքի բոլոր տեսակներ ուղղորդելիս	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող

	Առաջարկություն	Խնամքի ոլորտ
6.	Ստեղծել մատչելի, անկախ, պաշտոնական բողոքարկման մեխանիզմներ՝ ապահովելու համար, որ այլընտրանքային խնամքում ընդգրկված երեխան կարողանա անվտանգ կերպով հայտնել չարաշահման և շահագործման դեպքերի մասին: Այս մեխանիզմը պետք է ներառի իշխանությունների կողմից արդյունավետ և ժամանակին արձագանքը:	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
7.	Մշակել կառավարության որոշում կանխելու 0-3 տարեկան երեխաների մանկատներում տեղավորելը	Երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխում
8.	Մշակել առանձին քաղաքականություն և հստակ կարգավորումներ երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխարգելման համար և իրականացնել պահանջվող ծախսերի գնահատում, ապա քարոզչություն՝ համապատասխան բյուջետային հատկացումների համար:	Երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխում
9.	Մշակել իրավական դրույթներ խրախուսելու խնամակալության և այլընտրանքային խնամքի այլ տեսակների գրանցումը: Սահմանել խնամակալության տեսակները և կարգավորման շրջանակները:	Խնամակալություն
10.	Մշակել իրավական դրույթներ հաշմանդամություն ունեցող երեխաների խնամակալության, որդեգրման և խնամատարության խթանման նպատակով արտոնությունների տրամադրման համար:	Որդեգրում, խնամակալություն խնամատարություն
11.	Նպաստել խնամքի բոլոր ոչ ֆորմալ դեպքերի ֆորմալացմանը	Խնամակալություն
12.	Ընդունել որդեգրման նոր կանոնակարգ որդեգրման հետ կապված հարցերի շուրջ թափանցիկություն ապահովելու համար	Որդեգրում
13.	Մշակել ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպման ծառայությունների մատուցումը կարգավորող քաղաքականություն	Ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպում

	Առաջարկություն	Խնամքի ոլորտ
14.	Մշակել ձեռնարկ/ուղեցույց հաստատություններից երեխաների դուրս բերման համար, որն ընդգծում է անհրաժեշտ քայլերը և խնամքի հաստատությունների վերակազմավորումից հետո աշխատողների դերերը/պարտականությունները: Այս ձեռնարկը կարող է հիմնված լինել 10 քայլ դեպի հաստատություններից երեխաների դուրս բերման մոտեցման վրա	Հաստատություններից երեխաների դուրս բերում
Ծառայությունների մատուցում		
15.	Ստեղծել հաշմանդամություն ունեցող ծնողների/խնամակալների համար նախատեսված ծառայություններ և դրույթներ՝ աջակցելու երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխարգելմանը, կամ որակյալ խնամակալության, խնամատարության և որդեգրման ծառայությունների մատուցմանը:	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
16.	Մշակել հատուկ տեսակի ծառայություններ՝ աջակցելու այլընտրանքային խնամքի համակարգից (խնամատարության, խնամակալության, որդեգրման, շուրջօրյա խնամքի կենտրոններից, ուղեկցվող անկախ ապրելակերպից) դուրս եկող երեխաներին:	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
17.	Մշակել և հաստատել բոլոր խնամքի ոլորտների ծառայությունների, ինչպես նաև մշտադիտարկման որակի չափանիշները: Նպաստել պետական և ոչ պետական ծառայություն մատուցողների կողմից չափանիշների կիրառմանը:	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
18.	Ընդլայնել այլընտրանքային խնամքի ծառայությունների աշխարհագրությունը և խրախուսել ՀԿ-ների հետ պետական համաֆինանսավորմամբ ծառայությունների մատուցումը	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
19.	Հիմնադրել և ընդլայնել ընտանիքի ամրապնդման ծառայությունները՝ երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման առաջնային, երկրորդային և երրորդային կանխարգելման համար, ներառյալ երեխայի նկատմամբ զգայուն սոցիալական պաշտպանության սխեմաները, որոնք ուղղված են խոցելի ընտանիքների և բաժանման վտանգի տակ հայտնված ընտանիքների, միայնակ ծնողների և տարեց խնամակալների կարիքների բացահայտմանը, տնային տնտեսության տնտեսական հզորացման և ծնողավարման հմտությունների զարգացմանը	Երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխում, ընտանիքների վերամիավորում

	Առաջարկություն	Խնամքի ոլորտ
20.	Ներդնել և զարգացնել կարճաժամկետ խնամքի ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներին աջակցելու համար	Խնամատարություն
21.	Ստեղծել ընտանիքի տիպի խմբային տներ այն դեպքերի համար, երբ հնարավոր չէ երեխային ընդգրկել խնամակալ, խնամատար ընտանիքներում կամ իրականացնել որդեգրում	Խնամք հաստատությունում
22.	Խրախուսել սոցիալական աշխատողներին և դեպք վարողներին, որպեսզի աշխատեն ընտանիքների հետ և խթանեն երեխաների վերադարձն ընտանեկան խնամքի ցանկացած հաստատությունից (անկախ այն բանից, թե հաստատությունն ընդգրկված է վերակազմավորման ծրագրում, թե ոչ)	Խնամք հաստատությունում
23.	Ընտանիքի վերամիավորումը համարել որպես առանձին ծառայություն և նշանակել համապատասխան մասնագետներ՝ սահմանելով դերերը, պարտականությունները և որակի չափանիշները	Ընտանիքի վերամիավորում
Կադրեր/աշխատակազմ		
24.	Ստեղծել այլընտրանքային խնամքի համակարգում ներգրավված աշխատողների վերապատրաստման համակարգված ծրագիր	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
25.	Խրախուսել բուհերի շրջանավարտ սոցիալական աշխատողների ներգրավումը խնամքի համակարգում	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
26.	Վերանայել որակավորումները/աշխատանքի նկարագրերը բոլոր համապատասխան կադրերի համար՝ ներառելով այլընտրանքային խնամքի բոլոր ոլորտները	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
27.	Սահմանել ծանրաբեռնվածության առավելագույն սահման բոլոր համապատասխան կադրերի համար	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
28.	Ստեղծել այլընտրանքային խնամքի ուսուցման համակարգ առողջապահության, կրթության ոլորտի աշխատողների և թերապիստների համար	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
29.	Պատրաստել դեռահասների/երիտասարդության հետ աշխատող մասնագետներ	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող

	Առաջարկություն	Խնամքի ոլորտ
30.	Բոլոր տեսակի այլընտրանքային խնամքի ծառայությունների համար (ընտանիքների վերամիավորում, խնամատարություն և որդեգրում) մշակել որակի նվազագույն չափանիշներ՝ ապահովելու ծառայություններ մատուցողների առավել արդյունավետ մշտադիտարկում:	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
31.	Ընդլայնել «Մանուկ» տվյալների բազայի հասանելիությունը համապատասխան աշխատակազմի համար, որպեսզի նրանք ոչ միայն տվյալներ կարողանան մուտքագրել, այլ նաև հետևեն իրենց կողմից աջակցություն ստացող բոլոր երեխաներին մատուցվող ծառայությունները	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
32.	Բարձրացնել դասընթացների որակը և բարելավել աշխատանքի տեղավորման մեխանիզմները վերակազմավորված հաստատությունների աշխատակիցների համար	Հաստատություններից երեխաների դուրսբերում
Մշտադիտարկում և գնահատում, տեղեկատվական համակարգեր		
33.	Մշակել մշտադիտարկման և գնահատման չափանիշներ այլընտրանքային խնամքի բոլոր ոլորտների համար, որոնք ներառում են բոլոր պետական և ոչ պետական դերակատարների կողմից կատարվող պարբերական մշտադիտարկումները և հաշվետվությունները	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
34.	Ստեղծել միջգերատեսչական տեղեկատվական համակարգ՝ այլընտրանքային խնամքում ընդգրկված բոլոր երեխաների վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն հավաքագրելու և վերահսկելու համար: Այդ տեղեկատվական համակարգը պետք է տեղեկատվություն ներառի պետական և ոչ պետական բոլոր ոլորտներից և դերակատարներից:	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
35.	Մշակել դերերի և պարտականությունների հստակ ընթացակարգեր այլընտրանքային խնամքի բոլոր բնագավառներում տվյալների հավաքագրման և հաշվետվությունների պատրաստման գործընթացում	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
36.	Կազմակերպել մասնագետների կանոնավոր վերապատրաստում մշտադիտարկման և գնահատման թեմայով	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
37.	Մշակել այլընտրանքային խնամքի վերաբերյալ ընթացիկ մշտադիտարկման համար տվյալների որակի ապահովման ուղեցույց	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող

	Առաջարկություն	Խնամքի ոլորտ
38.	Ներդնել նոր հաշվառման համակարգ խնամակալների և խնամակալության տակ գտնվող երեխաների համար:	Խնամակալություն
Սոցիալական նորմեր և գործելաոճ		
39.	Մշակել հանրային իրազեկման և քարոզչության ռազմավարություն բացասական սոցիալական նորմերը և մոտեցումները փոխելու նպատակով և խրախուսել ընտանիքների վերամիավորումը, որդեգրումը, խնամատարությունը՝ հաստատությունում խնամքի փոխարեն	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
40.	Մշակել հանրային իրազեկման և քարոզչության ռազմավարություն՝ նպաստելու հաստատություններում գտնվող երեխաների, հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների, ընտանեկան տիպի խնամքի կազմակերպմանը	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
41.	Ծառայություններ մատուցողների շրջանում բարձրացնել իրազեկվածությունն այլընտրանքային խնամքի վերաբերյալ ՀՀ կառավարության նոր քաղաքականության և ռազմավարության մասին	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
42.	Խնամատարության վերաբերյալ հատուկ քարոզչություն իրականացնել	Խնամատարություն
43.	Ընտանիքների հետ վերամիավորված երեխաների իրավիճակային վերլուծություն իրականացնել	Ընտանիքների վերամիավորում
44.	Քարոզել հաշմանդամություն ունեցող երեխաների համար խնամքի շուրջօրյա կենտրոնների վերակազմավորման գաղափարը	Հաստատություններից երեխաների դուրսբերում
Ֆինանսավորում		
45.	Բարելավել մասնավոր հատվածի և միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից այլընտրանքային խնամքին աջակցելու նպատակով կատարված ներդրումների վերահսկման մեխանիզմները	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
46.	Իրականացնել ծախսերի գնահատում և քարոզել այլընտրանքային խնամքի համակարգի մշտադիտարկման և գնահատման համակարգերի զարգացման համար հատուկ ֆինանսավորման հատկացում	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող

	Առաջարկություն	Խնամքի ոլորտ
47.	Իրականացնել ծախսերի գնահատում և քարոզել հանրային իրազեկման և քարոզչության զարգացման նպատակով հատուկ ֆինանսավորման հատկացում	Խնամքի բոլոր տեսակներին վերաբերող
48.	Իրականացնել ծախսերի գնահատում և քարոզել երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխարգելման և ընտանիքի վերամիավորման ծառայությունների համար հատուկ ֆինանսավորման հատկացում	Երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխում, ընտանիքների վերամիավորում
49.	Իրականացնել ծախսերի գնահատում և խթանել հաշմանդամություն ունեցող երեխաների խնամակալների համար կարճաժամկետ խնամքի ծառայությունների զարգացմանն ուղղված հատուկ ֆինանսավորման հատկացում	Երեխաներին ընտանիքներից առանց անհրաժեշտության բաժանման կանխում
50.	Իրականացնել ծախսերի գնահատում և խթանել խնամատար ընտանիքների ուսուցման և վերապատրաստման նպատակով հատուկ ֆինանսավորման հատկացում	Խնամատարություն
51.	Իրականացնել ծախսերի գնահատում և քարոզել հատուկ ֆինանսավորման հատկացում ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպման ծառայությունները զարգացնելու համար	Ուղեկցվող անկախ ապրելակերպի կազմակերպում
52.	Իրականացնել ծախսերի գնահատում և քարոզել խնամակալության ծառայություններին հատուկ ֆինանսավորման հատկացում	Խնամակալություն
53.	Իրականացնել վերակազմակերպվող հատուկ դպրոցներում գտնվող երեխաների ընտանիքների կարիքների ֆինանսական հաշվարկ: Քարոզել, որ հատկացվեն հատուկ ֆինանսական միջոցներ կանխելու երեխայի վերադարձը շուրջօրյա խնամքի հաստատություն:	Ընտանիքների վերամիավորում Հաստատություններից երեխաների դուրսբերում
54.	Հիմնել մեխանիզմ Աշխատանքի և սոցիալական հարցերի և Կրթության և գիտության նախարարությունների համար, որպեսզի օգտագործեն հաստատությունների բեռնաթափումից գոյացած ֆինանսական միջոցները այն դեպքերի ժամանակ, երբ երեխան/ ընտանիքը հայտնվում է արտակարգ իրավիճակում շուրջօրյա խնամքի հաստատության վերաձևավորումից հետո:	Հաստատություններից երեխաների դուրսբերում

Մասնակցային գնահատման արդյունքում դուրս բերված 54 առաջարկությունները քննարկվեցին ԵՀԹ և հիմնական գործընկերների հետ կազմակերված գործողությունների պլանավորմանը նվիրված աշխատամքային քննարկման ժամանակ, որը տեղի ունեցավ 2018 թվականի ապրիլի 27-ին: Աշխատաժողովի հաշվետվությունն ու առաջարկությունների առաջնահերթությունների վերհանման քայլերն առանձին ներկայացվել է քննարկման մասնակիցներին: Աշխատանքային քննարկման արդյունքում մասնակիցները խմբավորեցին վերը նշված 54 առաջարկությունները, ձևավորելով գործողությունների ութ հիմնական ուղղություններ, որոնք կքննարկվեն շահագրգիռ նախարարությունների, դոնոր գործընկերների և ՔՀԿ-ների հետ՝ իրենց օրակարգերում ներառելու համար:

Նշված 54 առաջարկությունների 8 խումբ միջոցառումները հետևյալն են.

1. Խթանել համակարգի բարեփոխումները համակարգող կառույցի/հանձնաժողովի ձևավորումը, որը կունենա իր ենթահանձնաժողովները մարզերում, ապահովելով այլընտրանքային խնամքի բարեփոխումների բոլոր ոլորտների, բաղադրիչների և միջոլորտային համագործակցության փոխկապակցվածությունը,
2. Վերանայել գործող և նախագծային փուլում գտնվող իրավական ակտերը Առաջնորդում և կառավարում բաղադրիչի ներքո դուրս բերված առաջարկությունների հիման վրա և լրամշակել երեխաների այլընտրանքային խնամքի կազմակերպման, համակարգի ներդրման օրենսդրական դաշտը, արտացոլելով վերհանված բացերը և համապատասխանեցնելով այն ՄԱԿ-ի այլընտրանքային խնամքի կազմակերպման ուղեցույցի պահանջներին: Մասնավորապես, առավել հստակեցնել երեխաների առանց անհրաժեշտության բաժանումը կանխարգելելուն ուղղված ծառայությունների կարգավորումը, խնամակալության և ոչ բարեկամի կողմից խնամքի ֆորմալացումը, կարգավորելու այլընտրանքային խնամքից դուրս եկող երեխաներին մատուցվող ծառայությունների շրջանակը և մշտադիտարկելու ու վերահսկելու այլընտրանքային խնամք ստացող երեխաներին մատուցվող ծառայությունները
3. Վերապատրաստել երեխաների հարցերով զբաղվող դատավորներին երեխայի լավագույն շահի և երեխայի պաշտպանության հարցերի շուրջ
4. Մշակել համապարփակ ձեռնարկ այլընտրանքային խնամքի կազմակերպման և տրամադրման վերաբերյալ, ապահովելով այլընտրանքային խնամքի բոլոր ոլորտներում համապատասխան կադրերի/մասնագետների նույն սկզբունքներով և մոտեցումներով վերապատրաստումները, ծառայությունների որակի ապահովումը,
5. Վերանայել համայնքային սոց աշխատողների և խնամակալության հոգաբարձության հանձնաժողովների/մարմինների պաշտոնի անձնագրերն ու աշխատանքի նկարագրերը՝ հստակեցնելու նրանց դերն ու պարտականությունները երեխաների ընտանիքից առանց անհրաժեշտության բաժանումը կանխարգելելու և ընտանիքների վերամիավորումը համակարգելու, այլընտրանքային խնամք ստացող երեխաներին մշտադիտարկելու գործընթացներում:
6. Կազմակերպել անհրաժեշտ ծառայությունների կարիքի և ֆինանսավորման գնահատում՝ ներքին փորձագետների միջոցով, մասնավորապես համայնքահենք ընտանիքներին աջակցող ծառայությունների ստեղծման և զարգացման համար, ինչը կնպաստի երեխաների առանց անհրաժեշտության ընտանիքից բաժանումը կանխելուն և ընտանիքների վերամիավորմանը, ֆորմալ խնամակալության հաշվառման համակարգի ձևավորում, խնամակալների համար խորհրդատվության ծառայությունների ստեղծում, անկախ ապրելակերպի ծառայությունների զարգացում այլընտրանքային խնամքից դուրս եկող երեխաների համար, ճգմնաժամային, ժամանակավոր խնամքի ծառայությունների ստեղծում, 0-3 տարեկան երեխաների համար այլընտրանքային ընտանեկան տիպի խնամքի ծառայությունների ստեղծում:

7. Մշակել այլընտրանքային խնամքի համակարգի բաղադրիչների մասին հանրային իրազեկման ռազմավարություն, ձևավորելով կայուն գիտակցում, որ երեխայի լավագույն շահը ընտանեկան միջավայրում ապահով խնամք և դաստիարակություն ստանալն է,
8. Բարելավել միջգերատեսչական տեղեկատվության փոխանակումը և SS համակարգերի ներդաշնակեցումը, այլընրանքային խնամքի ծառայությունների համար միասնական ՄԵԳ համակարգի ձևավորումը երեք նախարարությունների համար՝ ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ ԱՆ և ՀՀ ԿԳՆ:

ՀՂՈՒՄՆԵՐ

ՀՀ Կառավարության որոշում. (2010 թ. մարտի 18). թիվ. 269 –Ն Որդեգրման կարգը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1919-ն որոշման մեջ լրացում կատարելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=57119 /

ՀՀ Կառավարության որոշում. (2014 թ. հուլիսի 17). No 743-Ն ՀՀ խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիքներ կազմակերպման (բեռնաթափում) և երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելման ծրագիրը հաստատելու մասին https://www.e-gov.am/gov-decrees/item/24524/

ՀՀ Կառավարության որոշում. (2014թ. նոյեմբերի 13). No. 1273-Ն **ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի n 1694-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին** https://www.e-gov.am/gov-decrees/item/25058/

ՀՀ Կառավարության որոշում. (2014թ դեկտեմբեր 18). No. 1452-Ն **ՀՀ պետական մանկատների շրջանավարտներին պետական աջակցության ծրագիրը հաստատելու և ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի n 158-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու** մասին https://www.e-gov.am/gov-decrees/item/25210/

ՀՀ Կառավարության որոշում. (2015թ. սեպտեմբեր 10). No. 1044-Ն Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին https://www.e-gov.am/gov-decrees/item/26265/

ՀՀ Կառավարության որոշում. (2015 թ. սեպտեմբերի 25). No. 1112 Երեխաների, տարեց եվ (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը եվ պայմանները սահմանելու, տարեց եվ (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին https://www.e-gov.am/gov-decrees/item/26340/

ՀՀ Կառավարության որոշում. (2016 թ. մայիսի 26). No. 551-N կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը եվ չափորոշիչները հաստատելու և ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի n 1112-ն որոշման մեջ փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին https://www.e-gov.am/gov-decrees/item/27280/

ՀՀ Կառավարության արձանագրային որոշում թիվ 9-15. (20162. Մարտի 10). Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգին հավանություն տալու մասին https://www.e-gov.am/protocols/item/614/

ՀՀ Կառավարության արձանագրային որոշում No.18-1. (2016 թ.-ի մայիսի 12). «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի կազմակերպման» հայեցակարգին հավանություն տալու մասին https://www.e-gov.am/protocols/item/631//

ՀՀ Կառավարության արձանագրային որոշում թիվ 36. (2016 թ.-ի սեպտեմբերի 15). «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգի միջոցառումների ծրագրին» հավանություն տալու մասին http://www.mlsa.am/?page_id=1183

ՀՀ Կառավարության արձանագրային որոշում. (2017թ. հուլիսի 13). ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին եվ երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին https://www.e-gov.am/protocols/item/769/

Hommes, T.D. Hope for Himalayan Kids. (2011). *10 Steps forward to Deinstitutionalization: Building Communities to support children's rights*. Retrieved from https://resourcecentre.savethechildren.net/node/4613/pdf/4613.pdf

ՀՀ Օրենք. (1996). Երեխայի իրավունքների մասին No. 59. http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1700&lang=arm

ՀՀ Օրենք. (2002). «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1328&lang=arm

ՀՀ Օրենք. (2014). Սոցիալական աջակցության մասին http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5161

ՀՀ Օրենք. (2018a). ՀՀ Ընտանեկան օրենսգիրք http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=415&Reading=0

ՀՀ Օրենք. (2018b). «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=9313&Reading=0

ՀՀ Ազգային ժողով. (1996-2018թ). ՀՀ Սահմանադրություն http://www.parliament.am/parliament.php?id=constitution&lang=eng

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցրի նախարարի հրաման. (2017թ). թիվ 12-Ա/1 Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին http://www.mlsa.am/?page_id=1183

ՀՀ Վիճակագրական կոմիտե. (2016թ). *Հայաստանի սոցիալակն պատկերը և աղքատությունը* http://www.armstat.am/am/?nid=82&id=1988

ՀՀ Վիճակագրական կոմիտե. (2017թ). *Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016,* http://www.armstat.am/en/?nid=82&id=1958

UNICEF. (2010թ). Դեպի այլընտրանքային խնամքի ծառայություններ Հայաստանում՝ խնամքի հաստատությունների ծախսերը և համայնքային ծառայությունները, http://www.un.am/up/library/Child%20Care%20Services%20in%20RA%20and%20CB%20Services_eng.pdf

United Nations (UN). (2012). ՄԱԿ-ի Երեխաների այլընտրանքային խնամքի մասին 2009 թ. նոյեմբերի 20-ի ուղեցույց https://resourcecentre.savethechildren.net/library/united-nations-guidelines-alternative-care children

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ԵՐԿՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Երկրի հիմնական թիմի համակարգող

